



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԴՈՊԻՆԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

(Կազմված է Համաշխարհային Հակադոպինգային Գործակալության  
2015 թ. Օրենսգրքի հիման վրա)

Երևան 2014

**The Armenian**  
**National Anti-Doping Organization**  
**Anti-Doping Rules**

(Based upon the 2015 Code)

Yerevan  
2014

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Հապավումներ	3
Ներածություն	4
ՀՈՂՎԱԾ 1. Կանոնների կիրառումը	7
ՀՈՂՎԱԾ 2. Հակադրափնդային կանոնների խախտումները	9
ՀՈՂՎԱԾ 3. Դոպինգի օգտագործման ապացույցները	13
ՀՈՂՎԱԾ 4. Արգելված նյութերի ցուցակը	15
ՀՈՂՎԱԾ 5. Դոպինգ ստուգման ընթացակարգը	18
ՀՈՂՎԱԾ 6. Փորձանմուշների լաբորատոր քննությունը	22
ՀՈՂՎԱԾ 7. Լաբորատոր փորձաքննության արդյունքների վերլուծում	23
ՀՈՂՎԱԾ 8. Բողոքարկման ընթացակարգ	33
ՀՈՂՎԱԾ 9. Անհատական արդյունքների ավտոմատ որակազրկում	36
Հոդված 10. Պատժամիջոցներ անհատական մարզածներում	37
ՀՈՂՎԱԾ 11. Կանոնների խախտման հետևանքները թիմային մարզածների համար	59
ՀՈՂՎԱԾ 12. Պատժամիջոցներ մարզական կազմակերպությունների վերաբերյալ	59
ՀՈՂՎԱԾ 13. Բողոքարկում	60
ՀՈՂՎԱԾ 14. Հաշվետվություններ	64
ՀՈՂՎԱԾ 15. Հրապարակային բացահայտում կամ հրապարակային զեկույց	65
ՀՈՂՎԱԾ 16. Փոխադարձ ճանաչում	66
ՀՈՂՎԱԾ 17. Վաղեմության ժամկետ	66
ՀՈՂՎԱԾ 18. Ուղղումներ և բացատրություններ	67
ՀՈՂՎԱԾ 19. Տեղեկատվություն և ծանուցում	67
ՀՈՂՎԱԾ 20. Ուժի մեջ մտնելը, օրինականությունը և պետական օրենքները	68
Պարզաբանումներ	70

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն Հակադոպինգային Կանոնները (այսուհետ՝ Կանոններ) մշակված և կազմված են համաձայն 2015թ Համաշխարային Հակադոպինգային Օրենսգրքի, և և սահմանում են Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության <<Սպորտային Բժշկության և Հակադոպինգային ծառայության Հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կենտրոն) պատասխանատվությունը՝ պայքարելու Հայաստանի Հանրապետությունում դոպինգի կիրառման դեմ և իսպառ վերացնելու դոպինգի օգտագործումը Հայաստանում:

Սույն կանոնները յուրահատուկ մարզական կանոններ են և նպատակաուղղված են պահպանել հակադոպինգային սկզբունքները Համաշխարային Հակադոպինգային Օրենսգրքի հետ համաձայնեցված և հարմոնիզացված ձևով: ՀՀ ցանկացած դատարան, արբիտրաժային տրիբունալներ և այլ իրավասու մարմիններ պետք է տեղյակ լինեն, ընդունեն և հարգեն սույն կանոնները:

Համաձայն այս կանոնների՝ Կենտրոնը հանդիսանում է իրավաբանական անձ, որն ունի իրավունք իրականացնել դոպինգ ստուգում ազգային և միջազգային մակարդակի վրա ՀՀ տարածքում՝ ընգրկելով նմուշների հավաքման նախագծումը, նմուշների հավաքումը, նմուշների հետ կատարվող գործողությունները, նրանց տեղափոխումը լաբորատորիա, փորձաքննության արդյունքների վերլուծությունը, լսումների անցկացումը:

Հակադոպինգային ծրագրերը փորձում են պահպանել այն ինչն արժեքավոր է սպորտում: Դա վերաբերում է սպորտի ոգուն, որը օլիմպիզմի և արդարացի խաղի սկզբունքն է: Սպորտի ոգին մարդու հոգու, մարմնի և մտքի միասնությունն է, և բնութագրվում է հետևյալ արժեքներով՝

- էթիկա, արդարացի խաղ և ազնվություն
- առողջություն
- գերազանցություն արդյունքներում
- անհատականության զարգացում և կրթություն

- ուրախություն և ժամանց
- թիմային աշխատանք
- նվիրվածություն
- հարգանք իր և մյուս մասնակիցների նկատմամբ
- քաջություն
- միասնական ոգի և համերաշխություն

Դրայինգը սկզբունքորեն հակասում է սպորտի ոգուն:

### **ՀՀ Ազգային Հակադոպինգային ծրագիր**

Կենտրոնը կազմավորվել է ՀՀ Կառավարության որոշմամբ (2005թ 24 մարտի/Ն. 441/ն): Գործելով որպես անկախ հակադոպինգային կազմակերպություն Կենտրոնը ունի իրավունք և պարտավորված է

Նախագծել, կոորդինացնել, իրականացնել, հսկել և կատարելագործել դոպինգ ստուգման գործունեությունը

Համագործակցել ազգային այլ կառույցների և այլ Հակադոպինգային կազմակերպությունների հետ

Աջակցել այլ Ազգային Հակադոպինգային կազմակերպությունների կողմից ՀՀ տարածքում իրականացվող դոպինգ ստուգումներին

Նախագծել, իրականացնել և վերահսկել տեղեկատվական, կրթական և կանխարգելիչ ծրագրերի կատարումը.

Սատարել հակադոպինգային բնագավառում իրականացվող հետազոտություններին

- Կանխել հակադոպինգային կանոնների հնարավոր խախտումները՝ ընդգրկելով հետաքննությունները, թե արդյոք մարզիկին աջակցող անձը կամ այլ անձ մասնակցել է հակադոպինգային կանոնների խախտմանը սլյալ դեպքում
- Իրականացնել հետազոտություն ընդգրկելով քրեական հետաքննությունները հակադոպինգային կանոնների խախտմանը անչապասահների կողմից, ինչպես նաև մարզիկին աջակցող անձի

կողմից, որը օգնել է մեկից ավել մարզիկի խախտել հակադոպինգային կանոնները

- Համագործակցել Համաշխարհային Հակադոպինգային Գործակալության (այսուհետ՝ ՀՀԳ) իրակացնել հետաքննությունները համաձայն Օրենսգրքի 20.7.10 կետի
- Տրամադրել տեղեկատվություն մարզիկին կան մարզիկին աջակցող անձին ֆինանսական օգնություն հատկացնող համապատասխան մարմիններին հակադոպինգային կանոնները խախտած մարզիկին կամ մարզիկին աջակցող անձին ֆինանսավորումը կրճատելու կամ դադարեցնելու նպատակով:

*[Մեկնաբանություն: Հասկանալի է, որ ազգային հակադոպինգային կազմակերպությունը իր գործունեության ու որոշումների մեջ պետք է լինի անկախ մարզական կազմակերպություններից: Անկախության սկզբունքը ամրագրված է հակադոպինգային ծրագրերում և ինտեգրված է հակադոպինգային գործունեությունում.]*

## **ՀՈԴՎԱԾ 1 ՀԱԿԱԴՈՊԻՆԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

1.1 Սույն Հակադոպինգային Կանոնները պետք է կիրառվեն Կենտրոնի կողմից

### **1.2 Կանոնների կիրառումը Ազգային Մարզաձևերի Ֆեդերացիաների կողմից**

1.2.1 Հաշվի առնելով այն, որ Ազգային Մարզաձևերի Ֆեդերացիաները(այսուհետ՝ ազգային Ֆեդերացիաներ) մշտապես ստանում են ֆինանսական աջակցություն ՀՀ Կառավարությունից և/կամ Հայաստանի Օլիմպիական Կոմիտեից (այսուհետ՝ ՀԱՕԿ) Ֆեդերացիաները պետք է աջակցեն ՀՀ Ազգային Հակադոպինգային ծրագրի իրականացմանը և կիրառեն Սույն Հակադոպինգային Կանոնները իրենց Ֆեդերացիայի հակադոպինգային Կանոնների հետ համագործակցված անմիջական կամ հղումներով պետական օրենքների և սահմանադրության այն կետերին, որոնք վերաբերում են սպորտին, որպես այդ պետական օրենքների մաս՝ պաշտպանելով իրենց Ֆեդերացիայի անդամների իրավունքները:

*[Մեկնաբանություն 1.2.1 կետի վերաբերյալ: Կենտրոնը սերտորեն համագործակցելով ՀՀ Կառավարության և ՀԱՕԿ-ի հետ պետք է պահանջի, որ սույն հակադոպինգային Կանոնների ճանաչումը և կիրառումը լինի նախապայման ՀՀ Կառավարությունից և ՀԱՕԿ-ից ազգային ֆեդերացիայների ցանկացած ֆինանսական կամ այլ աջակցություն ստանալու համար:*

**1.2.2** Ընդունելով սույն Կանոնները, ներառյալ է Կանոններով կառավարվող փաստաթղթերը ազգային ֆեդերացիաները ճանաչում են Կենտրոնի դերը ու պատասխանատվությունը ազգային հակադոպինգային ծրագրի իրականացման մեջ և սույն Կանոնների կիրառման մեջ (ներառյալ մրցումային և արտամրցումային դոպինգ ստուգման իրականացումը) 1.3 կետում թվարկված բոլոր անձանց նկատմամբ, որոնք գտնվում են ազգային ֆեդերացիայների իրավասության տակ և պետք է համագործակցեն և աջակցեն Կենտրոնին: Նրանք պետք է նաև ճանաչեն ու ենթարկվեն Կենտրոնի որոշումներին, այդ թվում այն որոշումներին, որոնք կայացվում են Կանոնների խախտման վերաբերյալ իրականացվող լսումների ժամանակ:

### **1.3 Կիրառություն անձի նկատմամբ**

1.3.1 Սույն Հակադոպինգային Կանոնները կիրառվում բոլոր այն անձանց (ներառյալ անչափահասներին) նկատմամբ, որոնք՝

1.3.1.1 Հանդիսանում են Հայաստանի ազգային Ֆեդերացիաների անդամ, անկախ նրանից, թե որտեղ են նրանք գտնվում կամ ապրում:

1.3.1.2 Մարզիկները կամ մարզիկին աջակցող անձնակազմը, որոնք ունեն պայմանագրեր Հանդիսանում են Հայաստանի ազգային Ֆեդերացիաների կամ նրանց իրավասության տակ գտնվող ակումբների, թիմերի, ասոցիացիաների, լիգաների անդամներ:

1.3.1.3 Մասնակցում են այն մարզական միջոցառումներին, որոնք իրականացվում են Հայաստանում և կազմակերպվում են Հայաստանի ազգային Մարզաձևերի Ֆեդերացիաների կամ նրանց իրավասության տակ գտնվող ակումբների, թիմերի, ասոցիացիաների, լիգաների կողմից:

1.3.1.3.4 Մասնակցում են Ազգային մարզական իրադարձություններին:

1.3.1.3.5 Բոլոր մրցումների մասնակիցները, ներառյալ անչափահասները ընդունում, պահպանում և ենթարկվում են սույն Հակադոպինգային Կանոններին:

*[Մեկնաբանություն 1.3.1 կետի վերաբերյալ: Նշված կազմակերպությունները պետք է ներառված ազգային հակադոպինգային ծրագիրում:]*

1.3.2 Այս հակադոպինգային Կանոնները համաձայն Օրենսգրքի տալիս Կենտրոնին իրավասություն կիրառել Կանոնները նաև այլ անձանց նկատմամբ, ովքեր չլինելով Հայաստանի քաղաքացի մարզվում կամ մրցում են Հայաստանում, կամ այլ հանգամանքներով գտնվում են Հայաստանում;

1.3.3 Այն անձինք, որոնք ըստ Կանոնների 1.3.1 կամ 1.3.2 կետի համարվում են ընդգրկված Կանոնների մեջ և պարտավորված են ընդունել Կենտրոնի իրավասությունը Կանոնների կիրառման ոլորտում և որոնք համաձայն 8 – 13 հոդվածների կարող են բողոքարկել լսումների ընցացքում կայացած որոշումները;

#### **1.4 Ազգային մակարդակի մարզիկներ են՝**

1.4.1. Բոլոր մարզիկները, որոնք համապատասխանում են Կանոնների 1.3 կետում նշված պահանջներին, հակադոպինգային կանոնների տեսանկյունից համարվում են Ազգային մակարդակի մարզիկներ:

1.4.1.1 Մարզիկներ, որոնք չեն հանդիսանում միջազգային մակարդակի մարզիկ, և ընդգրկված են Կենտրոնի նպատակային դոպինգ ստուգման ցանկում:

1.4.1.2 Մարզիկներ, որոնք մասնակցում են ազգային մրցումներին կամ միջազգային մրցումներին ՀՀ հավաքական թիմերի կազմում:

1.4.1.3 Մարզիկը, որը ունի լիցենզիա տրված ՀՀ ազգային որևէ ֆեդերացիայի կողմից, բայց եթե որևէ մարզիկ դասակարգվում է ըստ իրենց միջազգային ֆեդերացիայի, որպես միջազգային կարգի մարզիկ, ապա նա, հակադոպինգային կանոնների տեսանկյունից, համարվում է միջազգային մակարդակի մարզիկ:

**1.4.2** Սույն Կանոնները կիրառվում են բոլոր այն անձանց նկատմամբ, որոնք համապատասխանում են Կանոնների 1.3 կետում նշված պահանջներին. Սակայն, համաձայն Թեստավորման և հետաքննության միջազգային



ստանդարտի կետ 4.3-ի Կենտրոնի կողմից իրականացվող դրայինգ ստուգման հիմնական թիրախ հանդիսանում են Կենտրոնի նպատակային դրայինգ ստուգման ցանկում ընդգրկված Ազգային մակարդակի առաջատար մարզիկները:

## **ՀՈՐՎԱԾ 2. ՀԱԿԱՂՈՊԻՆԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ**

Օգտագործել դրայինգ նշանակում է խախտել կետ 2.1 մինչև 2.10 նշված կանոններից մեկը կամ մի քանիսը:

Հոդվածի 2-ում ճշտվում և հստակեցվում են բոլոր այն հանգամանքները, որոնք հանդիսանում են հակադրայինգային կանոնների խախտումներ: Լսումներ դրայինգային դեպքերում կընթանա այն փաստի հիման վրա, որ մեկ կամ ավելի կանոնների խախտվում է տեղի ունեցել:

Մարզիկների կամ այլ անձանց պարտավորությունն է տեղեկացված լինել Արգելված նյութերի եւ մեթոդների ցուցակի մասին և ինչ իրենից ներկայացնում կանոնների խախտումը:

Հակադրայինգային կանոնների խախտում են`

### **2.1 Արգելված նյութերի, նրանց մեթաբոլիտների կամ մարկերների առկայությունը մարզիկի փորձանմուշում:**

**2.1.1** Յուրաքանչյուր մարզիկ կրում է անձնական պատասխանատվություն, եթե նրա օրգանիզմ է ներմուծվել արգելված նյութ կամ եթե նրա փորձանմուշում հայտնաբերվում են Արգելված նյութեր, նրանց մեթաբոլիտներ կամ մարկերներ: Հետևաբար` անկախ նրանից, թե արգելված նյութի օգտագործումը տեղի է ունեցել գիտակցաբար, սխալի կամ անփութության պատճառով, եթե մարզիկի փորձանմուշում հայտնաբերվում են արգելված նյութեր, դա համարվում է հակադրայինգային կանոնների խախտում համաձայն 2.1 կետի:

*[Մեկնաբանություն 2.1. կետի վերաբերյալ: Եթե հակադրայինգային կանոնների խախտումը կատարվել է համաձայն սույն հոդվածի, մարզիկի մեղքի չափը չունի որևէ նշանակություն: ՄԱԴ-ի մի քանի որոշումներում այս կանոնը ստացել է «խիստ պատասխանատվություն» անվանումը: Մարզիկի մեղքը սույն կանոնների խախտման ժամանակ հաշվի է առնվում համաձայն 10-րդ հոդվածի: Այս սկզբունքը հետևողականորեն օգտագործում է ՄԱԴ-ը:]*

**2.1.2** Հակադրայինգային Կանոնների խախտումներ հանդիսանում են կետ 2.1.-ում բերված հետևյալ փաստերը` արգելված նյութերի, նրանց մեթաբոլիտների կամ մարկերների առկայությունը մարզիկի «Ա» նմուշում, եթե մարզիկը հրաժարվում է «Բ» նմուշի փորձաքննությունից, կամ եթե «Բ» նմուշի փորձաքննության արդյունքները հաստատում են «Ա» նմուշի փորձաքննության արդյունքները:

*[Մեկնաբանություն կետ 2.1.2 վերաբերյալ: Հակադրայինգային Կազմակերպությունը կարող է իրականացնել «Բ» նմուշի փորձաքննությունը նույնիսկ այն դեպքում, եթե մարզիկը հրաժարվում է «Բ» նմուշի փորձաքննությունից:]*

**2.1.3** Հակադրայինգային Կանոնների խախտում է հանդիսանում ցանկացած արգելված նյութերի, նրանց մեթաբոլիտների կամ մարկերների առկայությունը մարզիկի փորձանմուշում, բացառությամբ այն նյութերի, որոնց համար սահմանված է ստույգ քանակական սահման:

**2.1.4** Որպես 2.1 կետում նշված դեպքերի բացառություն, որոշ ներածին նյութերի համար Արգելված նյութերի ցուցակը կամ Միջազգային ստանդարտները կարող են սահմանել հատուկ չափանիշներ:

## **2.2 Արգելված նյութերի կամ մեթոդների օգտագործումը կամ օգտագործման փորձը**

*[Մեկնաբանություն 2.2 կետի վերաբերյալ: Ինչպես նշված է հոդված 3-ում Արգելված նյութերի կամ մեթոդների օգտագործումը կամ օգտագործման փորձը հնարավոր է որոշել միայն հուսալի անալիտիկ մեթոդներով: Ի տարբերություն 2.1. կետում նշված կանոնների Արգելված նյութերի կամ մեթոդների օգտագործումը կամ օգտագործման փորձը կարող են բացահայտվել նաև այլ հուսալի եղանակներով՝ օրինակ, վկաների ցուցմունքների, փաստագրական ապացույցների և վկայությունների հիման վրա, այդ թվում ընդգրկելով տվյալներ, որոնք հավաքագրված են մարզիկի կենսաբանական անձնագրի համար կամ այլ վերլուծական տեղեկատվություն, որը բավարարում արգելված նյութերի օգտագործման առկայությունը որոշելու ըստ կետ 2.1*

*Արգելված նյութերի կամ մեթոդների օգտագործումը կարող է հաստատվել հավաստի փորձաքննության տվյալների հիման վրա, որոնք ստացվել են «Ա» փորձանմուշի քննության ժամանակ (եթե նույնիսկ «Բ» նմուշի փորձաքննության տվյալները բացակայում են) կամ միայն «Բ» նմուշի փորձաքննության օգնությամբ, այն դեպքում, եթե Հակադրայինգային կազմակերպությունը ներկայացնում է բավարար փաստեր այլ փորձանմուշի բացակայության մասին:]*

**2.2.1.** Յուրաքանչյուր մարզիկի պարտականություն է չթույլատրել Արգելված նյութերի ներթափանցումը սեփական օրգանիզմ: Հետևաբար չկա անհարժեշտություն ապացուցել, որ մարզիկը խախտել է հակադրայինգային կանոնները օգտագործելով Արգելված նյութեր կամ մեթոդներ, եթե մարզիկը օգտագործել է նրանց անգիտակցաբար, սխալմամբ կամ անփութության պատճառով:

**2.2.2** Էական չէ, թե Արգելված նյութի կամ մեթոդի օգտագործումը բերել է

հաջողության, թե ոչ: Հակադրապիստոսի կանոնների խախտման փաստի հաստատման համար բավական է այն, որ տեղի է ունեցել Արգելված նյութի կամ մեթոդի օգտագործում կամ կատարվել է օգտագործման փորձ:

*[Մեկնաբանություն 2.2.2 կետի վերաբերյալ: Արգելված նյութի օգտագործման փորձի մեջ մեղադրանքը պահանջում է ապացույց: Այն փաստը, որ կա միտում Արգելված նյութի օգտագործման, պահանջում է ապացույց, չի հանում խիստ պատասխանատվության սկզբունքը, որը նշված է 2.1 կետում և 2.2 կետում և չի վկայում խախտման փաստի բացակայության մասին: Մարզիկի կողմից Արգելված նյութի օգտագործումը համարվում է հակադրապիստոսի կանոնների խախտում, բացի այն դեպքից, երբ տվյալ նյութը չի համարվում արգելված արտամրցումային շրջանում և նրա օգտագործումը տեղի է ունեցել այդ ժամանակ: (Սակայն Արգելված նյութի կամ մեթոդիստների կամ մարկերների առկայությունը փորձանմուշում, որը հավաքված է մրցումների ժամանակ, պետք է դիտարկվի որպես 2.1 կետի խախտում, անկախ նրանից, թե երբ է այդ նյութը օգտագործվել):]*

### **2.3 Նմուշառումից խուսափելը կամ հրաժարվելը**

2.3 Համաձայն սույն Կանոնների պաշտոնական Ծանուցումից հետո մարզիկի կողմից դրախնդ ստուգումից անհարգի հրաժարվելը, նմուշը չտրամադրելը կամ ցանկացած այլ շեղում նմուշառման ընթացակարգից համարվում է հակադրապիստոսի կանոնների խախտում:

*[Մեկնաբանություն հոդված 2.3 վերաբերյալ: Տվյալ հոդվածը լայնացնում է գոյություն ունեցող Օրենսգիրքը հետևյալ բառերով՝ Ցանկացած շեղում նմուշառման ընթացակարգից արգելված է: Այսպես օրինակ՝ հակադրապիստոսի կանոնների խախտում է համարվում, երբ մարզիկը թաքնվել է դրախնդ ստուգումը իրականացնող պաշտոնական անձից, նպատակ ունենալով խուսափելու նմուշառումից կամ ծանուցագիրը ստանալուց: Խախտումը կապված հրաժարվելու կամ փորձանմուշը չտրամադրելու հետ կարող է հիմնվել կանխամտածված կամ անփույթ գործողությունների վրա, իսկ խուսափումը դիտվում է որպես մարզիկի կողմից կանխամտածված քայլ: ]*

### **2.4 Գտնվելու վայրի մասին տեղեկատվություն չտրամադրելը**

Ըստ մարզիկի հասանելիության վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային ստանդարտի պահանջների խախտումը մարզիկի կողմից 12 ամսվա ընթացքում գտնվելու վայրի մասին տեղեկատվության չտրամադրելը և/կամ երեք բացթողած դրախնդ ստուգումները դիտարկվում է որպես հակադրապիստոսի կանոնների խախտում:

### **2.5 Դրախնդ ստուգման ցանկացած փուլում կեղծում կամ կեղծման փորձ**

Տվյալ հոդվածը արգելում է այնպիսի գործողություններ, որոնք խոչընդոտում են դոպինգ ստուգման անցկացմանը, բայց ընդգրկված չեն Արգելված մեթոդների ցուցակում, օրինակ այս հոդվածի տակ ընկնում է նույնականացման համարի փոխումը, կեղծ տեղեկատվության տրամադրումը, հետազոտման ժամանակ փորձանմուշի կոտրումը, դոպինգի սպայի աշխատանքի խոչընդոտելը:

*[Մեկնաբանություն 2.5 կետի վերաբերյալ: Օրինակ, այս հոդվածը արգելում է նույնականացման համարի փոխումը, կեղծ տեղեկատվության տրամադրումը, հետազոտման ժամանակ «Բ» փորձանմուշի կոտրումը, կամ ավելացնել նմուշի մեջ այլ նյութեր: Վիրավորական վարքագիծ դեպի Դոպինգի պաշտոնյայի կամ ներգրավված Դոպինգ ստուգման գործընթացի մեջ ներգրավված այլ անձի նկատմամբ, որը չի հանդիսանում Կեղծում պետք է քննարկվի միայն մարզական կարգապահական կազմակերպությունների կողմից: ]*

## **2.6 Տիրապետում Արգելված նյութերով կամ մեթոդներով:**

**2.6.1** Մարզիկի կողմից մրցումային կամ արտամրցումային շրջանում Արգելված նյութերի կամ մեթոդների տիրապետումը, այն դեպքում, երբ մարզիկը չի ապացուցել, որ դա բացատրվում է բուժման նպատակով արգելված դեղերի օգտագործման թույլտվության (այսուհետ՝ ԲՆԱԴՕԹ) առկայությամբ, որը տրվել է մարզիկին 4.4 կետի համաձայն կամ ունի այլ ընդունելի բացատրություն;

**2.6.2** Մարզիկին սպասարկող անձնակազմի կողմից մրցումային կամ արտամրցումային շրջանում Արգելված նյութերի կամ մեթոդների տիրապետումը, եթե դա առնչություն ունի մարզիկի մարզումներին կամ մրցումներին մասնակցության հետ և չի ապացուցել, որ դա բացատրվում է ԲՆԱԴՕԹ-ի առկայությամբ, որը տրվել է մարզիկին 4.4 կետի համաձայն կամ ունի այլ ընդունելի բացատրություն;

*[Մեկնաբանություն 2.6.1 և 2.6.2 կետի վերաբերյալ: Արդարացում չի կարող հանդիսանալ Արգելված նյութերի տիրապետումը, առքը և վաճառքը, հետագայում ընկերոջը կամ բարեկամին փոխանցելու նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ դա արվել է արդարացված բժշկական պայմաններում, օրինակ՝ անձի մոտ կա ինսուլինի գնման դեղատոմս շաքարախտով հիվանդ երեխայի համար: ]*

*[Մեկնաբանություն 2.6.2 կետի վերաբերյալ: Հարգելի կարող է համարվել, երբ թիմի բժիշկը ունի արգելված նյութեր սուր և անհետաձգելի դեպքերում օգտագործելու համար: ]*

**2.7** Արգելված նյութեր կամ մեթոդների տարածում կամ տարածման փորձ:

**2.8** Օգտագործում կամ օգտագործման փորձ մարզիկի կողմից:

Մրցումային կամ արտամրցումային շրջանում մարզիկին արգելված նյութի կամ մեթոդի նշանակումը կամ նշանակման փորձը, ինչպես նաև արգելված նյութերի օգտագործելու ժամանակ ցուցաբերած օգնությունը, միջնորդությունը, աջակցումը, արգելված նյութի օգտագործելու հրահրումը, դրդումը, օգտագործելու փաստի թաքցնումը կամ մասնակցության այլ տեսակ, համարվում է կանոնների խախտում կամ խախտման փորձ:

## **2.9 Մասնակցություն**

Աջակցությունը, խրախուսումը, օժանդակումը, դրդումը, դավադրությունը, քողարկումը կամ որևէ այլ տեսակի կանխամտածված համագործակցությունը՝ ներառյալ հակադոպինգային կանոնների խախտումը կամ կանոնների խախտման փորձը 10.12.1 կետում նշված այլ անձի կողմից:

## **2.10 Արգելված Համագործակցություն**

Հակադոպինգային կազմակերպության իրավասության տակ գտնվող մարզիկի կամ այլ անձի համագործակցությունը դեղագործական կազմակերպությունների և մարզիկին աջակցող անձնակազմից ցանկացած անձի հետ, այն դեպքում՝

2.10.1 Եթե մարզիկը գտնվում է որակագրկման կարգավիճակում կամ

2.10.2 Եթե մարզիկը հանդիսանում է անձ, որը չի գտնվում հակադոպինգային կազմակերպության իրավասության տակ, չի որակագրկվել կանոնները խախտելու համար, որակագրկումը իրականացվել է քրեական կամ կարգապահական հետաքննության ընթացքում, ճանաչվել է մեղավոր այն գործողություններում, որոնք համարվում են Կանոնների խախտում: Այդ անձի որակագրկման ժամկետը պետք է կազմի առավելագույնը վեց տարի քրեական կամ կարգապահական պատժամիջոցի ընդունման ամսաթվից կամ

**2.10.3** Եթե նա գործում է 2.10.1 կամ 2.10.2 կետերում նկարագրված գործակալի կամ միջնորդի կարգավիճակում

Սույն կետը կիրառելու համար մարզիկը կամ այլ անձը պետք է տեղեկացված լինեն Հակադոպինգային կազմակերպության կողմից, որի իրավասության տակ նրանք գտնվում են՝ Արգելված Համագործակցության

հնարավոր հետևանքների մասին, ինչպես նաև այն մասին, որ նրանք պետք է խուսափեն այդպիսի Համագործակցությունից:

Հակադրապիստոսի կազմակերպությունը պետք է տեղեկացնի մազիկին աջակցող անձնակազմին, որ նրանք կարող են տասնհինգ օրվա ընթացքում դիմել Հակադրապիստոսի կազմակերպությանը և բացատրել, թե ինչու 2.10.1 և 2.10.2 կետերում բերված չափանիշները չպետք է կիրառվեն նրանց նկատմամբ (չնայած նրան, որ հոդված 17-ի դրույթները կիրառվում են նույնիսկ այն դեպքերում, երբ անձնակազմի վարքը, որը հանգեցրել է որակազրկման նախատեսված է 20.7 կետով),

Այն փաստի ապացույցը, որ մարզիկին աջակցող անձնակազմի հետ համագործակցությունը, որը նկարագրված է 2.10.1, 2.10.2, կամ 2.10 կետերում հանդիսանում մասնագիտական կամ սպորտի հետ կապված համագործակցություն պետք է իրականացվի մարզիկի կամ նրա ներկայակցուցչի կողմից:

Հակադրապիստոսի կազմակերպությունները, որոնք տիրապետում են 2.10.1, 2.10.2, կամ 2.10 կետերում նկարագրված չափանիշներին համապատասխանող տեղեկատվությանը, պետք է անհրաժեշտության դեպքում տրամադրեն այն ՀՀԳ-ին;

*[Մեկնաբանություն 2.10 կետի վերաբերյալ: Մարզիկները չպետք է աշխատեն այն մարզիչների, բժիշկների կամ այլ անձնակազմի հետ, ովքեր գտնվում են որակազրկման կարգավիճակում կամ ովքեր ճանաչված են մեղավոր դրախնդին վերաբերող քրեական գործերում: Արգելված Համագործակցության օրինակներ են որակազրկված անձանցից մարզումների, սնվելու, բժշկական ապահովման, բուժման, դեղատոմսերի, կենսաքիմիական անալիզների բնույթի խորհուրդներ ստանալը կամ որակազրկված անձնակազմին թույլատրելը գործել որպես մարզիկի գործակալ կամ ներկայացուցիչ:]*

## ՀՈԴՎԱԾ 3. ԴՈՊԻՆԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ

### 3.1 Դոպինգի օգտագործման ապացույցների չափանիշները

Կենտրոնից պահանջվում է ապացուցել, որ տեղի է ունեցել կանոնների խախտում: Ապացույցի չափանիշն է Կենտրոնի կողմից կանոնների խախտման հայտնաբերումը, լսումներ իրականացնող փորձագետներին պատշաճ մակարդակով տեղեկատվության տրամադրումը, ի գիտություն ընդունելով կատարված ենթադրությունների կարևորության ապացույցը: Այդ չափանիշը բոլոր դեպքերում հանդիսանում է ավելի մեծակշիռ ապացույց է, քան ենթադրությունների կարևորությունը:

*[Մեկնաբանություն 3.1 կետի վերաբերյալ: Ապացույցի տվյալ չափանիշը, որը ընդունվում է Կենտրոնի կողմից, կարելի է համեմատել աշխարհի շատ երկրների կողմից ընդունված պրոֆեսիոնալ խախտումների դիտարկվող դեպքերի հետ:]*

### 3.2 Կանոնների խախտման վերաբերյալ փաստերը և դրանց ապացուցելու եղանակները

Կանոնների խախտման վերաբերյալ փաստերը կարող են ապացուցվել բոլոր հուսալի եղանակներով, ներառյալ խոստովանությունը: Դոպինգ ստուգման ոլորտում կիրառվում են հետևյալ ապացույցները՝

*[Մեկնաբանություն 3.2 կետի վերաբերյալ: Օրինակ՝ Կենտրոնը կարող է հայտնաբերել Կանոնների խախտում համաձայն 2.2 կետի, հիմնվելով մարզիկի ինքնախոստովանության, խոստովանության հիման վրա, վստահության արժանի երրորդ անձի ցուցմունքի հիման վրա, հավաստի փաստագրական տվյալների հիման վրա, «Ա» և «Բ» նմուշների վստահելի լաբորատոր արդյունքների, կամ հիմնվելով եզրակացությունների վրա, որոնք արված են մարզիկի մեզի և արյան նմուշների հետազոտման վրա, այնպիսին ինչպիսին են մարզիկի կենսաբանական անձնագրի տվյալները փորձաքննությունների հիման վրա:]*

**3.2.1** Անալիտիկ մեթոդները և սահմանային ցուցանիշները, որոնք հաստատված են ՀՀԳ-ի կողմից համապատասխան գիտական ընկերությունների հետ խորհրդատվատությունից հետո համարվում են գիտականորեն հիմնավորված: Մարզիկը կամ այլ անձ, որը ցանկանում է վիճարկել այդ հիմնավորումները, պետք է սկզբից տեղեկացնեն ՀՀԳ-ին իրենց նպատակների մասին: ՄԱԴ-ը կարող է սեփական նախաձեռնությամբ տեղեկացնի ՀՀԳ-ին այդպիսի

գործողությունների վերաբերյալ; ՀՀԳ-ն խնդրանքով ՄԱԴ-ի դատավորները կարող են ներգրավել համապատասխան գիտական էքսպերտի ներկայացված վիճարկումներին գնահատական տալու համար: Տեղեկատվությունը և վիճարկման հետ կապված փաստաթղթերը ՄԱԴ-ից ստանալու պահից տաս օրվա ընթացքում ՀՀԳ-ն կարող է մասնակցել դեպքի քննարկմանը որպես էքսպերտ (amicus curiae) կամ այլ կարգավիճակում:

**3.2.2** ՀՀԳ-ի կողմից հավատարմագրված լաբորատորիաները կամ այլ լաբորատորիաներ, որոնք ճանաչված են ՀՀԳ-ի կողմից պարտավոր են իրականացնել նմուշների հետազոտումը և պահպանումը ըստ Լաբորատորիաների Միջազգային ստանդարտի ընթացակարգերի: Մարզիկը, կամ այլ անձը կարող է չընդունել ստացված արդյունքները, եթե առկա են շեղումներ Լաբորատորիաների Միջազգային ստանդարտից: Եթե մարզիկը կամ այլ անձ կարող է ապացուցել, որ տեղի են ունեցել շեղումներ Լաբորատորիաների Միջազգային ստանդարտից, որոնք ազդել են վերջնական արդյունքների վրա, ապա Կենտրոնը պետք է փորձի հաստատել, որ տվյալ շեղումները չեն հանդիսացել պատճառ՝ փորձաքննության անբարենպաստ արդյունք ստանալու համար:

*[Մեկնաբանություն 3.2.2 կետի վերաբերյալ: Մարզիկը կամ այլ անձը պետք է ապացուցի հավանականությունների բալանսի հիման վրա, որ Միջազգային ստանդարտից շեղումը բերել է փորձաքննության անբարենպաստ արդյունքի: Եթե Մարզիկը կամ այլ անձ ներկայացնում է այդպիսի ապացույց, ապա արդարանալու հերթը փոխանցվում է Կենտրոնին: ]*

3.2.2 Ցանկացած Միջազգային ստանդարտից կամ հակադրային գային մեթոդից շեղումը, որը չի հանգեցրել փորձաքննության անբարենպաստ արդյունքի կամ կանոնների խախտման չի կարող չեղյալ համարել զրոյացնում տվյալ արդյունքը: Եթե մարզիկը կամ այլ անձը ապացուցում է, որ առկա են շեղումները մեկ ուրիշ միջազգային ստանդարտից կամ Հակադրային գային կանոններից, ապա Կենտրոնը պետք է փորձի հաստատել, որ տվյալ շեղումները չեն հանդիսացել պատճառ՝ փորձաքննության անբարենպաստ արդյունք ստանալու համար:

**3.2.4** Դատարանի որոշումը կամ իրավասու կարգապահական տրիբունալի կողմից հաստատված փաստերը, որոնց նկատմամբ չի կատարվել բողոքարկում, համարվում են անժխտելի փաստ մարզիկի կամ այլ անձի դեմ, որը կապ ունի տվյալ փաստերի հետ, եթե միայն մարզիկը չապացուցի, որ տվյալ որոշումը չի խախտել արդարադատության սկզբունքները:

**3.2.5** Լսումներն իրականացնող խումբը հակադրային գային կանոնների խախտման լսումների ժամանակ կարող է վճիռ կայացնել այն մասին, որ մարզիկը խախտել է կանոնները, քանի որ հրաժարվել է ներկայանալ լսումներին, նախապես տեղյակ լինելով, որ պետք է պատասխանել խմբի



անդամների կամ Կենտրոնի որոշ հարցերի՝ կանոնների խախտման վերաբերյալ:

## **ՀՈՂՎԱԾ 4. ԱՐԳԵԼՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ**

### **4.1 Արգելված նյութերի ցուցակի ներառումը Կանոնների մեջ**

Սույն Հակադոպինգային կանոնները ներառում են Արգելված նյութերի Ցուցակը, որը հրատարակվում և վերանայվում է ՀՀԳ-ի կողմից համաձայն Օրենսգրքի 4.1 բաժնի:

*[Մեկնաբանություն 4.1 կետի վերաբերյալ: Համաձայն Օրենսգրքի Կենտրոնը հրատարակում է համապատասխան Արգելված նյութերի Ցուցակը հայերեն լեզվով, որը հանդիսանում է ՀՀԳ-ի Արգելված նյութերի Ցուցակի պատճենը և հասանելի է Կենտրոնի կայքում [www.armnado.am.hsuugleni/](http://www.armnado.am.hsuugleni/)]*

### **4.2. Արգելված նյութերը և արգելված մեթոդները ըստ Արգելված նյութերի Ցուցակի**

#### **4.2.1 Արգելված նյութերը և արգելված մեթոդները**

Արգելված նյութերի և արգելված մեթոդների ցուցակը ՀՀ-ում ուժի մեջ է մտնում ՀՀԳ-ի կողմից հրատարակվելուց երեք ամիս հետո և առանց որևէ փոփոխությունների ընդունվում է Կենտրոնի կողմից: Բոլոր Մարզիկները և այլ անձինք պարտավոր են տեղեկացված լինել Արգելված ցուցակում կատարված ցանկացած փոփոխություններին, սկսած այն օրվանից, երբ նրանք ուժի մեջ են մտնում: Ցուցակը ուժի մեջ մտնելուց հնարավոր կարճ ժամանակում բոլոր մարզիկները և այլ անձինք պարտավոր են ծանոթանալ Արգելված ցուցակի նոր տարբերակին:

#### **4.2.2 Հատուկ նյութեր**

Կանոնների 10-րդ հոդվածում (Անհատական մարզաձևերում կիրառվող պատժամիջոցներ) նշված պատժամիջոցները կիրառվում են հատուկ նյութեր օգտագործելու համար:

*[Մեկնաբանություն կետ 4.2 կետի վերաբերյալ: Հատուկ նյութերի չեն համարվում պակաս կարևոր կամ վտանգավոր, քան այլ արգելված նյութերը: Նրանք հասարակ նյութեր են, որոնք բոլորից շատ են օգտագործվում մարզիկների կողմից մարզական աշխատունակությունը բարձրացնելու համար];*

### **4.3 Արգելված նյութերի և մեթոդների ցուցակի վերաբերյալ ՀՀԳ-ը դիրորոշումը**

ՀՀԳ-ն որոշում է կայացնում ներառելու նոր նյութերը և մեթոդները Արգելված նյութերի և մեթոդների ցուցակում և դասակարգել նրանց ըստ բաժինների, եթե նրանք հանդիսանում են քողարկող նյութեր կամ կարող են զգալիորեն մեծացնել մարզիկի կամ այլ անձի արդյունքները և ներկայացնում են իրական կամ պոտենցիալ վտանգ մարզիկի առողջության համար:

### **4.4 Բուժման նպատակով Արգելված դեղերի Օգտագործում**

**4.4.1** Եթե մարզիկի առողջությանը վտանգ է սպառնում, ապա նա կարող է օգտագործել Արգելված նյութերը և մեթոդները, նախապես ստանալով Բուժման նպատակով արգելված նյութերի օգտագործելու թույլտվություն և նշված խախտումները չեն համարվի հակադոպինգային կանոնների խախտում, եթե իրականացվել է Բուժման նպատակով արգելված նյութերի օգտագործելու թույլտվություն գործընթացը ըստ Բուժման նպատակով արգելված նյութերի օգտագործելու Միջազգային ստանդարտի:

**4.4.2** Ինչպես նշված է Կենտրոնի կանոնակարգում ազգային մակարդակի մարզիկները, որոնք ներառված են Կենտրոնի նպատակային դոպինգ ստուգման ցուցակում և այն մարզիկները, որոնք մասնակցում են ազգային առաջնություններում, պետք է ստանան Բուժման նպատակով արգելված նյութեր օգտագործելու թույլտվություն: ԲՆԱԴՕԹ ստանալու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ձևերը և դրանց լրացման կարգը (IN 75-04) մարզիկները կարող են գտնել Կենտրոնի կայքում ([www.armnado.am](http://www.armnado.am)) Թույլտվություն ստանալու հայտը պետք է տպագրել, լրացնել և ներկայացնել Կենտրոն, ոչ ուշ քան մրցումներին մասնակցելուց 30 օր առաջ՝ ԲՆԱԴՕԹ Միջազգային ստանդարտի 4.3 կետի համաձայն: Այն դեպքերում, եթե արգելված նյութը կիրառվել է շտապ օգնության կողմից, հայտը պետք է ներկայացնել Կենտրոն, որքան հնարավոր է կարճ ժամանակում կամ հայտնել այդ մասին հեռախոսով: ԲՆԱԴՕԹ տրամադրող հանձնաժողովի որոշումը համարվում է վերջնական և Կենտրոնը պետք է այն ուղարկի միջազգային և ազգային ֆեդերացիա և ՀՀԳ կամ տեղեկացնի նրանց ADAMS համակարգի միջոցով:

*[Մեկնաբանություն կետ 4.4.2 վերաբերյալ: Համաձայն կետ 5.1- ԲՆԱԴՕԹ Միջազգային ստանդարտի, Կենտրոնը կարող է մերժել ազգային մակարդակի մարզիկ կողմից ներկայացված հայտը, եթե նա ընդգրկված չի Կենտրոնի նպատակային դոպինգ ստուգման ցուցակում, սակայն այդ դեպքում Կենտրոնը պարտավոր է թույլատրել այդպիսի մարզիկին, դիմել կենտրոն ԲՆԱԴՕԹ ստանալու համար համաձայն իր դիմումի: Կեղծ փաստաթղթերի ներկայացումը կարող է հանգեցնել պատասխանատվության՝ հանաձայն սույն Կանոնների 2.5 կետի: Արտամրցումային ժամանակաշրջանում, մրցումների ժամանակ արգելված նյութերի օգտագործումը չի համարվում կանոնների խախտում, եթե միայն չի արձանագրվել դրական (անբարենպաստ) արդյունք, մրցումների ժամանակ հավաքված փորձանմուշում:]*

**4.4.3 Եթե Կենտրոնը դոպինգ ստուգման համար ընտրում է որևէ մարզիկ, որը չի հանդիսանում միջազգային կամ ազգային մակարդակի մարզիկ Կենտրոնը պետք է թույլ տա այդ մարիզիկին անհրաժեշտության դեպքում ներկայացնել **հայտ ԲՆԱԴՕԹ** ստանալու համար:**

*[Մեկնաբանություն 4.4.3 կետի վերաբերյալ: ԲՆԱԴՕԹ Միջազգային ստանդարտը Ազգային հակադոպինգային կազմակերպություններին թույլ է տալիս ԲՆԱԴՕԹ տրամադրել մարզիկների որոշակի խմբերին: Եթե Ազգային հակադոպինգային կազմակերպությունը ընտրում է որևէ մարզիկի, ով հանդիսանում է ազգային մակարդակի մարզիկ, ումից ազգային հակադոպինգային կազմակերպությունը չի ընդունում ԲՆԱԴՕԹ հայտ, սակայն անհրաժեշտության դեպքում Ազգային հակադոպինգային կազմակերպությունը կարող է հատուկ որոշմամբ թույլ տալ, որ մարզիկը դիմի ԲՆԱԴՕԹ ստանալու համար:]*

**4.4.4 Կենտրոնի տրված ԲՆԱԴՕԹ-ը ունի իրավաբանական ուժ միայն ազգային կարգի մարզիկների համար և չունի իրավաբանական ուժ միջազգային մրցումների ժամանակ: Միջազգային մրցումներին մասնակցելու համար ԲՆԱԴՕԹ ստանալու համար մարզիկները պետք է անեն հետևյալը**

4.4.4.1 Եթե մարզիկը Կենտրոնից ստացել է ԲՆԱԴՕԹ նա պետք է դիմի Կենտրոն, որպեսզի Կենտրոնը օգնի նրան դիմել Միջազգային ֆեդերացիա՝ համաձայն ԲՆԱԴՕԹ Միջազգային ստանդարտի 7-րդ հոդվածում սահմանված կարգի: Եթե Միջազգային ֆեդերացիա ուղարկված հայտը բավարարում է ԲՆԱԴՕԹ Միջազգային ստանդարտի 7 հոդվածում սահմանված պահանջներին, Միջազգային ֆեդերացիան կտրամադրի այդ մարզիկին ԲՆԱԴՕԹ: Եթե Կենտրոնի թույլտվությունը չի համապատասխանում միջազգային ստանդարտին, ապա Միջազգային ֆեդերացիան կարող է փոխել Կենտրոնի որոշումը: Միջազգային ֆեդերացիան կարող է թույլ չտալ մարզիկին օգտագործել հայտում նշված արգելված նյութը կամ որոշել, որ տվյալ դեպքում ԲՆԱԴՕԹ ստանալու անհրաժեշտություն չկա:

Միջազգային կարգի մարզիկները ԲՆԱԴՕԹ ստանալու հայտը պետք է ներկայացնեն Կենտրոն, ոչ ուշ քան մրցումներին մասնակցելուց 21 օր առաջ: Ազգային մրցումների և արտամրցումային դրայինգ ստուգման ժամանակ բավարար են հանդիսանում Կենտրոնի կողմից վավերացված ԲՆԱԴՕԹ –ները, եթե այդ մասին տեղեկացված է ՀՀԳ-ն կամ Միջազգային ֆեդերացիաները համաձայն ստանդարտի 4.4.6 կետի: Եթե 21 օրում ՀՀԳ կամ Միջազգային ֆեդերացիաները չեն տեղեկացվում Կենտրոնի որոշման մասին, Կենտրոնի կողմից վավերացված ԲՆԱԴՕԹ-ը դառնում անվավեր ցանկացած նպատակի համար:

*[Մեկնաբանություն 4.4.4.1 կետի վերաբերյալ: Համաձայն ԲՆԱԴՕԹ Միջազգային ստանդարտի 5.6 եւ 7.1 (ա) կետերի Միջազգային ֆեդերացիան կարող է հրապարակել իր կողմից վավերացված Ազգային հակադոպինգային կազմակերպությունների ԲՆԱԴՕԹ-ների մասին տեղեկատվությունը իր կայքում: Երբ Ազգային հակադոպինգային կազմակերպությունները մերժում են մարզիկին ԲՆԱԴՕԹ ստանալու հարցումը, ապա այդ տեղեկատվությունը չի կարող տեղ գտնել Միջազգային ֆեդերացիայի կայքում:*

*Համաձայն ԲՆԱԴՕԹ միջազգային ստանդարտի պահանջների, Կենտրոնը պետք է օգնի իր մարզիկներին որոշելու, թե երբ նրանք պետք է ներկայացնեն հայտը միջազգային ֆեդերացիայի կամ մեծ մրցումների կազմակերպիչներին վավերացման համար: Եթե միջազգային ֆեդերացիան հրաժարվում է ճանաչել Կենտրոնի կողմից տրամադրված ԲՆԱԴՕԹ միայն այն պատճառով, որ բժշկական տեղեկատվություն կամ այլ փաստաթղթեր բացակայում են, որոնք անհրաժեշտ Համաձայն ԲՆԱԴՕԹ Միջազգային ստանդարտի, ապա անկախ ամեն ինչից հայտը պետք է կրկին ներկայացնել է Միջազգային ֆեդերացիայի պատշաճ տեսքով:]*

4.4.4.2 Եթե մարզիկը Կենտրոնից չի ստացել ԲՆԱԴՕԹ, ապա նա կարող է միանգամից դիմել Միջազգային ֆեդերացիային և ներկայացնել հայտ ըստ ԲՆԱԴՕԹ Միջազգային ստանդարտի պահանջների: Եթե Միջազգային ֆեդերացիան տալիս է ԲՆԱԴՕԹ, ապա նա պետք է տեղեկացնի այդ մասին Կենտրոնին: Եթե Միջազգային ֆեդերացիան չի տալիս ԲՆԱԴՕԹ, ապա այդ մարզիկը ունի 21 օր ՀՀԳ դիմելու համար ԲՆԱԴՕԹ ստանալու համար.

Եթե Կենտրոնը իր հերթին համաձայն չէ Միջազգային ֆեդերացիայի հետ և որոշում է տրամադրել այդ մարզիկին ԲՆԱԴՕԹ Կետրոնը մարզիկի խնդրանքով կամ իր նախաձեռնությամբ կարող է ուղարկել փաստաթղթերը ՀՀԳ Միջազգային ֆեդերացիայի որոշումը վերանայելու նպատակով: Եթե վերընշված գործողությունը չի կատարվում, Միջազգային ֆեդերացիայի որոշումը մնում է ուժի մեջ Միջազգային մրցումների և արտամրցումային դրայինգ ստուգման ժամանակ, բայց ոչ թե Ազգային մրցումների ժամանակ:

*[Մեկնաբանություն 4.4.4.2 կետի վերաբերյալ: Միջազգային ֆեդերացիան և Կենտրոնը կարող են գալ համաձայնության, որ Կենտրոնը կլինի համաձայն միջազգային ֆեդերացիայի որոշումների հետ]:*

#### 4.4.5 ԲՆԱԴՕԹ-ի Պիտանելիությունը, չեղյալ համարելը և կասեցումը

##### 4.4.5.1 Եթե ԲՆԱԴՕԹ -ը տրվում համաձայն այս Կանոնների՝

(ա) դրա ժամկետը լրանում է ԲՆԱԴՕԹ -ում նշված օրը առանց որևէ շահագրգրված կողմերի ծանուցման

(բ) ԲՆԱԴՕԹ -ը կարող է համարվել չեղյալ, եթե մարզիկը չի կատարել այն գործողությունները, որոնք վավերացրել է ԲՆԱԴՕԹ -ը հանձնաժողովը

գ) ԲՆԱԴՕԹ -ը կարող է հետ վերցվել, եթե նա չեղյալ է համարում դրանում նշված պայմանները հետագայում փոխվել են կամ (դ) ԲՆԱԴՕԹ -ը վերանայվել է ՀՀԳ-ի կողմից կամ որևէ անձի կամ կազմակերպության բողոքարկման պատճառով

4.4.5.2 Մարզիկը չի կարող ենթարկվել որևէ պատժամիջոցի կապված արգելված նյութի կամ մեթոդի օգտագործման հետ մինչև նրան տրված ԲՆԱԴՕԹ-ի ժամկետը լրանալը ԲՆԱԴՕԹ կամ ԲՆԱԴՕԹ չեղյալ համարվելը ըստ 7.2 կետի:

#### 4.4.6 ԲՆԱԴՕԹ-ի վերանայումը և ԲՆԱԴՕԹ-ի հետ կապված որոշումների վերաբերյալ բողոքարկումը

4.4.6.1 Եթե Կենտրոնը մերժում է ներկայացված ԲՆԱԴՕԹ ստանալու համար հայտը, մարզիկը կարող է բողոքարկել ազգային Բողոքարկման հանձնաժողովին համաձայն սույն կանոնների 13.2.2 և 13.2.3 կետերի:

4.4.6.2 ՀՀԳ-ն պետք է քննարկի Միջազգային ֆեդերացիայի կողմից մերժված ԲՆԱԴՕԹ ստանալու համար հայտը, որը տրված է Կենտրոնի կողմից: Բացի այդ ՀՀԳ-ն մարզիկի խնդրանքով կամ իր նախաձեռնությամբ կարող է վերանայել Կենտրոնի որոշումը: Եթե ՀՀԳ-ն վերանայումից հետո կկայացվի որոշում, որ քննարկվող ԲՆԱԴՕԹ ստանալու գործընթացը համապատասխանում է ԲՆԱԴՕԹ Միջազգային ստանդարտի պահանջներին ՀՀԳ չի միջամտի և հակառակը:

4.4.6.3 Մարզիկը կարող է բողոքարկել **ԲՆԱԴՕԹ** -ի վերաբերյալ Միջազգային ֆեդերացիայի կամ Կենտրոնի ցանկացած որոշում (եթե Կենտրոնը քննարկել է հայտը միջազգային ֆեդերացիայի անունից), որը չի վերանայվի ՀՀԳ-ն կողմից, կամ, որ վերանայվել է բայց չի կասեցվել ՀՀԳ-ի կողմից բացառապես ՄԱԴ-ում, համաձայն Կանոնների 13 - րդ հոդվածի,

*[Մեկնաբանություն 4.4.6.3 կետի վերաբերյալ: Տվյալ դեպքում ԲՆԱԴՕԹ -ի վերաբերյալ որոշումը, որը կայացրել է Միջազգային ֆեդերացիան, բայց ոչ ՀՀԳ-ն, կարող է բողոքարկվել: Սակայն բողոքակում կճանաչվի վավեր միայն այն ժամանակ, երբ ՀՀԳ-ն կտեղեկացվի բողոքարկման մասին: ՀՀԳ-ը կարող է նաև մասնակցի բողոքարկման գործընթացին, եթե համարի դա անհրաժեշտ:]*

4.4.6.4 ՀՀԳ-ի որոշումը **ԲՆԱԴՕԹ** չեղյալ համարելու մասին կարող է բողոքարկվել մարզիկի, Կենտրոնի և/կամ Միջազգային ֆեդերացիայի կողմից բացառապես ՄԱԴ-ում սույն Կանոնների հոդված 13 համաձայն:

4.4.6.5 **ԲՆԱԴՕԹ** վերաբերյալ կայացված որոշման մասին բողոքարկման անկարողությունը և պատշաճ դիմում չներկայացնելը ողջամիտ ժամկետում թույլ չի տա բողոքարկումը քննարկել և հավասար է այն բանին, որ բողոքարկողը հրաժարվում է բողոքարկելուց:

## **ՀՈՂՎԱԾ 5. ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ և ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

### **5.1 Թեստավորման և հետաքննության նպատակը**

Թեստավորման և հետաքննության միայն պետք է ձեռնարկել դոպինգի դեմ պայքարելու նպատակով: Դրանք պետք է իրականացնել միայն Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի դրույթների և Կենտրոնի հրահանգների համաձայն:

**5.1.1** Թեստավորումը պետք է ձեռնարկել ապացույցներ ստանալու նպատակով, որ մարզիկը խստորեն պահպանում է (կամ չի պահպանում) Օրենսգրքով նախատեսված կանոնները, որոնք արգելում են օգտագործել արգելված նյութեր և մեթոդներ կամ: Թեստավորման պլանավորումը և գործունեությունը լաբորատոր փորձաքննություն արդյունքները ստանալուց հետո և դրանց հետ կապված Կենտրոնի բոլոր գործողությունները պետք է կատարվեն համաձայն Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի դրույթների: Կենտրոնը պետք է որոշի իրականացվող թեստերի/դոպինգ ստուգումների/ քանակը, ներառյալ պատահական եւ նպատակային թեստերը և իրականացվի դրանք համաձայն Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի չափանիշների: Տվյալ ստանդարտի բոլոր դրույթները պետք է կիրառվեն է ավտոմատ կերպով բոլոր նման թեստավորումների նկատմամբ:

**5.1.2** Հետազոտությունը պետք է իրականացվի:

5.1.2.1 ատիպիկ արդյուքների, Կենսաբանական անձնագրի արդյուքների և անբարենպաստ արդյուքների վերաբերյալ, համաձայն 7.4 եւ 7.5 կետերի: Նաև պետք է իրականացվի տեղեկատվության կամ ապացույցների հավաքագրում (ներառյալ ապացույցներ, որոնք ստացվել են լաբորատոր փորձաքննության արդյունքում) որպեսզի պարզվի, թե արդյոք տեղի է ունեցել հակադրապինգային կանոնների խախտում ըստ 2.1 կամ/և 2.2-ի կետերի; և

5.1.2.2 հակադրապինգային կանոնների պոտենցիալ խախտման հետ կապված այլ հիմքերի վերաբերյալ, որոնք կարող են ապացուցել, որ տեղի է ունեցել Կանոնների խախտում, պետք է իրականացվի այն տեղեկատվության և ապացույցների հավաքագրումը (ներառյալ ապացույցների, որոնք հավաքված են, ոչ թե լաբորատոր փորձաքննության արդյուքների հիման վրա), և կարող են ապացուցել, արդյոք տեղի է ունեցել կանոնների խախտում համաձայն դրույթների, որոնք ներառված են 2.2 կետից մինչև 2.10 կետը:

5.1.3 Կենտրոնը կարող է ձեռք բերել, գնահատել և մշակել հակադրապինգային հետաքննության հետ կապված բոլոր առկա աղբյուրները, որպեսզի կազմի արդյունավետ, խելացի եւ համաչափ նմուշառման ծրագիր, պլանավորի թիրախային թեստավորում, և /կամ/ կազմակերպի հետաքննություններ հակադրապինգային կանոնների հնարավոր խախտման վերաբերյալ:

## 5.2 Թեստավորումը իրականացնելու լիազորություն

5.2.1 Ինչպես սահմանված է Օրենսգրքի 5.3 կետում հաշվի առնելով իրավաբանական սահմանափակումները Կենտրոնը կարող է իրականացնել 1.3 կետի պահանջներին համապատասխանող ցանկացած մարզիկի մրցումային և արտամրցումային թեստավորում:

5.2.2 Կենտրոնը կարող է պահանջել, որ ցանկացած մարզիկ, որը գտնվում է իր իրավասության տակ ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում տրամադրի նմուշ փորձաքննության համար (այդ թվում նաև որակազրկված մարզիկները):

*[Մեկնաբանություն 5.2.2 կետի վերաբերյալ: Եթե մարզիկը ստույգ չի հայտարարել 60 րոպեանոց ժանանակահատվածը կամ չի նշել, որ նա պատրաստ է հանձնել նմուշը 23:00 մինչև 06:00 ժանանակահատվածում Կենտրոնը կարող է ենթադրել, որ մարզիկը ունի լուրջ միտումներ*

*չտրամադրելու նմուշը և խախտել է Կանոնները: Տվյալ փաստի բողոքարկումը չի հանդիսանում բավարար իրավաբանական ապացույց Կանոնների խախտման վերաբերյալ, որի հիմքում ընկած է նմուշառման իրականացումը վերընշված համգամանքներում:]*

5.2.3 ՀՀԳ-ն իրավասու է իրակացնել մրցումային և արտամրցումային թեստավորում համաձայն Օրենսգրքի 20.7.8 կետի:

5.2.4 Եթե միջազգային ֆեդերացիան կամ մեծ մարզական իրադարձության կազմակերպիչն հանձնարարում են Կենտրոնին իրականացնել թեստավորում (անմիջականորեն կամ ազգային ֆեդերացիայի միջոցով) Կենտրոնը կարող է հավաքել նաև լրացուցիչ նմուշներ կամ խնդրել լաբարատորիային իրականացնել ուղարկվող նմուշների լրացուցիչ փորձաքննություն Կենտրոնի հաշվին, տեղեկացնելով այդ մասին միջազգային ֆեդերացիային կամ մեծ մարզական իրադարձության կազմակերպիչին:

5.2.5 Եթե այլ հակադոպինգային կազմակերպությանը լիազորվում է սույն Կանոններով իրականացնել Կենտրոնի իրավասության տակ գտնվող մարզիկի դոպինգ ստուգումը, Կենտրոնը և այդ մարզիկի ազգային ֆեդերացիան պետք է ճանաչեն այդ թեստավորումը համաձայն հոդված 15-ի և (եթե նմուշառումը համաձայնեցված է այդ հակադոպինգային կազմակերպության հետ համաձայն Օրենսգրքի հոդված 7-ի) Կենտրոնը կարող է հարուցել գործ ընդդեմ հակադոպինգային կանոնները խախտած մարզիկի՝ հիմնվելով այդ թեստավորման ժամանակ ստացված արդյուքների վրա:

### **5.3 Թեստավորում մեծ մարզական իրադարձությունների ժամանակ**

5.3.1 Բացառությամբ Օրենսգրքի 5.3-րդ թղ կետով նախատեսվածի, միայն մեկ կազմակերպություն պետք է պատասխանատու լինի նախաձեռնելու և իրակացնելու թեստավորումը մեծ մարզական իրադարձությունների ժամանակաշրջանում: Հայաստանում տեղի ունեցող Միջազգային մրցումներում նմուշառումը պետք է նախաձեռնի և ղեկավարի Միջազգային ֆեդերացիան (կամ ցանկացած այլ միջազգային կազմակերպության, որը իշխող մարմին է այս դեպքում): Հայաստանում իրակացվող ազգային մակարդակի մրցումներին նմուշառումը պետք է նախաձեռնի եւ իրականացնի Կենտրոնը:

5.3.2 Եթե այլ հակադոպինգային կազմակերպությունը, որը ունի իրավունք, բայց չունի պատասխանատվություն իրականացնել նմուշառում Հայաստանում անցկացվող մրցումների ժամանահատվածում նախաձեռնում է նմուշառում, ապա նա պետք է առաջին հերթին համաձայնեցնի այն Կենտրոնի և/կամ



մրցումների կազմումիտեի հետ նմուշառում իրակացնելու թույլտվություն ստանալու նպատակով: Եթե Կենտրոնը կամ մրցումների կազմումիտեն չի տալիս իր համաձայնությունը, ապա այդ հակադրապինգային կազմակերպությունը կարող է դիմել ՀՀԳ թույլատվություն ստանալու համար: ՀՀԳ-ն չպետք է հաստատի նման նմուշառումը առանց Կենտրոնի հետ խորհրդակցելու: ՀՀԳ-ի որոշումը հանդիսանում է վերջնական և եթե ՀՀԳ-ն տալիս է իր թույլտվությունը, ապա այդ թեստավորումը կհամարվի արտամրցումային դրապինգ ստուգում:

**5.3.3** Ազգային ֆեդերացիաները եւ ազգային մրցումների կազմակերպիտեն պետք է թույլատրեն և նպաստեն դրապինգ ստուգման իրակացմանը անկախ այդ մրցումներին գտնվող միջազգային դիտորների կարծիքի:

#### **5.4 Թեստավորման նախագծում**

Համաձայն Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի չափանիշների համագործակցելով այլ հակադրապինգային կազմակերպությունների հետ Կենտրոնը պետք է նախագծի և իրականացնի արդյունավետ, մտածված և համաչափ բաշխված առանձին մարզաձևերի մեջ տարբեր տիպի թեստավորումներ ներառյալ տարբեր լաբարատոր փորձաքննություններ: Կենտրոնը պետք է տեղեկացնի ՀՀԳ-ին ուղարկելով ՀՀԳ նախագծի պատճեն:

#### **5.5 Թեստավորման համակարգում**

Երբ նպատահարմար է Կենտրոնը օգտվելով ADAMS համակարգից կամ ՀՀԳ-ի կողմից վավերացված այլ համակարգից պետք է համակարգի իրեն կողմից նախատեսված թեստավորումները, որպեսզի տեղի չունենա թեստավորման կրկնություն (կրկնակի թեստավորում):

#### **5.6 Մարզիկի գտնվելու վայրի մասին տեղեկատվություն**

5.6.1 Կենտրոնը պետք է հավաքի տեղեկատվություն Նպատակային դրապինգ ստուգման ցուցակում ընդգրկված մարզիկների գտնվելու վայրի մասին՝ համաձայն Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի հավելում I-ի: Նպատակային դրապինգ ստուգման ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր մարզիկ պարտավոր է.

(ա) երեք ամիսը մեկ տեղեկացնել Կենտրոնին իր գտնվելու վայրի մասին

(բ) թարմացնել տեղեկատվությունը, երբ անհրաժեշտ է որպեսզի այն միշտ մնա ճիշտ և ամբողջական ; և

(գ) նշված վայրում և ժամանահատվածում լինել հասանելի թեստավորման համար:

**5.6.2** Կենտրոնը պետք է դարձնի հասանելի Նպատակային դոպինգ ստուգման ցուցակը *ADAMS* համակարգի միջոցով: Կենտրոնը պետք է համակարգի Միջազգային ֆեդերացիայի հետ ցուցակում ընգրկված մարզիկների գտնվելու վայրի մասին տեղեկատվության պահպանումը, որպեսզի գործողությունները չկրկնվեն: Կենտրոնի նպատակն է որոշել, թե որոնք են այն բարձր մակարդակի մարզիկները, որոնց համար պարտադիր է ներկայացնել իրենց գտնվելու վայրի մասին տեղեկատվությունը: Նպատակային դոպինգ ստուգման ցուցակի մեջ մարզիկներին ընդգրկելու համար Կենտրոնը պետք է մշակի չափորոշիչներ: Ընտրված մարզիկը պետք է ծանուցվի Նպատակային դոպինգ ստուգման ցուցակի մեջ ընգրկվելուց առաջ ինչպես նաև ցուցակից հեռացնելու վերաբերյալ:

5.6.3 Համաձայն 2.4 կետի, եթե որևէ մարզիկ հրաժարվում է տրամադրել իր գտնվելու վայրի մասին տեղեկություն, ապա դա համաձայն Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի համարվում է /հավասար է/ բաց թողած դոպինգ ստուգմանը կամ դոպինգ ստուգումից հրաժարվելուն:

5.6.4 Մարզիկները, որոնք ընգրկված են Նպատակային դոպինգ ստուգման ցուցակի մեջ պարտավոր են Կենտրոնին ներկայացնել իրենց գտնվելու մասին տեղեկություն համաձայն Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի հավելված I-ի մինչև

(ա) մարզիկը չի ներկայացնում Կենտրոն գրավոր ծանուցում այն մասին, որ նա արդեն չի մարզվում և չի մասնակցում մրցումներին

(բ) Կենտրոնը տեղեկացնում է նրան, որ նա հեռացվել է Նպատակային դոպինգ ստուգման ցուցակից, քանի որ չի համապատասխանում այդ ցուցակի չափորոշիչներին:

**5.6.5** Մարզիկի գտնվելու մասին տեղեկություն պետք է հասանելի լինի ՀՀԳ-ին և այլ հակադոպինգին կազմակերպություններին (*ADAMS համակարգի միջոցով*), որոնք իրավասու են իրականացնել այդ մարզիկի դոպինգ ստուգումը և պետք է պահպանվի խիստ գաղտնի և մշտապես օգտագործվի միայն դոպինգ ստուգման նպատակով ինչպես նշված է Օրենսգրքի կետ 5.6, համաձայն Մասնավոր կյանքի և անձնական տեղեկատվության պահպանության Միջազգային ստանդարտի մինչև այդ տեղեկատվությունը չդառնա ոչ ակտուալ դոպինգ ստուգման համար:

## **5.7 Սպորտից հեռացած մարզիկների վերադարձը մրցումներին**

5.7.1 Եթե մարզիկը, ում Կենտրոնը ընդգրկել է Նպատակային դոպինգ ստուգման ցուցակում դադարենցում է իր մարզումները և մասնակցությունը մրցումներին ինչի պատճառով հեռացվում է այդ ցուցակից, հայտնում է ցանկություն վերադառնալ սպորտ, պետք է ցանկացած Միջազգային կամ ազգային մրցումներից առաջ գրավոր հայտնի այդ մասին Կենտրոնին և տրամադրի տեղեկատվություն իր գտնվելու վայրի մասին համաձայն Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի հավելված I-ի: Հակառակ դեպքում՝ նա չի ունենա իրավունք մասնակցել մրցումներին: Եթե վերընշված պահաջը չի պահպանվել և մարզիկը այնուամենայնիվ մասնակցել է մրցումներին, ապա նրա բոլոր արդյունքները պետք է համարվեն չեղյալ համաձայն 5.7.1-կետի: ՀՀԳ-ն համաձայնացնելով իր որոշումը մարզիկի Միջազգային ֆեդերացիայի և Կենտրոնի հետ կարող է բացառության կարգով թույլ տալ անտեսել վեց ամսվա ժամկետի պահպանումը, եթե համարի, որ այդ պահանջի կիրառումը հանդիսանում է խիստ անազնիվ տվյալ մարզիկի վերաբերյալ: ՀՀԳ-ի այդպիսի որոշումը կարող է բողոքարկվել համաձայն հոդված 13-ի:

5.7.2 Եթե մարզիկը, լինելով որակագրկված, չի մարզվում և չի մասնակցում ազգային կամ միջազգային մրցումներին, բայց հետագայում, որակագրկման ժամկետը չավարտված, հայտնում ցանկություն վերադառնալ սպորտ, ապա նա իրավունք չունի մասնակցել մրցումներին, եթե մրցումների սկսվելուց վեց ամիս առաջ չի տրամադրել Կենտրոնին և իր Միջազգային ֆեդերացիային գրավոր տեղեկատվություն իր ցանկության վերաբերյալ և իր գտնվելու վայրի մասին ըստ Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի հավելված I-ի:

5.7.3 Մարզիկը, որը ընգրկված չէ Կենտրոնի Նպատակային դոպինգ ստուգման ցուցակում, 5.7.2 կետում շարադրված իրավիճակներում իր վերադարձից վեց ամիս առաջ պետք է գրավոր տեղեկացնի Կենտրոնին և իր Միջազգային ֆեդերացիային և տրամադրի տեղեկություն իր գտնվելու վայրի մասին որպեսզի Կենտրոնը հնարավորություն ունենա իրականացնել արտամրցումային դոպինգ ստուգում, այդ թվում (եթե անհրաժեշտ է) տեղեկություն, որը համապատասխանում է Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի հավելված I-ի պահանջներին:

## **ՀՈՂՎԱԾ 6 ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Համաձայն սույն Կանոնների՝ դոպինգ ստուգման ընթացքում հավաքված նմուշները ենթարկվում են լաբորատոր փորձաքննության հետևյալ սկզբունքներով՝

## **6.1 Արտոնագրված և վավերացված լաբորատորիաներից օգտվելը**

Համաձայն Օրենսգրքի 2.1 կետի, դոպինգ ստուգման ընթացքում հավաքված նմուշները պետք է ենթարկվեն լաբորատոր փորձաքննության, միայն ՀՀԳ-ի կողմից արտոնագրված լաբորատորիաներում: ՀՀԳ-ի կողմից արտոնագրված լաբորատորիայի ընտրությունը պետք է կատարվի միայն Կենտրոնի կողմից:

*[Մեկնաբանություն 6.1 կետի վերաբերյալ: Կետ 2.1-ում բերված Կանոնների խախտումները կարող են հաստատվել միայն այն դեպքում, երբ նմուշը հետազոտվել է ՀՀԳ-ի կողմից արտոնագրված կամ վավերացված լաբորատորիաներում: Կանոնների այլ հոդվածներում նշված խախտումները կարող են հաստատվել այլ լաբորատորիաներում կատարված հետազոտությունների հիման վրա, եթե այդ արդյունքները հուսալի են:]*

## **6.2 Դոպինգ ստուգման ընթացքում նմուշների հավաքման և լաբորատոր փորձաքննության նպատակը**

**6.2.1** Դոպինգ ստուգման ընթացքում հավաքված նմուշները ենթարկվում են լաբորատոր փորձաքննության նրանց մեջ Արգելված նյութերի կամ մեթոդների, ինչպես նաև ՀՀԳ Սոնիտորինգի Ծրագրի (Օրենսգրքի 4.5 կետ) մեջ ընդգրկված նյութերի հայտնաբերման նպատակով: Բացի այդ նմուշները հավաքվում են մարզիկների մեզի, արյան կամ այլ կենսանմուշի մեջ բնական ֆիզիոլոգիական ցուցանիշների մակարդակը պարզելու համար՝ (ներառյալ ԴՆԹ-ն կամ գենետիկ պրոֆիլը), որն անհրաժեշտ է դոպինգ ստուգման համար: Նմուշները կարող են հավաքվել և պահպանվել ապագա հետազոտման նպատակով:

*[Մեկնաբանություն 6.2 կետի վերաբերյալ: Օրինակ՝ համապատասխան կենսաբանական պրոֆիլը կարող է օգտագործվել նպատակային դոպինգ ստուգման դեպքում կամ օգնել կայացնել ճիշտ որոշում, եթե տեղի է ունեցել հակադրայինզային կանոնների խախտում համաձայն 2.2 կետի:]*

**6.2.2** Կենտրոնը կարող է խնդրել լաբորատորիային հետազոտել նմուշները համաձայն Օրենսգրքի 6.4 կետի և Թեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի 4.7 կետի:

### **6.3 Փորձանմուշների օգտագործումը գիտական հետազոտությունների**

#### **նպատակով**

Ոչ մի փորձանմուշ չի կարող օգտագործվել գիտական հետազոտության նպատակով, առանց մարզիկի գրավոր համաձայնության: Եթե կա մարզիկի համաձայնությունը, նմուշները կարող են օգտագործվել ոչ միայն 6.2 կետում նշված նպատակով և պետք է լինեն անանուն:

### **6.4 Փորձանմուշների լաբորատոր քննությունը և լաբորատոր հաշվետվության ստանդարտը**

Լաբորատորիաները պետք է կատարեն դոպինգ ստուգման նմուշների քննությունը և ներկայացնեն հաշվետվություն համաձայն Լաբորատորիաների համար Միջազգային Ստանդարտի:

Փորձաքննության էֆեկտիվությունը ապահովելու նպատակով փաստաթղթերը, որոնց վրա կա հղում 5.4.1 կետին, հաստատում են փորձաքննության մեթոդները առանձին մարզաձևերի համար, իսկ լաբորատորիաները պետք է կատարեն նմուշների փորձաքննությունը համաձայն համապատասխան ցուցակում նշված մեթոդների, բացառությամբ ներքոնշված դեպքերի:

**6.4.1** Կենտրոնը կարող է պահանջել լաբորատորիայից իրականացնել իր կողմից ուղարկված նմուշների ավելի լայն և մանրակրկիտ փորձաքննություն, քան դա նշված է Տեխնիկական փաստաթղթերում:

**6.4.2** Կենտրոնը կարող է պահանջել լաբորատորիայից իրականացնել իր կողմից ուղարկված նմուշների փորձաքննությունը կրճատված ծրագրով միայն այն դեպքերում, երբ ՀՀԳ-ն գտել է, որ Կենտրոնի պահանջը համոզիչ է կապված Հայաստանում կամ տվյալ մարզաձևում ստեղծված հատուկ իրավիճակի հետ, ինչը հաստատվում է Կենտրոնի նմուշառման նախագծով, որը նախատեսում է փորձաքննությունը իրականացնել կրճատված ծրագրով, քան դա նշված Տեխնիկական փաստաթղթերում:

**6.4.3** Ինչպես նշված է Լաբորատորիաների Միջազգային Ստանդարտում լաբորատորիաները իրավունք ունեն սեփական նախաձեռնությամբ և իրենց հաշվին իրականացնել նմուշների փորձաքննություն, Տեխնիկական փաստաթղթերում չընդգրկված մեթոդներով, արգելված նյութերի և մեթոդների հայտնաբերման նպատակով, նույնիսկ եթե նմուշառումը իրականացնող

կազմակերպությունը չի պահանջել դա: Փորձաքննություն արդյունքները այդ դեպքում պետք է ներկայացվեն նույն կարգով, ինչպես ներկայացվում են ցանկացած այլ արդյունքներ:

*[Մեկնաբանություն 6.4 կետի վերաբերյալ: Սույն կետի նպատակն է նմուշների պատշաճ փորձաքննության ապահովումը, ինչը կնպաստի դոպինգի օգտագործման փաստի հայտնաբերման էֆեկտիվության և արդունավետության բարձրացմանը:]*

## **6.5 Նմուշների լրացուցիչ փորձաքննությունը**

Ցանկացած նմուշ կարող է պահպանվել և ապագայում ենթարկվել փորձաքննության համաձայն կետ 6.2-ի, եթե՝  
ա) կա գրավոր պահանջ ՀՀԳ-ի կողմից և/կամ  
բ) Կենտրոնի կողմից ցանկացած ժամանակ՝ մինչև մարզիկը կծանուցվի այն մասին, որ հաստատվել է Կանոնների խախտում համաձայն կետ 2.1-ի կամ, եթե Ա նմուշում հայտնաբերվել է արգելված նյութ, իսկ Բ նմուշը դեռ չի հետազոտվել: Այդպիսի փորձաքննությունները պետք է իրակացվեն համաձայն Լաբորատորիաների միջազգային ստանդարտի ու թեստավորման և հետաքննության միջազգային ստանդարտների:

## **ՀՈՂՎԱԾ 7 ԴՈՊԻՆԳ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

### **7.1 Դոպինգ ստուգման արդյունքների կառավարման պատասխանատվությունը**

7.1.1 Կենտրոնը պատասխանատու է լաբորատոր փորձաքննությունների արդյունքների վերլուծության և կառավարման համար, այն մարզիկների և անձանց նկատմամբ, ովքեր համաձայն Օրենսգրքի 7-րդ հոդվածի գտնվում են հակադոպինգային իրավասության տակ:

7.1.2 Այն դեպքերում, երբ Կենտրոնը ըստ 5.2.4 կետի որոշել է իրականացնել լրացուցիչ նմուշառում, արդյունքների կառավարման համար պատասխանատու է համարվում այն հակադոպինգային կազմակերպությունը, որը նախաձեռնել է դոպինգ ստուգումը: Սակայն, եթե Կենտրոնը հրահանգել է լաբորատորիային իրականացնել լրացուցիչ փորձաքննություն, ապա դոպինգ ստուգումը նախաձեռնած միջազգային ֆեդերացիան կամ միջազգային մրցումների կազմակերպիչն է դառնում են պատասխանատու արդյունքների կառավարման համար:

7.1.3 Կենտրոնը նշանակում է գործադիր հանձնախումբ, որը կազմված է նախագահից և չորս այլ անդամից, որոնք ունեն աշխատանքային փորձ հակադոպինգային ոլորտում: Հանձնախումբը պետք է ունենա չորս տարվա աշխատանքի լիազորություն: Երբ Կենտրոնը ներկայացնում է հանձնախմբի

քննարկամանը կանոնների հնարավոր խախտման դեպքը, հանձնախմբի նախագահը պետք է համաձայն 7.2 կետի նշանակյի խմբի մեկ կամ մի քանի անդամի /ներառյալ նախագահին/ դեպքի քննարկման համար`

## **7.2 Կենտրոնի կողմից ներկայացված նմուշների անբարենպաստ արդյունքների քննարկումը**

Կենտրոնի կողմից ներկայացված նմուշների անբարենպաստ արդյունքների կառավարման գործընթացը պետք է լինի հետևյալը`

7.2.1 Բոլոր փորձաքննությունների պատասխանները պետք է ուղարկվեն Կենտրոն կողմով և ներառեն լաբորատորիայի պատասխանատուի կողմից ստորագրված հաշվետվությանը: Բոլոր հաղորդագրությունները գաղտնի են, ինչպես նախատեսում է *ADAMS* համակարգը:

7.2.2 Փորձաքննության անբարենպաստ տվյալները լաբորատորիայից ստանալու պահից սկսած Կենտրոնը պետք է ստուգի իր մոտ եղած տվյալ դեպքին վերաբերող դոպինգ ստուգման բոլոր փաստաթղթերը այդ թվում`  
ա) տրված է եղել արդյոք ԲՆԱԴՕԹ, ինչպես պահանջում է ԲՆԱԴՕԹ միջազգային ստանդարտը,  
բ) արդյոք տեղի է ունեցել բացահայտ շեղում տեստավորման և հետաքննության միջազգային ստանդարտից կամ լաբորատորիաների միջազգային ստանդարտից, որը դարձել է անբարենպաստ պատասխանի պատճառ;

7.2.3 Եթե ըստ 7.2.2 կետի փորձաքննության անբարենպաստ արդյունքները քննարկելիս պարզվում է, որ ԲՆԱԴՕԹ ստանալու գործընթացում կան շեղումներ տեստավորման և հետաքննության միջազգային ստանդարտից կամ լաբորատորիաների միջազգային ստանդարտից, որը դարձել է անբարենպաստ պատասխանի պատճառ, ապա այդ դոպինգ ստուգման արդյունքները համարվում են բացասական և մարզիկը , մարզիկի միջազգային ֆեդերացիան, ազգային ֆեդերացիան, ՀՀԳ-ն տեղեկացվում են այդ մասին:

## **7.3 Ծանուցում փորձաքննության անբարենպաստ արդյունքների քննարկումից հետո**

7.3.1 Եթե ըստ 7.2.2 կետի իրականացված փորձաքննության անբարենպաստ պատասխանի քննարկումը չի հայտնաբերել ԲՆԱԴՕԹ առկայություն և համաձայն միջազգային ստանդարտի կա շեղում, որը դարձել է փորձաքննության անբարենպաստ արդյունքի պատճառ Կենտրոնը պետք է անմիջապես տեղեկացնի մարզիկին, մարզիկի միջազգային ֆեդերացիային, մարզիկի ազգային ֆեդերացիային, ՀՀԳ-ին պահպանելով 14.1 կետի պահանջները ծանուցման մեջ ներառելով հետևյալը`

- (ա) փորձաքննության անբարենպաստ արդյունքը;
- (բ) կանոնների խախտման բնույթը;
- (գ) մարզիկը իրավունք ունի անմիջապես դիմելու Բ Նմուշի փորձաքննության համար, այն պայմանով, որ եթե այդպիսի դիմում չլինի, դա կդիտարկվի որպես Բ փորձանմուշի քննությունից հրաժարվել
- (դ) /նշանակել “ Բ ” փորձանմուշի քննության օր, ժամ , վայրը, եթե մարզիկը կամ Կենտրոնն որոշի կատարել Բ նմուշի փորձաքննություն
- (ե) մարզիկին կամ նրա ներկայացուցչին տալ հնարավորություն ներկա լինել “Բ” փորձանմուշի բացմանը և փորձաքննությանը ըստ Լաբորատորիաների Միջազգային ստանդարտի նախատեսված ժամանակով, եթե այդպիսի դիմում կլինի
- (զ) Մարզիկը իրավունք ունի պահանջել Ա և Բ նմուշների լաբորատոր փորձաքննությանը վերաբերվող փաստաթղթերի պատճենները, որոնք կներառեն Լաբորատորիաների Միջազգային ստանդարտով պահանջվող տեղեկությունները:

Եթե Կենտրոնը կորոշի չորակավորել ստացված անբարենպաստ արդյունքը, որպես հակադրապիստոսի կանոնների խախտում, ապա պետք է իր որոշման մասին անմիջապես տեղեկացնի է մարզիկին, մարզիկի միջազգային ֆեդերացիային, մարզիկի ազգային ֆեդերացիային և ՀՀԳ—ին

**7.3.2** Երբ մարզիկը կամ Կենտրոնը պահանջել են իրակացնել Բ նմուշի լաբորատոր փորձաքննություն, պետք է ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի իրականացվի Բ նմուշի լաբորատոր փորձաքննությունը համաձայն Լաբորատորիաների Միջազգային ստանդարտի պահանջների: Մարզիկը կարող է բավարարվել Ա նմուշի փորձաքննության արդյունքներով, սակայն նույնիսկ այդ դեպքում Կենտրոնը կարող է պահանջել Բ նմուշի լաբորատոր փորձաքննությունը: Մարզիկին կամ նրա ներկայացուցչին պետք է տալ հնարավորություն ներկա լինել Բ փորձանմուշի բացմանը և փորձաքննությանը լաբորատորիաների միջազգային ստանդարտով նախատեսված ժամանակով, եթե այդպիսի դիմում կլինի:

**7.3.3** Մարզիկին կամ նրա ներկայացուցչին տրվում է իրավունք ներկա լինել Բ փորձանմուշի բացմանը և փորձաքննությանը: Կենտրոնի ներկայացուցչները նույնպես ունեն այդ իրավունքը:

**7.3.4** Եթե Բ նմուշի փորձաքննությունը չի հաստատում Ա նմուշի փորձաքննության արդյունքները, ապա (բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնը համարում է որը տվյալ խախտումը համապատասխանում է 2.2 կետում նշված խախտումներին) վերլուծվող թեստը պետք է համարվի բացասական ինչի մասին անմիջապես պետք է տեղեկացնել մարզիկին, մարզիկի միջազգային ֆեդերացիային, մարզիկի ազգային ֆեդերացիային և ՀՀԳ—ին:



**7.3.5** Եթե Բ նմուշի փորձաքննությունը հաստատում է Ա նմուշի փորձաքննության արդյունքները, ապա այդ մասին անմիջապես պետք է տեղեկացնել մարզիկին, մարզիկի միջազգային ֆեդերացիային, մարզիկի ազգային ֆեդերացիային և ՀՀԳ—ին:

#### **7.4 Փորձաքննությունների ատիպիկ արդյունքների քննարկումը**

**7.4.1** Ինչպես նախատեսված է լաբորատորիաների միջազգային ստանդարտով, որոշ դեպքերում, երբ նմուշներում հայտնաբերվում են արգելված նյութեր, օրինակ ներածին նյութեր, այդ արդյունքները համարվում են Ատիպիկ արդյունքներ և անհրաժեշտություն կա իրականացնել հետագա հետազոտություններ:

**7.4.2** Փորձաքննության ատիպիկ արդյունքների ստացման դեպքում Կենտրոնը, պետք է պարզի՝  
ա/ արդյոք տրված է եղել ԲՆԱԴՕԹ, ինչպես պահանջում է ԲՆԱԴՕԹ միջազգային ստանդարտը  
բ/արդյոք տեղի է ունեցել բացահայտ շեղում թեստավորման և հետաքննության միջազգային ստանդարտից կամ լաբորատորիաների միջազգային ստանդարտից, որը դարձել է ատիպիկ արդյունքի պատճառ

**7.4.3** Եթե ատիպիկ արդյունքները ըստ 7.4.2 կետի քննարկելիս բացահայտվում է, որ ԲՆԱԴՕԹ ստանալու գործընթացում կան շեղումներ թեստավորման և հետաքննության միջազգային ստանդարտից կամ լաբորատորիաների միջազգային ստանդարտից, որը դարձել է անբարենպաստ արդյունքի պատճառ, ապա այդ դրայինգ ստուգման արդյունքները համարվում են բացասական և մարզիկը, մարզիկի միջազգային ֆեդերացիան, ազգային ֆեդերացիան, ՀՀԳ-ն տեղեկացվում են այդ մասին:

**7.4.4** Եթե ըստ 7.2.2 կետի փորձաքննության ատիպիկ արդյունքները քննարկելիս բացահայտվում է, որ ԲՆԱԴՕԹ ստանալու գործընթացում չկան շեղումներ տեստավորման և հետաքննության միջազգային ստանդարտից կամ լաբորատորիաների միջազգային ստանդարտից, որը դարձել է ատիպիկ պատասխանի պատճառ, ապա Կենտրոնը պետք է անց կացնի անհրաժեշտ հետաքննություն: Հետաքննությունը ավարտելուց հետո ատիպիկ արդյունքը կդիտարկվի որպես փորձաքննության անբարենպաստ արդյունք և համաձայն 7.3.1 կետի այդ մասին պետք է տեղեկացնել մարզիկին, մարզիկի միջազգային ֆեդերացիային, մարզիկի ազգային ֆեդերացիային, ՀՀԳ-ին որ այդ դրայինգ ստուգման արդյունքները համարվում է բացասական:

**7.4.5** Կենտրոնը չպետք է տրամադրի ատիպիկ արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն մինչև հետաքննության ավարտը և դրանք չեն համարվի անբարենպաստ արդյունքներ մինչև ներքոնշված գործողությունների իրականացումը:

7.4.5.1 Եթե Կենտրոնը որոշում է, որ Բ նմուշը պետք է հետազոտվի մինչև հետաքննության վերջնական որոշման կայացումը, Կենտրոնը կարող է կատարել Բ նմուշի հետազոտումը մարզիկին ծանուցում ուղարկելուց հետո, որը պետք է իր մեջ ներառի ատիպիկ արդյունքի նկարագրումը և 7.3.1 (դ) - (զ) կետերում բերված տեղեկությունը:

7.4.5.2 Եթե Կենտրոնը ստանում է

(ա) մեծ միջազգային մրցումների կազմումիտեից՝ մրցումներից անմիջապես առաջ կամ

(բ) հարցում խոշոր մարզական միջոցառման կազմակերպչից մարզական միջոցառումից անմիջապես առաջ կամ մարզական կազմակերպությունից, որը պատասխանատու է մրցումների անցկացման համար նախատեսված մասնակցության համար թիմի անդամների ընտրության վերջին ժամկետը պահպանելու համար, նրա մասին թե նշված է արդյոք մեծ մրցումների կազմումիտեին ուղղված փաստաթղթերում որևէ մարզիկ, որը ունի ատիպիկ արդյունք և որի նկատմամբ ընդունված է որոշում, Կենտրոնը պետք է տրամադրի ատիպիկ արդյունքների մասին տեղեկատվություն նախորոք ծանուցելով այդ մասին մարզիկին:

## **7.5 Ատիպիկ և անբարենպաստ արդյունքների քննարկումը ըստ կենսաբանական անձնագրի**

Ատիպիկ և անբարենպաստ արդյունքների քննարկումը ըստ կենսաբանական անձնագրի պետք է կատարվի Թեստավորման և հետքննության Միջազգային ստանդարտի և լաբորատորիաների Միջազգային ստանդարտի համաձայն:

Եթե Կենտրոնը համոզված է, որ տեղի է ունեցել հակադոպինգային կանոնների խախտում, ապա պետք է անմիջապես տեղյակ պահի մարզիկին (և միաժամանակ մարզիկի Միջազգային ֆեդերացիային, ազգային ֆեդերացիային, ՀՀԳ-ին) ներկայացնելով խախտման մասին կայացված որոշման հիմքերը:

## **7.6 Գտնվելու վայրի մասին տեղեկատվության տրամադրման կարգի խախտումների քննարկումը**

Կենտրոնը պետք է քննարկի գտնվելու վայրի մասին տեղեկատվություն տրամադրելուց հրաժարվելը կամ թեստավորումը բաց թողնելը համաձայն տեստավորման և հետաքննության Միջազգային ստանդարտի: Եթե Կենտրոնը համոզված է, որ տեղի է ունեցել 2.4 կետում նկարագրված խախտում, ապա պետք է անմիջապես տեղյակ պահի մարզիկին (և միաժամանակ մարզիկի

Միջազգային ֆեդերացիային, ազգային ֆեդերացիային, ՀՀԳ-ին) ներկայացնելով խախտման մասին կայցված որոշման հիմքերը:

### **7.7 Այլ հակադրալինգային կանոնների խախտումների քննարկում, որոնք նշված չեն 7.2–7.6 հոդվածներում**

Կենտրոնը կատարում է հակադրալինգային կանոնների հնարավոր խախտման հետաքննությունը համաձայն հակադրալինգային կանոնների և քաղաքականության, որոնք ներառված չեն 7.2–7.6 հոդվածներում: Եթե Կենտրոնը համոզված է, որ տեղի է ունեցել հակադրալինգային կանոնների խախտում, պետք է անմիջապես տեղեկացնել մարզիկին կամ այլ անձին (և միաժամանակ մարզիկի Միջազգային ֆեդերացիային, ազգային ֆեդերացիային և ՀՀԳ-ին) թե ինչ խախտում է տեղի ունեցել:

### **7.8 Նույնականացում մինչև կանոնների խախտման փաստի հաստատելը**

Մինչ մարզիկին կամ այլ անձին հակադրալինգային կանոնների հնարավոր խախտման մասին ծանուցելը կենտրոնը, օգտագործելով ADAMS համակարգը, պետք է ճշտի կամ կապ հաստատի ՀՀԳ-ի կամ այլ հակադրալինգային կազմակերպությունների հետ պարզելու արդյոք այդ մարզիկը նախկինում խախտել է կանոնները, թե ոչ:

### **7.9 Ժամանակավոր հեռացում**

#### **7.9.1 Պարտադիր ժամանակավոր հեռացում**

Եթե A նմուշի փորձաքննությունը տվել է անբարենպաստ արդյունք և նմուշում արգելված նյութ է հայտնաբերվել, որը չի հանդիսանում Հատուկ նյութ կամ արգելված մեթոդ և համաձայն 7.2.2 կետի իրակացված հետաքննության չեն հայտնաբերվել շեղումներ FՆԱԴՕԹ և Թեստավորման և հետաքննության ու Լաբորատորիայների միջազգային ստանդարտներից մարզիկը, այդ մասին ծանուցելուց հետո, միանգամից ենթարկվում է ժամանակավոր հեռացման համաձայն 7.2, 7.3 կամ 7.5 կետերի :

#### **7.9.2 Ոչ պարտադիր ժամանակավոր հեռացում**

Հատուկ նյութերին վերաբերող անբարենպաստ արդյունքերի կամ հակադրալինգային կանոնների այլ խախտումների դեպքում, որոնք նշված չեն 7.9.1 կետում Կենտրոնը կարող է ժամանակավոր հեռացնել կանոնները խախտած մարզիկին կամ այլ անձի լսումներից հետո՝ համաձայն 7.2-7.7 կետերի մինչև վերջնական լսումները, համաձայն 8-րդ հոդվածի:

**7.9.3** Այն դեպքում երբ ժամանակավոր հեռացումը կատարվել է համաձայն 7.9.1 և 7.9.2 հոդվածների, մարզիկը կամ այլ անձ պետք է ունենան հնարավորություն

ա) նախնական լսումների ժամանակավոր հեռացումից առաջ կամ հետո; կամ  
բ) արագացված վերջնական լսումների համաձայն 8 հոդվածի, ժամանակավոր հեռացում ստանալուց հետո:

Բացի դրանից մարզիկը կամ այլ անձ ունի ժամանակավոր հեռացման որոշումը բողոքարկելու իրավունք 13.2 կետի համաձայն (բացի 7.9.3.1 կետում նշված փաստերի):

7.9.3.1 Ժամանակավոր հեռացումը կարող է հանվել, եթե մարզիկը լսումների ընթացքում ապացուցում է, որ կանոնների խախտումը կապված է ախտոտված ապրանք օգտագործելու հետ: Լսումները իրակացնող խումբը չի կարող չեղյալ համարել Պարտադիր ժամանակավոր հեռացման որոշումը և այս դեպքում մարզիկի կողմից բողոքը ախտոտված ապրանքի վերաբերյալ նույնիսկ չի քննարկվի: .

7.9.3.2 Ժամանակավոր հեռացումը կիրառվում է (և չի կարող չեղյալ համարվել), եթե մարզիկը կամ այլ անձը ապացուցում է որ՝

(ա) կանոնների խախտման վերաբերյալ որոշումը հիմնված չէ բավարար փաստերի վրա և չունի ողջամիտ հեռանկար

(բ) մարզիկը կամ այլ անձը ունի հստակ ապացույցներ, որ իր մեղքի կամ անփութության չափը գրոյական է և ցանկացած պատժամիջոց, որը կնշանակվի այդ խախտման համար ի վերջո կկարճվի համաձայն 10.4 կետի, կամ

(գ) կան այլ փաստեր, որոնք կարող են ապացուցել, որ ժամանակավոր հեռացման վերաբերյալ ընդունված որոշումը անարդարացի է՝ մինչև չկայանան վերջնական լսումներ համաձայն 8-րդ հոդվածի : Վերջինս կիրառվում է միայն բացառիկ դեպքերում, օրինակ մարզիկի ժամանակավոր հեռացումը նրան հետագա մրցումներին մասնակցելու իրավունքից զրկելու նպատակով չի կարող գնահատվել որպես բացառիկ դեպք:

**7.9.4** Եթե ժամանակավոր հեռացումը իրականացվել է “Ա” փորձանմուշի քննության անբարենպաստ արդյունքների հիման վրա, բայց մարզիկը պահանջել է “Բ” նմուշի փորձաքննություն, և վերջինիս արդյունքները չեն հաստատում “Ա” փորձանմուշի քննության անբարենպաստ արդյունքները, ապա համաձայն 2.1. կետի, այդ մարզիկը չպետք է ենթարկվի ժամանակավոր հեռացման: Այն դեպքերում, եթե մարզիկը (կամ նրա թիմը) հեռացվել է մրցումներից ըստ 2.1 կետում նշված խախտումների և

“Բ” նմուշի փորձաքննությունը չի հաստատում “Ա” փորձանմուշի քննության արդյունքները, ապա հեռացումը դադարեցվում և եթե դա դեռ հնարավոր է մարզիկը (կամ նրա թիմը) կարող է շարունակել իր մասնակցությունը մրցումներին: Բացի այդ մարզիկը կամ նրա թիմը կարող են մասնակցել նաև այդ մրցումների այլ մարզաձևերում:

**7.9.5** Բոլոր դեպքերում, եթե մարզիկը կամ այլ անձ ստանում են ծանուցում կանոնների խախտման վերաբերյալ, բայց ժամանակավոր հեռացումը իրականացվում է, մարզիկին կամ այլ անձին պետք է առաջարկել հնարավորություն ընդունելու ժամանակավոր հեռացումը ինքնակամ անկախ նրանից, թե ինչպիսին կլինի վերջնական որոշումը:

*[Մեկնաբանություն 7.9 կետի վերաբերյալ: Ժամանակավոր հեռացման ժամանակահատվածը պետք է հաշվի առնվի որակագրկման ժամկետի նշանակման ժամանակ՝ տես 10.11.3.1 և 10.11.3.2. կետերը:]*

## **7.10 Առանց լսումների իրականացման որոշումների ընդունում**

**7.10.1** Մարզիկը կամ այլ անձը ում կողմից հակադրապինգային կանոնների խախտումը հաստատվել է, կարող է ընդունել իր մեղքը, հրաժարվել լսումներից և ընդունել Կենտրոնի կողմից նշանակված պատժամիջոցները ու նրա հետևանքները:

**7.10.2** Մյուս կողմից, եթե մարզիկը կամ այլ անձ ում կողմից հակադրապինգային կանոնների խախտումը հաստատվել է Կենտրոնի կողմից նշանակված ժամկետում, չի բողոքարկել որոշումը, ապա համարվում է որ նա համաձայն է Կենտրոնի ընդունած որոշման և նրա հետևանքների հետ:

**7.10.3** Այն դեպքում, երբ կիրառվում են 7.10.1 և 7.10.2 կետերը նախնական լսումների անհրաժեշտություն չկա: Կենտրոնը պետք է անմիջապես ընդունի գրավոր որոշում, որը հաստատում է Կանոնների խախտումը և որակագրկման բոլոր հիմքերը, անգամ եթե չի նշանակվել տվյալ հոդվածով նախատեսված պատժի առավելագույն չափը: Կենտրոնը պետք է ուղարկի որոշման կրկնօրինակները այլ հակադրապինգային կազմակերպություններին, որոնք համաձայն 13.2.3 կետի ունեն բողոքարկելու իրավունք և հրապարակի որոշումը համաձայն 14.3.2 կետի:

## **7.11. Ծանուցում դրապինգ ստուգման արդյունքների վերլուծության ընթացքում կայացրած որոշման մասին**

Ցանկացած դեպքում, երբ Կենտրոնը հայտարարում է հակադրապինգային Կանոնների հնարավոր խախտման մասին կամ չեղյալ է համարում հակադրապինգային կանոնների խախտման մեղադրանքը կամ նշանակում է ժամանակավոր որակազրկում կամ համաձայնեցնում է մարզիկի կամ այլ անձի հետ առանց լսումների պատժամիջոցների նշանակման գործընթացը, Կենտրոնը պետք է ըստ 14.2.1 կետի տեղյակ պահի այլ Հակադրապինգային կազմակերպություններին, որոնք ունեն բողոքարկելու իրավունք համաձայն 13.2.կետի:

## **7.12 Մարզական կարիերայի ավարտ**

Եթե մարզիկը կամ այլ անձը հեռանում են սպորտից այն ժամանակ, երբ տեղի է ունենում դրապինգ ստուգման արդյունքների վերլուծություն, Կենտրոնը իրավունք ունի ավարտելու արդյունքների վերլուծություն գործընթացը: Եթե մարզիկը կամ այլ անձը հեռացել են սպորտից մինչ դրապինգ ստուգման արդյունքների վերլուծության գործընթացի սկիզբը, ապա Կենտրոնը իրավասու է կատարել արդյունքների վերլուծություն մարզիկի կամ այլ անձի կողմից հակադրապինգային կանոնների խախտման վերաբերյալ:

*[Մեկնաբանություն 7.12 կետի վերջաբերյալ: Մարզիկի կամ այլ անձի վարքը, մինչ նրանց մուտքը Հակադրապինգային կազմակերպության իրավասության տակ չի դիտարկվելու որպես հակադրապինգային կանոնների խախտում, բայց կարող են ունենալ օրինական հիմք մարզիկին կամ այլ անձին մարզական կազմակերպության անդամակցությունից զրկելու:]*

## **ՀՈՂՎԱԾ 8. ԱՐԴԱՐ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ**

### **8.1 Լսումներ Կենտրոնի կողմից դրապինգ ստուգման արդյունքների վերլուծությունից հետո**

**8.1.1** Կենտրոնը նշանակում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկված են՝ Նախագահ և երկու տեղակալներ, որոնք պետք է լինեն գործող իրավաբաններ, առնվազն հինգ տարի աշխատանքային փորձով: Երեք բժիշկ, որոնք պետք է ունենան առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ և երեք լրացուցիչ անդամ, որոնք մարզական ղեկավար կամ նախկին մարզիկներ են և կլինեն անաչառ ու անկողմնակալ: Խմբի ցանկացած անդամ կաշխատի չորս տարի: Հրաժարականի կամ մահվան դեպքում Կենտրոնը ազատված հաստիքի փոխարեն պետք է նշանակի այլ անձ:

**8.1.2** Երբ Կենտրոնը մարզիկին կամ այլ անձին ուղարկում է ծանուցում հաստատելով հակադրապինգային կանոնների խախտումը և մարզիկը կամ այլ անձ չի հրաժարվում լուսմներից, ապա համաձայն 7.10.1 կամ 7.10.2 կետերի պետք է կատարվեն լուսմներ և կայացվի որոշում: Նախագահը նշանակում է խմբի մեկ կամ ավելի անդամների (որում է կարող է ընդգրկվել նախագահը) գործի լուսմների և որոշման կայացման համար: Նշանակված անդամները չեն կարող նախկինում առնչություն ունենալ քննարկվող գործի հետ: Ցանկացած անդամ, որը նշանակվում է որևէ գործի լուսմներում պետք է լինի անկողմնակալ ցանկացած կողմի նկատմամբ:

## **8.2 Լուսմների անցկացման ընթացակարգը**

**8.2.1** Լուսմները պետք է նախատեսվեն և անցկացվեն իսկալիտ ժամանակահատվածում: Մարզական միջոցառման հետ կապված լուսմները, որոնք գտնվում են սույն Կանոնների իրավասության տակ կարող են կատարվել արագացված կարգով ըստ լուսմները իրականացնող հանձնաժողովի կանոնարգի:

*[Մեկնաբանություն 8.2.1 կետի վերաբերյալ: Օրինակ լուսմները կարող են կատարվել արագացված կարգով նախքան խոշոր մարզական միջոցառման սկիզբը, երբ պետք է որոշում կայացնել մարզիկի մրցումներին մասնակցության վերաբերյալ կամ մարզական միջոցառման ժամանակ մրցումները շարունակելու հետ կապված:]*

**8.2.2** Լուսմներ իրականացնող խումբը պետք է մշակի լուսմների կանոնակարգը:

**8.2.3** ՀՀԳ-ն և մարզիկի կամ այլ անձի ազգային ֆեդերացիան կարող է ներկա լինել լուսմներին դիտորդի դերում: Կենտրոնը ցանկացած դեպքում պետք է տեղեկացնի ՀՀԳ-ին գործերի լուսմների և կայացրած որոշումների վերաբերյալ:

**8.2.4** Լուսմները ցանկացած ժամանակ պետք է լինեն արդար, անկողմնակալ բոլոր անձանց նկատմամբ:

## **8.3 Լուսմների ընթացքում կայացրած որոշումները**

**8.3.1** Լուսմների ընթացքում կայացրած որոշումը պետք է լինի գրավոր տեսքով: Որոշումները պետք է լինեն ստորագրված և ներառեն որոշման կայացման ամսաթիվը, քվեարկության արդյուքները (միաձայն կամ մեծամասնությամբ),

որակագրկման տևողությունը, կայացրած որոշման բոլոր պատճառները, այդ թվում, եթե կիրառվել է արդարացում, և երբ չի կիրառվել մաքսիմալ պատիժը:

**8.3.2** Լսումների ընթացքում կայացրած որոշման վերաբերյալ կենտրոնը պետք է ծանուցի մարզիկին կամ այլ անձին, մարզական ֆեդերացիային և հակադոպինգային կազմակերպություններին որոնք ունեն բողոքարկելու իրավունք համաձայն 13.2.3 կետի:

**8.3.3** Որոշումը կարող է բողոքարկվել համաձայն 13 հոդվածի: Եթե որոշումը չի բողոքարկվում, ապա

ա) հակադոպինգային կանոնների խախտման մասին որոշումը հրապարակվում է հանրությանը համաձայն 14.3.2 կետի:

բ) եթե որոշում է կայացվել, որ կանոնների խախտում տեղի չի ունեցել, ապա որոշումը հրապարակվում է հանրության համար միայն մարզիկի կամ այլ անձի, որը հանդիսանում է որոշման սուբյեկտ համաձայնության դեպքում: Կենտրոնը պետք է գտնի խելամիտ ուղիներ այդ թույլտվությունը ստանալու համար: Այն սկզբունքները, որ նշված են 14.3.6 կետում կիրառելի են միայն անչափահասների դեպքում:

#### **8.4 Լսումների առանձին դեպքեր կապված ՄԱԴ-ի հետ**

Առանձին դեպքերը, որոնք կապված են կանոնները խախտած միջազգային մակարդակի մարզիկի հետ, Կենտրոնի կամ այլ հակադոպինգային կազմակերպության, որը ունի բողոքարկելու իրավունք համաձայնությամբ կարող են միանգամից ուղղվել ՄԱԴ, առանց նախնական լսումներ իրականացնելու:

*[Մեկնաբանություն 8.4 կետի վերաբերյալ: Եթե բոլոր կողմերը բավարարված են, որ իրենց շահերը կպաշտպանվեն լսումների ժամանակ, անհրժեշտություն չկա կատարել լրացուցիչ ծախսեր երկու լսում անցկացնելու համար: Հակադոպինգային կազմակերպությունը, որը ցանկանում է մասնակցել ՄԱԴ-ի լսումներին որպես շահագրգիռ կողմ կամ դիտորդ կարող է դիմել պահանջով և ստանալ թույլտվություն առանձին լսումներին մասնակցելու համար:]*

### **ՀՈՒԿԱԾ 9. ՈՐԱԿԱԶՐԿՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԶՆԵՐՈՒՄ**

Կանոնների խախտումը անհատական մարզաձևերում բերում է այդ մրցումների ընթացքում մարզիկի ցույց տված արդյունքների զրոցմանը բոլոր դրանից բխող հետևանքներով, այդ թվում նա զրկվում է նվաճած միավորներից, տեղերից, մեդալներից և գավաթներից:

*[Մեկնաբանություն 9-րդ հոդվածի վերաբերյալ: Թիմային մարզաձևերում ցանկացած անհատական մրցանակ կզրոյացվի: Թիմի արդյունքների հանդեպ*



*պատժամիջոցները կիրառվում են համաձայն 11-րդ հոդվածի: Այն մարզաձևերը, որոնք անհատական չեն, սակայն կա թիմային պարզնատրում, և որում մեկ կամ ավելի մարզիկ խախտել են հակադրայինգային կանոնները, պատժամիջոցները կկիրառվեն համաձայն Միջազգային ֆեդերացիայի գործող կանոնների:*

## **ՀՈՂՎԱԾ 10. ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԶԵՎԵՐՈՒՄ**

**10.1** Հակադրայինգային կանոնների խախտման հետևանքով մարզական իրադարձության ընթացքում գրանցված արդյունքերի զրոյացում

Կանոնների խախտումը, որը տեղի է ունեցել մարզական իրադարձության ընթացքում կամ կապ ունի այդ իրադարձության հետ, կարող է կազմկոմիտեի որոշմամբ առաջ բերել Կանոնները խախտած մարզիկի բոլոր անհատական արդյունքների զրոյացման՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, այդ թվում՝ նվաճած միավորների տեղերի, մեդալների և մրցանակների առգրավման, բացառությամբ՝ 10.1.1. կետով նախատեսված դեպքերի: Արդյունքների զրոյացման մասին որոշում կայացնելիս հաշվի են առնվում կանոնների խախտման լրջությունը, ինչպես նաև տեղեկատվությունը այն մասին, թե մրցումների այլ մարզաձևերում նրա մասնակցելուց հետո իրականացված դրայինգ ստուգման արդյունքները բացասական են եղել, թե ոչ:

*[Մեկնաբանություն 10.1 կետի վերաբերյալ: Եթե 9-րդ հոդվածի համաձայն մրցումների ժամանակ մարզիկի նմուշում հայտնաբերվում է արգելված նյութ, ապա նրա ցույց տված արդյունքները մրցումների բոլոր մնացած ձևերում նույնպես կարող են զրոյացվել:]*

**10.1.1** Եթե մարզիկը ապացուցում է, որ կանոնների խախտումը տեղի է ունեցել ոչ իր մեղքով կամ անփութության պատճառով, ապա նրա՝ այլ մրցումներում ցույց տված արդյունքները չպետք է զրոյացվեն, եթե միայն կանոնների տվյալ խախտումը չի ազդել մարզիկի՝ նախորդ մրցումներում ցույց տված արդյունքների վրա:

**10.2** Որակազրկում արգելված նյութերի կամ մեթոդների առկայության, օգտագործման, տիրապետման կամ դրա փորձի համար:

Մարզիկի կողմից արգելված նյութի կամ արգելված մեթոդի օգտագործումը կամ օգտագործման փորձը, 2.1. 2.2 և 2.6 կետերում նշված խախտումների համար որակազրկման ժամկետը պետք է լինի հետևյալը, եթե առկա չեն 10.4. և 10.5. կամ 10.6. կետերում նախատեսված որակազրկման ժամկետը զրոյացնող կամ նվազեցնող հանգամանքներ:

**10.2.1** Որակազրկման ժամկետը կկազմի չորս տարի հետևյալ դեպքերում

**10.2.1.1** Հակադոպինգային կանոնների խախտումները կապված չեն Հատուկ նյութերի օգտագործման հետ և մարզիկը կամ այլ անձը չի կարող ապացուցել, որ այդ նյութի օգտագործումը չի եղել կանխամտածված:

**10.2.1.2** Հակադոպինգային կանոնների խախտումները կապված են Հատուկ նյութերի օգտագործման հետ և Կենտրոնը կարող ապացուցել, որ այդ նյութի օգտագործումը եղել է կանխամտածված:

**10.2.2** 10.2.1 կետով չնկարագրված դեպքերում որակազրկումը պետք է կազմի երկու տարի:

**10.2.3** 10.2 և 10.3 կետերում օգտագործված /կանխամտածված/ տերմինը նախատեսված է այն մարզիկների համար, որոնք հակված են ստել հակադոպինգային կազմեկերպություններին: Այս տերմինը ենթադրում է, որ մարզիկը կամ այլ անձը գիտակցաբար կատարում է գործողություն, որը հանդիսանում է կամ կարող է հանդիսանալ կանխամտածված Կանոնների խախտում: Կանոնների խախտումը, որ հիմնված է հատուկ նյութերի հայտնաբերման վրա, որոնք արգելված են միայն մրցումների ժամանակ, և չի կարող բարելավել մարզիկի արդյուքները համարվում է ոչ կանխամտածված Կանոնների խախտում եթե մարզիկը ապացուցում է որ այն օգտագործվել է արտամրցումային ժամանակաշրջանում:

### **10.3 Որակազրկում հակադոպինգային կանոնների այլ խախտումների համար**

Որակազրկման ժամկետները Հակադոպինգային կանոնների այլ խախտումների համար, 10.2. կետում նշված պատժամիջոցներից բացի և, եթե չեն կիրառվում 10.5 կամ 10.6 կետերը, պետք է լինի հետևյալը՝

**10.3.1** 2.3 կամ 2.5 կետերում նշված խախտումների համար որակազրկման ժամկետը պետք է կազմի չորս տարի, բացառությամբ այն դեպքերի, երբ դոպինգ ստուգման չներկայանալու դեպքում մարզիկը կապացուցի, որ նա դա արել է ոչ կանխամտածված (ինչպես պարզաբանվում է 10.2.3 կետում): Եթե այդպիսի ապացույց կա, ապա որակազրկման ժամկետը պետք է կազմի երկու տարի:

**10.3.2** 2.4 կետում բերված խախտումների համար նախատեսված պատժամիջոցը պետք է կազմի երկու տարի, մինչև մեկ տարի կրճատման հնարավորությունով: Այս հոդվածով նախատեսված

կրճատումը հասանելի չէ այն մարզիկների համար, որոնց նկատմամբ կան լուրջ կասկածներ, որ վերջին պահին գնտվելու վայրի մասին տվյալների փոփոխությունը կատարված է դոպինգ ստուգումից փախուստի պատճառով:

**10.3.3** 2.7 կամ 2.8 կետում բերված խախտումների համար նախատեսված է որակագրկում չորսը տարուց մինչև ցմահ որակագրկում՝ կախված խախտման լրջությունից: 2.7 կամ 2.8 կետում բերված խախտումների հետ կապված, որոնք կատարված են անչափահասների նկատմամբ պետք է համարվեն առավել վտանգավոր խախտումներ և եթե դրանք չեն վերաբերվում հատուկ նյութերին ու կատարված են մարզիկին աջակցող անձնակազմի կողմից, ապա անձնակազմը պետք է որակագրկվի ցմահ: Բացի այդ 2.7 կամ 2.8 կետում բերված այդպիսի լուրջ խախտումները, որոնք կարող են նաև համարվել սպորտին չվերաբերվող քրեական օրենքների խախտումներ, պետք է տեղեկացնել քրեական ու դատական մարմիններին:

*[Մեկնաբանություն 10.3.3 կետի վերաբերյալ: Այն անձինք, որոնք դոպինգային որոյտի մեջ են ներգրավում անչափահասներին, պետք է պատժվեն ավելի խիստ, քան մարզիկները, որոնց տեստավորման արդյունքները եղել են դրական: Քանի որ սպորտային կազմակերպությունների իրավունքները սովորաբար սահմանափակվում են մարզիկին աջակցող անձնակազմին անդամակցության, ակրեդիտացիայի կամ որևէ արտոնությունների գրկումով անձնակազմի կողմից վերնշված խախտումների մասին տեղեկությունները կոմպետենտ մարմիններին փոխանցելը հանդիսանում է դոպինգի դեմ պայքարի կարևոր քայլ:]*

**10.3.4** 2.9 կետում բերված խախտումների համար նախատեսված է որակագրկում առնվազն երկու տարի և առավելագույնը չորս տարի ժամկետով ելնելով խախտման լրջությունից:

**10.3.5** 2.10 կետում բերված խախտումների համար նախատեսված է երկու տարի որակագրկում մինչև մեկ տարի կրճատման հնարավորությունով՝ կախված նրանից, թե որքան լուրջ է եղել մարզիկի կամ այլ անձի մեղքը կամ գործի այլ հանգամանքներից:

*[Մեկնաբանություն 10.3.5 վերաբերյալ: Այն դեպքերում, երբ 2.10 կետում նշված այլ անձը հանդիսանում է իրավաբանական անձ, այդպիսի կազմակերպությունների վերաբերյալ պետք է կիրառվեն 12 հոդվածում բերված կարգապահական պատժամիջոցները:]*

**10.4** Որակագրկման ժամկետի կրճատումը մարզիկի մեղքի բացակայության կամ անփութության դեպքերում

Եթե մարզիկը կամ այլ անձը կկարողանան ապացուցել, որ կանոնների խախտումը տեղի է ունեցել ոչ իր մեղքով կամ իր անփութության պատճառով, ապա որակագրկման ժամկետը պետք է կրճատվի:

*[Մեկնաբանություն 10.4 կետի վերաբերյալ: Սույն կետը և կետ 10.5.2 կիրառվում են որակագրկում նշանակելու ժամանակ, դրանք չեն օգտագործվում կանոնների խախտման փաստ հաստատելու համար: Դրանք օգտագործվում են միան արտառոց դեպքերում, օրինակ՝ երբ մարզիկը կարողացել է ապացուցել, որ չնայած նրան, որ ինքը պահապանել է բոլոր կանոնները տեղի է ունեցել սաբոտաժ նրա հակառակորդի կողմից: Որակագրկման ժամկետի կրճատումը մարզիկի մեղքի կամ անփութության բացակայության հիման վրա գործում է հետևյալ դեպքերում՝*

*(ա) փորձաքննության դրական արդյունքը եղել է վիտամինային նյութի կան սննդային հավելումի օգտագործման հետևանքով, որոնց բաղադրությունը չի համապատասխանել տուփի վրա նշված պիտակին (մարզիկները, համաձայն կետ 2.1.1 կրում են պատասխատանվություն իրեն կողմից օգտագործվող բոլոր նյութերի համար), իսկ մարզիկը զգուշացված է եղել տվյալ սննդային հավելումի ադոտովածության մասին:*

*(բ) մարզիկի անձնական բժշկի կան մարզչի կողմից արգելված նյութի նշանակումը առանց մարզիկի հետ խորհրդակցելու (մարզիկները պատասխանատվություն են կրում իրեն սպասարկող բժշկական անձնակազմի ընտրության համար և պետք է տեղեկացնեն այդ անձնակազմին արգելված նյութերի օգտագործման պատասխանատվության մասին); և*

*(գ) արգելված նյութ է պարունակել մարզիկի կողմից օգտագործած խմիչքը կամ սնունդը, որը առաջարկվել է մարզիկին իր ամուսնու/կնոջ, մարզչի կամ այլ անձի (մարզիկները կրում են պատասխանատվություն իրենց սննդի կամ խմիչքի համար, և այն անձերի վարքի համար, որոնք պատրաստում են նրանց համար կերակուր և խմիչք). Մակայն ելնելով յուրաքանչյուր դեպքի հանգամանքներից և մարզիկի կողմից ներկայացված ապացույցներից կարող է իրականացվել պատժամիջոցի նվազեցում , եթե ապացուցվում է չնչին մեղքի կամ անփութության հիման վրա համաձայն 10.5 կետի:]*

## **10.5 Որակագրկման ժամկետի կրճատումը մարզիկի ոչ նշանակալի մեղքի կամ անփութության դեպքերում**

**10.5.1.** 2.1, 2.2 կամ 2.6 կետերում նշված Պատժամիջոցների կրճատումը հատուկ նյութերի կամ ադոտոված ապրանքի օգտագործման դեպքում

### **10.5.1.1 Հատուկ նյութեր**

Այն դեպքերում, երբ կանոնների խախտումը ընդգրկում է հատուկ նյութերի օգտագործումը և մարզիկը կամ այլ անձը կարող է ապացուցել իր ոչ նշանակալի մեղքը կամ անփութությունը որակագրկման ժամկետը պետք է կազմի առնվազն

զգուշացում առանց որակագրկման և առավելագույնը երկու տարի կախված մարզիկի կամ այլ անձի մեղավորության աստիճանից:

#### 10.5.1.2 Աղտոտված ապրանքներ

Այն դեպքերում, երբ մարզիկը կամ այլ անձը կկարողանան ապացուցել իրենց ոչ նշանակալի մեղքը կամ անփութությունը և այն, որ արգելված նյութը պարունակվել է իր կողմից օգտագործած աղտոտված մթերքում կամ ապրանքում որակագրկման ժամկետը պետք է կազմի առնվազն զգուշացում առանց որակագրկման և առանելագյունը երկու տարի կախված մարզիկի կամ այլ անձի մեղավորության աստիճանից:

*[Մեկնաբանություն 10.5.1.2 կետի վերաբերյալ: Մարզիկի մեղքի աստիճանի գնահատման ժամանակ մարզիկի օգտին կվկայի օրինակ այն փաստը, որ մարզիկը նշել է դրայինգ ստուգման ձևում այն դեղը կամ սննդային հավելումը, որոնք հետագայում ճանաչվել են աղտոտված:]*

### **10.5.2 Ոչ նշանակալի մեղքի կամ անփութության իրավիճակների կիրառումը կետ 10.5.1-ում չնկարագրված դեպքերում**

Եթե մարզիկը կամ այլ անձը կարող են ապացուցել, որ բացի 10.5.1 կետում նշված դեպքերից, իր ոչ նշանակալի մեղքը կամ անփութությունը, ապա համաձայն 10.6 կետի կատարված պատժամիջոցի նվազեցման կամ վերացման պայմաններում, այլ դեպքերում կիրառվող կրճատումը կախված է մարզիկի կամ այլ անձի մեղքի չափից, սակայն կրճատվող ժամանակահատվածը չի կարող լինել նախնական ժամկետի կեսից պակաս: Եթե պատժամիջոցը եղել է ցմահ ապա նվազեցված որակագրկումը ժամկետը չի կարող լինել 8 (ութ) տարուց պակաս:

*[Մեկնաբանություն 10.5.1. և 10.5.2. կետերի վերաբերյալ: Կետ 10.5.2 կարող է կիրառվել կանոնների ցանկացած խախտման ժամանակ, բացառությամբ, այն խախտումների, երբ միտումը հանդիսանում է խախտման անբաժան մասը օրինակ (2.5, 2.7, 2.8 կամ 2.9 կետերում նշված խախտումները) կամ այն խախտումները, որոնցում պատժամիջոցի ժամանակահատվածը որոշվում է ըստ մարզիկի կամ այլ անձի մեղքի չափի: ]*

### **10.6 Որակագրկման ժամկետի կամ որակագրկման հետևանքների վերացումը կամ նվազեցումը այլ պատճառներով**

10.6.1 Կանոնների խախտումների հայտնաբերման կամ բացահայտման գործում էական աջակցություն

10.6.1.1 Կենտրոնը մինչև իր վերջնական որոշումը կայացնելը կարող է առանձին դեպքերում, 13-րդ հոդվածի համաձայն, մինչև բողոք ներկայացնելու ժամկետի լրանալը ժամանակավոր նվազեցնի կիրառված որակագրկման

Ժամկետի մի մասը, եթե մարզիկը կամ այլ անձ ցուցաբերել են էական աջակցություն հակադոպինգային կազմակերպությանը, իրավապահ կամ մասնագիտական կարգապահական մարմնին, ինչի արդյունքում

(ա) բացահայտվել կամ հայտնաբերվել է հակադոպինգային կանոնների խախտում այլ անձի կողմից:

(բ) Եթե իրավապահ կամ կարգապահական մարմինը բացահայտել կամ հայտնաբերել է քրեական հանցանք կամ կարգապահական կանոնների խախտում այլ անձի կողմից և մարզիկի կամ այլ անձի կողմից տրամադրված տեղեկատվությունը հասանելի է դարձել Կենտրոնին:

Ըստ 13-րդ հոդվածի՝ բողոքարկման հանձնախմբի վերջնական որոշման կամ բողոքարկման ժամկետի լրանալուց հետո Կենտրոնը կարող է միայն կարճել որակագրկման ժամկետի մի մասը՝ իր որոշումը համաձայնեցնելով ՀՀԳ-ի և համապատասխան միջազգային ֆեդերացիայի հետ:

Այն չափը, որով կարող է կարճվել կիրառված որակագրկման ժամկետը կախված է մարզիկին կամ այլ անձին մեղսագրված հակադոպինգային կանոնների խախտման լրջությունից և մարզիկի կամ այլ անձի կողմից սպորտում դոպինգի վերացման գործում ներդրվող ջանքերին ուղղված աջակցության կարևորությունից:

Կիրառված որակագրկման ժամկետի ավելի քան երեք քառորդը չի կարող կարճվել:

Եթե որակագրկման նշանակված ժամկետը ցմահ է, ապա այս դրույթի համաձայն չկարճված որակագրկման ժամկետը պետք է լինի ոչ պակաս, քան 8 (ութ) տարի:

Եթե մարզիկը կամ այլ անձը ի վերջո հրաժարվում են համագործակցել և տրամադրել հուսալի տեղեկություններ սպասված էական աջակցության շրջանակներում ինչի հիման վրա կարճվել է կիրառված որակագրկման ժամկետը կենտրոնը կարող է վերականգնել նախնական պատժամիջոցը: Եթե Կենտրոնը հետագայում վերականգնում է կամ չի վերականգնում որակագրկման կարճված ժամկետի մի մասը՝ ապա մարզիկը կամ այլ անձը կարող է բողոքարկել հոդվածի 13-ի համաձայն:

**10.6.1.2** 10.6.1.2 Կենտրոնի, կամ Կանոնների խախտման մեջ մեղադրված մարզիկի կամ այլ անձի պահանջով ՀՀԳ-ն, համաձայն 13-րդ հոդվածի, կարող է իր հայեցողությամբ

նվազեցնել որակագրկման ժամկետը և նրա հետևանքները դրայինգ ստուգման արդյուքների մշակման ցանկացած փուլում և նույնիսկ բողոքարկման վերաբերյալ Կենտրոնի վերջնական որոշումը հաստատելուց հետո այն Մարզիկներին կամ այլ անձաց նկատմամբ, որոնք աջակցել են Հակադոպինգային կազմակերպությանը, նրանց հետագա խրախուսանքի նպատակով:

Բացառիկ դեպքերում ՀՀԳ-ն ի պատասխան ցուցաբերած էական աջակցությանը կարող համաձայնվել մինչև անգամ պատժամիջոց չկիրառելու և մարզիկի կողմից նվաճաց մրացանակային գումարը չվերադարձնելու կամ տուգանքը չմուծելու որոշման հետ: Չնայծ 13 հոդվածի դրութներին ՀՀԳ-ի որոշումները վերնշվածի վերաբերյալ չի կարող բողոքարկվել որևէ այլ հակադոպինգային կազմակերպություն.

10.6.1.3 Եթե Կենտրոնը կարճում է որակագրկման ժամկետի որևէ մասը հաշվի առնելով էական աջակցություն փաստը, ապա այլ Հակադոպինգային Կազմակերպություններին, որոնք ունեն բողոքարկելու իրավունք ըստ 13.2.3 կետի պետք է ուղարկվի ծանուցում իրականացված որոշման մասին համաձայն 14.2 հոդվածի: Առանձին դեպքերում ՀՀԳ-ն կարող է թույլ տալ Կենտրոնին կնքել գաղտնիության համաձայնագիր, որը կնախատեսի տվյալների գաղտնիության ժամանակավոր պահպանում, եթե ՀՀԳ-ն կհամարի որ դա նպաստում է սպորտում դոպինգի օգտագործման դեմ պայքարի շահերին:

*[Մեկնաբանություն 10.6.1 կետի վերաբերյալ: Մարզիկների և մարզիկներին աջակցող անձնակազմի և այլ անձերի, որոնք ընդունում են իրենց սխալները և ցանկանում են օգնել բացահայտել այլ խախտումներ, ինչ կարևոր է մաքուր սպորտի համար, համագործակցությունը հակադոպինգային կազմակերպությունների հետ ըստ Օրենսգրքի հանդիսանում միայն հիմունքը որակագրկման ժամկետը կարճելու համար:]*

### **10.6.2 Հակադոպինգային կանոնների խախտման ընդունումը այլ ապացույցի բացակայության դեպքում**

Երբ մարզիկը կամ այլ անձ կամավոր խոստովանում է Կանոնների խախտումը մինչ նմուշառման մասին ծանուցում ստանալը, ինչը կարող էր հաստատել հակադոպինգային կանոնների խախտումը (ոչ թե 2.1 կետով նախատեսված կանոնների խախտման դեպքում՝ այլ ըստ 7-րդ հոդվածի ընդունված խախտման առաջին ծանուցումը ստանալը), և այդ խոստովանությունը հանդիսանում է

խախտման միակ վստահելի ապացույցը, ապա որակագրկման ժամկետը կարող է նվազեցվել, բայց ոչ պակաս, քան մինչև որակագրկման ժամկետի չափի կետը:

*[Մեկնաբանություն 10.6.2 կետի վերաբերյալ: Նախատեսվում է սույն կետը կիրառել, երբ մարզիկը կամ այլ անձ խոստովանում է հակադրապինգային կանոնների խախտման փաստը այնպիսի հանգամանքներում, երբ ոչ մի հակադրապինգային կազմակերպություն չէր կարող ստույգ իմանալ այդ մասին: Սույն հոդվածը նախատեսված չէ կիրառել այնպիսի հանգամանքներում, երբ խոստովանությունն արվում է այն բանից հետո, երբ մարզիկը կամ այլ անձ գիտակցում են, որ կարող են որակագրկվել: Որակագրկման ժամկետը պետք է որոշվի ելնելով մարզիկի կամ այլ անձի կողմից կանոնների խախտման բացահայտման հնարավորությունից, նունիսկ եթե նրանք այդ մասին կամավոր չեն հայտարարել: ]*

**10.6.3** Մարզիկը կամ այլ անձ կարող է ապացուցել, որ ունի պատժի նվազեցման իրավունք սույն հոդվածի մեկից ավելի դրույթների համաձայն 10.6.3 , 10.2.1 կամ 10.3.1 կետերի Կանոնների խախտման համար նախատեսված պատժամիջոցի վերաբերյալ մեղադրանք ներկայացնելուց հետո պատեհաժամ խոստովանում: Մարզիկը կամ այլ անձ, որի նկատմանը կիրառվել է չորս տարվա որակագրկման պատժամիջոց համաձայն 10.2.1 կամ 10.3.1 կետի (Դոպինգ ստուգումից խուսափելը կամ հրաժարվելը կամ նմուշների կեղծում), որը Կանոնների խախտման համար նախատեսված պատժամիջոցի վերաբերյալ Կենտրոնի կողմից մեղադրանք ներկայացնելուց հետո պատեհաժամ խոստովանում է իր մեղքը, ինչպես նաև ՀՀԳ-ի և Կենտրոնի համաձայնությունից հետո կարող է ստանալ պատժամիջոցի կարճում մինչև երկու տարի կախված խախտման լրջությունից և մարզիկի կամ այլ անձի մեղքի չափից:

**10.6.4 Պատժամիջոցի կարճումը մի քանի հիմունքների հիման վրա**

Եթե մարզիկը կամ այլ անձը ապացուցում է որ նա ունի հիմքեր պատժամիջոցի կարճման համար համաձայն 10.4, 10.5 կամ 10.6 կետերում բերված դրույթների, ապա այլ դեպքերում մինչև 10.6 կետում նկարագրած ցանկացած նվազեցման կամ պատժամիջոցը չեղյալ համարելու որոշումը ընդունելը պատժամիջոցի ժամկետի նվազեցումը պետք է իրականացվի համաձայն 10.2, 10.3, 10.4, և 10.5 կետերի: Եթե մարզիկը կամ այլ անձը ապացուցում է որ նա ունի հիմքեր պատժամիջոցի կարճման համար համաձայն 10.6 կետի ապա պատժամիջոցը կարող է չեղյալ համարվել կամ նվազեցվել, բայց ոչ ավելի քան մեկ քարոքով:

*[Մեկնաբանություն 10.6.4 կետի վերաբերյալ: Համապատասխան պատժամիջոցը որոշվում է չորս փուլով: Առաջին փուլում լսումներ անցկացնող հանձնաժողովը որոշում է, թե 10.2, 10.3, 10.4, կամ 10.5 կետերից որ մեկը պետք է կիրառվի կանոնների տվյալ խախտման դեպքում: Երկրորդ փուլում եթե հիմնական*



*պատժամիջոցը ընգրկում իր մեջ տարբեր այլ պատժամիջոցներ հանձնաժողովը պետք է որոշի, թե որ պատժամիջոցը պետք է ընտրվի կախված մարզիկի կամ այլ անձի մեղքի աստիճանից: Երրորդ փուլում լսումներ անցկացնող հանձնաժողովը որոշում է թե կան արդյոք հիմքեր պատժամիջոցը չեղյալ համարելու, դադարեցնելու կամ նվազեցնելու համար (10.6 կետ): Եզրափակիչ փուլում հանձնաժողովը որոշում է որակագրկումը սկսելու ամսաթիվը համաձայն 10.11 կետի: Հոդված 10-ի կիրառման առանձին օրինակները բերված են Հավելված 2-ում:]*

## **10.7 Բազմակի խախտումներ**

**10.7.1** Մարզիկի կամ այլ անձի կանոնների երկրորդ խախտման համար պետք է սահմանվի, ելներով, թե որ պատժամիջոցն է ավելի մեծ

- ա) Վեց ամիս;
- բ) Առաջին խախտման պատժամիջոցի ժամկետի կեսը, առանց 10.6 կետում նշված պատժամիջոցի ժամկետի որևէ նվազեցման հնարավորության, կամ
- գ) Առաջին խախտման համար կիրառված պատժամիջոցի ժամկետի կրկնակին, եթե այն կիրառվել է առանց 10.6 կետում նշված ժամկետի հնարավոր նվազեցման իրավունքի

*Վերընշված որակագրկման ժամկետները կարող են հետագայում կարճվել համաձայն 10.6. կետի*

**10.7.2** Եթե տեղի է ունեցել երրորդ խախտումը նշանակվում է ցմահ որակագրկում, բացառությամբ այն դեպքերի, երբ երրորդ խախտման ժամանակ բացահայտվում են փաստեր, որոնք թույլ են տալիս համաձայն 10.4 կամ 10.5 կետի կարճել կամ նվազեցնել որակագրկման ժամկետը կամ խախտումը համապատասխանում է 2.4 կետում նշված խախտմանը: Նշված դեպքերում ժամկետը պետք է կազմի ութ տարուց մինչև ցմահ որակագրկում:

**10.7.3** Մարզիկի կամ այլ անձի կողմից կատարված խախտումները, որոնցում հաստատված են մարզիկի մեղքի կամ անփութության բացակայությունը չեն կարող համարվել նախկին խախտում այս հոդվածում բերված դեպքերի համար:

**10.7.4** Առանձին բազմակի խախտումների համար լրացուցիչ կանոնները:

**10.7.4.1** Պատժամիջոց նշանակելու ժամանակ 10.7 կետի համաձայն կանոնների խախտումը կհամարվի երկրորդ խախտում, միայն այն դեպքում, երբ Կենտրոնը կկարողանա ապացուցել, որ Մարզիկը կամ այլ անձը թույլ են տրվել երկրորդ խախտումը առաջին խախտման վերաբերյալ

ծանուցումից (հոդված 7) հետո կամ Կենտրոնի կողմից մարզիկին կամ այլ անձին ծանուցելու համար իրականացված ջանքերից հետո: Հակառակ դեպքում տեղի ունեցած խախտումը կհամարվի առաջին խախտում և կիրառվող պատժամիջոցը պետք է ընդգրկի երկու խախտման համար նախատեսված ամենախիստ որակագրկման ժամկետը:

**10.7.4.2** Եթե առաջին հակադոպինգային խախտման վերաբերյալ պատժամիջոց նշանակելուց հետո Կենտրոնը հայտնաբերում է փաստեր, որոնք բացահայտում են մարզիկի կամ այլ անձի կողմից Կանոնների խախտում, որը թույլ է տրվել առաջին հակադոպինգային խախտման վերաբերյալ ծանուցումից առաջ, ապա Կենտրոնը պետք է նշանակի լրացուցիչ պատժաչափ, ելնելով այն պատժաչափից, որը կնշանակվեր, եթե երկու խախտումների վերաբերյալ որոշումները կայացվեին միաժամանակ: Բոլոր մրցումների արդյունքները, որոնք վերաբերում են ավելի վաղ կատարված հակադոպինգային խախտմանը, չեղյալ կհամարվեն 10.8. կետի համաձայն:

#### **10.7.5 Տասնամյա որակագրկման ժամկետի ընթացքում հակադոպինգային կանոնների բազմակի խախտումներ**

10.7 կետում նպատակներից ելնելով՝ Կանոնների յուրաքանչյուր խախտում պետք է կատարվի միննույն տասնամյա ժամկետի ընթացքում, որպեսզի համարվի բազմակի խախտում

#### **10.8. Նմուշառման կամ հակադոպինգային կանոնների խախտման հետևանքով մրցման Արդյունքների չեղյալ համարելը**

Եթե մրցումների ժամանակ, մարզիկի նմուշում հայտնաբերում է դոպինգի օգտագործման փաստը, ապա բացի այդ մրցումների ընթացքում ցույց տված արդյունքների ավտոմատ զրոյացումից՝ (համաձայն 9-րդ հոդվածի), այդ մարզիկի բոլոր այն արդյունքները, որոնք նա ցուցադրել է նմուշառման օրվանից հետո, կամ կատարված Կանոնների այլ խախտման օրվանից հետո, ներառյալ ժամանակավոր որակագրկման կամ որակագրկման ժամկետի ընթացքում, պետք է զրոյացվեն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, այդ թվում՝ միավորների զրոյացում, մեդալների և մրցանակների առգրավում:

*[Մեկնաբանություն 10.8 կետի վերաբերյալ: Կանոնների ոչ մի կետ չի խոչնդոտում մաքուր Մարզիկներին կամ այլ անձանց, որոնք տուժել են կանոնները խախտած անձի կողմից, պահանջել փոխհատուցումներ նրանց պատճառած վնասի համար]:*

**10.9** ՄԱԴ-ի կողմից Առգրավված մրցանակի գումարի բաշխումը Հաստատված է ՄԱԴ-ի կողմից կատարված ծախսերի և Առգրավված մրցանակի գումարի բաշխման հետևյալ կարգ: Առաջին հերթին փոխհատուցվում են ՄԱԴ-ի ծախսերը, երկրորդ հերթին առգրավված մրցանակի գումարը պետք է բաշխվի մյուս մարզիկների միջև, եթե դա նախատեսված է միջազգային ֆեդերացիայի կանոններով և ի վերջո փոխհատուցվում են այն ծախսերը, որոնք կատարել է Կենտրոնը:

#### **10.10 Ֆինանսական հետևանքներ**

*Կենտրոնը կարող է նշանակել իր կողմից կատարված ծախսերի համապատասխան փոխհատուցում անկախ որակագրկման ժամկետից*

ա) պահանջել մարզիկին կամ այլ անձին փոխհատուցել բոլոր ծախսերը, որոնք կատարվել են դոպինգ ստուգման և արդյունքների մշակման ընթացքում և/կամ

բ) տուգանել մարզիկին կամ այլ անձին \$1500 ամերիկյան դոլարին համարժեք գումարի չափով, եթե նշանակվել է որակագրկման առավելագույն ժամկետը: Կենտրոնին Ֆինանսական ծախսերի փոխհատուցումը չի կարող լինել հիմք որակագրկման կամ այլ պատժամիջոցի, որը նախատեսված է ըստ այս Կանոնների և Օրենսգրքի, ժամկետի նվազեցման համար:

#### **10.11 Որակագրկման ժամկետի սկիզբը**

Բացառությամբ ստորև նախատեսված դեպքերի, որակագրկման ժամկետը սկսվում է Լսումների արդյունքում ընդունված՝ որակագրկում նախատեսող որոշման ուժի մեջ մտնելու օրվանից կամ եթե Լսումները չեն կայացել, որակագրկման ընդունման կամ նշանակման օրվանից: Ժամանակավոր հեռացման (լինի դա նշանակված, թե կամավոր ընդունված) ցանկացած ժամկետ պետք է հաշվառվի որակագրկման ընդհանուր ժամկետի մեջ:

##### **10.11.1 Ուշացումները, որոնցում չկա մարզիկի կամ այլ անձի մեղքը**

Եթե Լսումներ իրականացնելիս կամ դոպինգ ստուգման այլ փուլերում տեղի են ունեցել նշանակալի ուշացումներ, որոնցում չկա մարզիկի կամ այլ անձի մեղքը, ապա Կենտրոնը կարող է որակագրկման ժամկետը սկսել հաշվարկել ավելի վաղ ամսաթվից, իսկ ավելի կոնկրետ՝ նմուշառման օրվանից կամ հակադոպինգային կանոնների խախտման վերջին օրից: Սկսված այդ ամսաթվից մրցումների ընթացքում ցույց տված բոլոր արդյունքները կգրոյացվեն:

*[Մեկնաբանություն 10.11.1 կետի վերաբերյալ: Բացի 2.1 կետում նշված կանոնների խախտումներից, հակադոպինգային կազմակերպությանը կարող է*

*անհրաժեշտ լինել երկար ժամանակ կանոնների խախտումը հաստատող փաստերի հայտնաբերման և մշակման համար, լսումները իրականացնող հանձնախմբի համար հատկապես այն դեպքերում, երբ մարզիկը կամ այլ անձը ձեռնարկել է գործողություններ խախտման փաստը քողարկելու համար: Նշված հանգամանքներում հնարավորությունը, որը նախատեսում է 10.11.1 կետը չպետք է կիրառվի: ]*

### **10.11.2 . Ժամանակին արված խոստովանություն**

Եթե մարզիկը կամ այլ անձը խոստովանում է հակադրափնզային կանոնների խախտումը, Կենտրոնի կողմից ծանուցվելուց հետո և մինչ նրա հաջորդ մրցմանը մասնակցելը, ապա որակագրկման ժամկետը կարող է սկսվել նմուշառման օրվանից կամ հակադրափնզային կանոնների վերջին խախտման օրից: Յուրաքանչյուր դեպքում, սույն հոդվածի կիրառման ժամանակ մարզիկը կամ այլ անձը կրելու է որակագրկման ժամկետի առնվազն կեսը՝ սկսած նշանակված պատժաչափի՝ մարզիկի կողմից ընդունման պահից կամ Լսումների արդյունքում ընդունված պատժամիջոցի նշանակման որոշման ուժի մեջ մտնելու պահից կամ պատժամիջոցի այլ ձևով նշանակման պահից: Տվյալ գործընթացը չի կիրառվում այն դեպքերում, երբ որակագրկման ժամկետը արդեն նվազեցվել է համաձայն 10.6.3 կետի:

### **10.11.3 Ժամանակավոր հեռացման ժամանակահատվածի հաշվառումը**

10.11.3.1. Եթե նշանակվել է ժամանակավոր հեռացում, որը ընդունվել է մարզիկի կողմից, ապա մարզիկի որակագրկման հնարավոր ժամկետը՝ պետք է նվազեցվի՝ ընդհուպ մինչև ժամանակավոր հեռացման ժամկետը:

10.11.3.1 I Եթե նշանակվել է ժամանակավոր հեռացում, որը ընդունվել է մարզիկի կողմից ապա ժամանակավոր հեռացման ժամանակահատվածը պետք է ներառվի մարզիկի որակագրկման ժամկետի մեջ: Եթե հետագայում որևէ որակագրկման ժամկետի վերաբերյալ ներկայացվում է բողոքարկում, ապա մինչև բողոքարկման մարմնի վերջնական որոշումը հաստատելը անցած ժամանակահատվածը պետք է ներառվի որակագրկման ժամկետի մեջ:

10.11.3.2 Եթե մարզիկը, ժամանակավոր հեռացման որոշումը ընդունելու մասին Կենտրոնից գրավոր տեղեկատվություն ստանալուց հետո, կամավոր համաձայնվում է ժամանակավոր հեռացման հետ, և հրաժարվում մրցումներին մասնակցելուց, ապա այդ մարզիկի ժամանակավոր որակագրկման ժամկետը պետք է ներառվի որակագրկման ժամկետի մեջ:

Մարզիկի՝ ժամանակավոր հեռացման կամավոր ընդունման գրավոր կրկնօրինակը պետք է միանգամից տրամադրվի կողմերից յուրաքանչյուրին, ովքեր 14.1. կետի համաձայն իրավասու են ստանալու հակադրապինգային կանոնների հնարավոր խախտման վերաբերյալ ծանուցումը:

*[ Մեկնաբանություն 10.9.1 կետի վերաբերյալ: Մարզիկի կամավոր համաձայնությունը ժամանակավոր հեռացման հետ, չի հանդիսանում կանոնների խախտման փաստի խոստովանում և չի կարող հիմք հանդիսանալ նրա նկատմամբ որևէ պատժամիջոց կիրառելու համար: ]*

10.11.3.3 Որակազրկման ժամկետը, որը ուժի մեջ է եղել մինչև ժամանակավոր հեռացման կամ կամավոր ժամանակավոր հեռացման պահը, չի կարող նվազեցվել, անկախ այն հանգամանքից՝ մարզիկը ինքն է որոշել մրցմանը չմասնակցել, թե հեռացվել է իր թիմի կողմից:

10.11.3.4 Թիմին մարզաձևերում, որտեղ որակազրկմանը կարող է ենթարկվել թիմը, որակազրկման ժամկետը պետք է սկսվի լսումները իրականացնող մարմնի որակազրկման որոշումը ընդունած ամսաթվից, իսկ եթե լսումները չեն կայացել մարզիկի կողմից որակազրկման փաստ ընդունելու ամսաթվից: Ժամանակավոր հեռացման ժամանակահատվածը պետք է հաշվի առնվի ցանկացած որակազրկման ծամկետի որոշման Ժամանակ:

*[ Մեկնաբանություն 10.11 կետի վերաբերյալ: 10.11 կետը նախատեսում է, որ մարզիկին չվերաբերվող համգամանքների պատճարով տեղի ունեցած ուշացումները և Մարզիկի կողմից Ժամանակին արված խոստովանությունը հանդիսանում են միակ համգամանք, որը թույլ է տալիս հաշվարկել որակազրկման ժամկետը ավելի վաղ ամսաթվից, քան ընդունվել է որակազրկման մասին որոշումը: ]*

## **10.12 Մարզիկի կարգավիճակը որակազրկման ընթացքում**

### **10.12.1 Որակազրկման ընթացքում մասնակցության արգելքը**

Որակազրկված ճանաչված ոչ մի մարզիկ կամ այլ անձ չի կարող որակազրկման ամբողջ ընթացքում որևէ կարգավիճակով մասնակցել ցանկացած մրցման կամ այլ գործողության, որը գտնվում է ստորագրած կողմերի իրավասության տակ (բացառությամբ Կենտրոնի կամ ազգային ֆեդերացիայի կրթական կամ վերականգնողական ծրագրերի)՝ կամ Կենտրոնի և ազգային ֆեդերացիայի անդամ կազմակերպության կամ ակումբի, կամ որևէ պրոֆեսիոնալ լիգայի, կամ որևէ ազգային մակարդակի միջոցառում անցկացնող կազմակերպության կամ որևէ այլ մրցումների:

Չորս տարի ժամկետով որակագրկման ենթարկված մարզիկը կամ անձը, չորս տարվա որակագրկման ժամկետի ավարտից հետո կարող է մասնակցել տեղական սպորտային միջոցառումներին, բացի այն մարզաձևից, որում հակադոպինգային կանոնների խախտում թույլ տալու համար է որակագրկվել, սակայն այն պայմանով, որ տեղական սպորտային միջոցառումներին մարզիկին կամ այլ անձին ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի տալիս հնարավորություն միջազգային մրցումների համար որակավորում ստանալու (կամ միավորներ կուտակելու) հետագայում ազգային առաջնություններում կամ միջազգային միջոցառումներին մասնակցելու համար: Այդ մարզիկը կամ այլ անձը իրավունք չունի ոչ մի կարգավիճակով աշխատելու անչափասների հետ: Որակագրկման ընթացքում գտնվող մարզիկը կամ այլ անձը ցանկացած ժամանակ կարող է ենթարկվել դոպինգ ստուգման:

*[Մեկնաբանություն 10.12.1 կետի վերաբերյալ: Օրինակ՝ որակագրկված մարզիկը չի կարող մասնակցել ուսումնա-մարզական հավաքների, ցուցադրական ելույթների, կազմակերպված իր ազգային ֆեդերացիայի կամ ակումբի կողմից: Ավելին, նա չի կարող մրցել պրոֆեսիոնալ լիգայում (Օրինակ՝ Հոկեյի ազգային լիգա, Բասկետբոլի ազգային ընկերակցություն, ՀՀ Ֆուտբոլի բաժրագույն խումբ և այլն), միջազգային միջոցառման կազմակերպության կամ ազգային մակարդակի միջոցառման կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներում՝ առանց 10.12.3 կետով նախատեսված հետևանքների: Մեկ մարզաձևի պատժամիջոցները ճանաչվում են այլ մարզաձևերում (տես 15.1 կետը՝ Փոխադարձ ճանաչում):]*

### **10.12.2 Վերադարձ մարզումներին**

Կետ 10.12.1-ի միակ բացառություն կարող է հանդիսանալ մարզիկի վերադարձը մարզումներին իր թիմի կազմում կամ ակումբի կամ այլ Ստոքհոլմ կողմի կազմակերպության կազմում այն ժամանակաշրջանում որը կարճ է քան՝

- (1) Որակագրկման ժամկետի վերջին երկու ամիսը կամ
- (2) Որակագրկման ժամկետի վերջին քառորդ

*[Մեկնաբանություն 10.12.2 կետի վերաբերյալ: Շատ թիմային մարզաձևերում ինչպես նաև որոշ անհատական մարզաձևերում (օրինակ մարմնամարզություն) մարզիկը չի կարող արդյունավետ մարզվել միայնակ որպեսզի լինի պատրաստ մրցումներին մասնակցելու որակագրկման ժամկետը ավարտվելուց հետո: Սույն կետով նախատեսված մարզման շրջանում որակագրկված մարզիկը իրավունք չունի մասնակցել մրցումների կամ 10.12.1 կետում նախատեսված այլ գործունեություն իրականացնել բացառությամբ մարզվելուց: ]*

### **10.12.3 Որակագրկման ընթացքում մարզական միջոցառումներին Մասնակցության արգելքի խախտումը**

Եթե որակագրված մարզիկը կամ այլ անձ 10.12.1 կետով սահմանված մասնակցության արգելքը խախտում է որակագրկման ընթացքում, ապա նման մասնակցության արդյունքները պետք է զրոյացվեն, և նշանակված որակագրկման սկզբնական ժամկետը պետք է վերսկսվի խախտման օրվանից: Որակագրկման նոր ժամկետը կարող է նվազեցվել 10.5.2. կետի համաձայն, եթե մարզիկը կամ այլ անձը հաստատի, որ մասնակցության արգելքը խախտելիս չկա իր նշանակալից մեղքը կամ անփութությունը:

Մարզիկի կամ այլ անձի կողմից մասնակցության արգելքի խախտումը և ժամկետի նվազեցման նպատակահարմարությունը որոշելը պետք է իրականացվի այն հակադոպինգային կազմակերպության կողմից, որը իրականացրել է արդյունքների վերլուծություն և նշանակել որակագրկման սկզբնական ժամկետը: Վերնշված որոշումը կարող է բողոքարկվել համաձայն 13 հոդվածի:

Այն դեպքերում, երբ մարզիկին աջակցող անձնակազմը կան այլ անձը օգնում են որակագրկված մարզիկին խախտել մարզական միջոցառումներին Մասնակցության արգելանքը, Կենտրոնը պետք է նրանց նկատմամբ կիրառի պատժամիջոց 2.9 կետի համաձայն:

#### **10.12.4 Ֆինանսական տույժերի կիրառումը որակագրկման ընթացքում**

Կենտրոնի և ՀՀ կառավարության, ՀՍՕԿ-ի ու ազգային ֆեդերացիաների կողմից տվյալ անձին տրամադրվող, ֆինանսական օգնությունը դադարեցվում է բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվել է պատժաչափի նվազեցում, հատուկ նյութերի օգտագործման համար համաձայն 10.4. և 10.5 կետի:

#### **10.13 Հրապարակումներ պատժամիջոցների վերաբերյալ**

Ցանկացած պատժամիջոցի պարտադիր մասն է հանդիսանում 14.3 կետով նախատեսված ավտոմատ հրապարակումը:

Մեկնաբանություն 10-րդ հոդվածի վերաբերյալ: Պատժամիջոցների հարմոնիզացիան եղել է հակադոպինգային որոլտում ամենաքննարկվող և վիճարկելի մասը: Հարմոնիզացիա նշանակում է, որ յուրաքանչյուր դեպքի փաստերի գնահատման նպատակով կիրառվում են նույն կանոնները և չափանիշները: Հարմոնիզացիայի դեմ բերվում էին արգումենտներ, որոնք հիմնվում էին առանձին մարզաձևերի յուրահատկությունների վրա, օրինակ՝ առանձին մարզաձևերի մարզիկները հանդիսանում են պրոֆեսիոնալներ, որոնք ի շնորհիվ սպորտի վաստակում են մեծ գումարներ, իսկ այլ մարզաձևերում մասնակցում են սիրողական մարզիկներ: Այսպիսով այն մարզաձևերում, որտեղ մարզիկի կյանքը /կարճ/ է որակագրկման ժամկետը ունի մարզիկի համար ավելի մեծ նշանակություն, քան այլ մարզաձևերում, որտեղ մարզիկը կարող է ելույթ ունելալ ավելի երկար ժամանակ: Հարմոնիզացիայի հիմնական արգումենտ է հանդիսանում այն, որ ուղղակի սխալ է, եթե նույն երկրի երկու մարզիկի նկատմամբ, ում նմուշներում հայտնաբերվել է նույն արգելված նյութը,

կարող են կիրառվել տարբեր պատժամիջոցներ, միայն ելնելով նրանից, որ նրանք ներկայացնում են տարբեր մարզաձևեր: Բացի այդ պատժամիջոցների նշանակման հարցում ճկունությունը հաճախ ներկայացվել է իբրև որոշ մարզական կազմակերպությունների համար հնարավորություն լինել ավելի փափուկ կանոնները խախտած մարզիկների վերաբերյալ: Հարմոնիզացիայի բացակայությունը հաճախ հանդիսացել է միջազգային ֆեդերացիաների և ազգային հակադոպինգային կազմակերպությունների միջև իրավաբանական վեճերի պատճառ:

## **ՀՈՂՎԱԾ 11 ԿԱՆՈՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԹԻՄԱՅԻՆ ՄԱՐԶԱԶԵՎԵՐԻ ՀԱՄԱՐ**

### **11.1 Դոպինգ ստուգումը թիմային մարզաձևերում**

Եթե թիմային մարզաձևերում մրցումների ժամանակ թիմի մեկ կամ մեկից ավելի անդամ խախտել են կանոնները, ապա համաձայն հոդված 7-ի մրցումների կազմակերպիչը պետք է անց կացնի թիմի անդամների նպատակային դոպինգ ստուգում այդ մրցաշարի ընթացքում:

### **11.2 Հետևանքները թիմային մարզաձևերի համար**

Եթե թիմային մարզաձևերում մրցումների ընթացքում թիմի երկուսից ավելի անդամ խախտել են կանոնները, ապա մրցումների կազմակերպիչը պետք է պատժի այդ թիմին, օրինակ՝ զրկելով թիմին մրցումներում վաստակած միավորներից, թիմը որակազրկելով, պահպանելով կանոնները խախտած մարզիկի պատժաչափերը:

### **11.3 Մարզական իրադարձությունների կազմակերպիչը կարող է խստացնել պատժաչափերը թիմային մարզաձևերում**

Մարզական իրադարձությունների ժամանակ տվյալ մարզական իրադարձության կազմակերպիչը՝ կարող է ընդունել որոշում կիրառել ավելի խիստ պատիժներ, քան նշված է 11.2 կետում:

*[Մեկնաբանություն 11.3 կետի վերաբերյալ: Օրինակ Միջազգային Օլիմպիական Կոմիտեն կարող է խստացնել կանոնները, ինչը կբերի նրան, որ եթե որևէ թիմի երկու մարզիկ խախտել են կանոնները խաղերի ընթացքում, այդ թիմը կհեռացվի Օլիմպիական խաղերից:]*

## **ՀՈՂՎԱԾ 12 ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ**



**12.1** Կենտրոնը կարող է դիմել համապատասխան կազմակերպություններին առաջարկելով ամբողջապես կամ մասնակի գրկել ֆինանսական կամ այլ նյութական օգնությունից այն ազգային մարզական ֆեդերացիաներին, որոնք չեն ենթարկվում կամ անտեսում են սույն կանոնները:

**12.2** Ազգային մարզական Ֆեդերացիան *պարտավոր է Կենտրոնին փոխհատուցել բոլոր ծախսերը* (ներառյալ, բայց ոչ սահմանափակվելով, լաբորատոր փորձաքննության արժեքը, նմուշառման, նմուշների տեղափոխման և լսումների հետ կապված ծախսերը) որոնք կատարվել են կանոնները խախտած մարզիկի դրպինգ ստուգման նպատակով:

**12.3** Կենտրոնը կարող է ՀՍՕԿ ներկայացնել առաջարկ՝ ընդունելու լրացուցիչ պատժամիջոցներ ազգային ֆեդերացիայի նկատմամբ գրկելով այդ ֆեդերացիայի մարզիկներին, ֆեդերացիայի ներկայացուցիչներին և պաշտոնական անձանց միջազգային մրցումներին մասնակցելու իրավունքից հետևյալի հիման վրա՝

12.3.1 Ֆեդերացիան կարող է պատժվել 12 ամիս ժամանակահատվածով, եթե տվյալ ֆեդերացիային պատկանող չորս կամ ավելի մարզիկ կամ այլ անձինք խախտել են կանոնները (բացառությամբ այն կանոնների խախտումների, որոնք ներառված են 2.4 կետում):

12.3.2 Եթե խոշոր միջազգային մրցումների ժամանակ տվյալ ֆեդերացիային պատկանող մեկից ավելի մարզիկ կամ այլ անձ խախտում է կանոնները:

12.3.3 Եթե ֆեդերացիան չի ապահովում իր մարզիկների գտնվելու վայրի մասին տեղեկատվության հասանելիությունը Կենտրոնին այն բանից հետո, երբ Կենտրոնը ծանուցել է նրանց տեղեկատվությունը ներկայացնելու անհրաժեշտության մասին:

## **ՀՈՂՎԱԾ 13. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ**

### **13.1 Բողոքարկման ենթակա որոշումները**

Սույն Կանոնների համաձայն ընդունված որոշումները կարող են ենթարկվել բողոքարկման, համաձայն Հոդված 13-ի 13.2-13.7 կետերում շարադրված իրավիճակների կամ համաձայն Օրենսգրքի և միջազգային ստանդարտների համապատասխան հոդվածների, բացառությամբ 13.1.3 կետի :

13.1.1 Քննարկման ծավալի անսահմանափակություն  
Բողոքարկման քննարկման ծավալը ընգրկում է գործին առնչվող բոլոր հարցերը և չի սահմանափակվում միայն այն հարցերով, որոնք քննարկվել են որակագրկման որոշումը կայացնելիս:

13.1.2 ՄԱԴ-ը չպետք է ուշադրություն դարձնի այն փաստերի վրա, որոնք կան որոշման մեջ և որոնց հիման վրա կայացվել է բողոքարկում: Որոշում ընդունելիս ՄԱԴ-ը չպետք է ի գիտություն ընդունի այն մարմնի որոշումը, որի համար տրվել է բողոքարկում:

*[Մեկնաբանություն 13.1.2 կետի վերաբերյալ: ՄԱԴ-ը իրականացնում է բողոքարկման որոշումը: Մինչև ՄԱԴ դիմելը նախորդ որոշումները արժեք չունեն ՄԱԴ-ի քննարկումների ժամանակ և չեն սահմանափակում նոր ապացույցների տրամադրումը:]*

### **13.1.3 ՀՀԳ-ի բողոքարկման իրավունքները**

ՀՀԳ-ն համաձայն 13 հոդվածի իրավունք ունի միանգամից դիմել ՄԱԴ և բողոքարկել որակագրկման հետ կապված Կենտրոնի որոշումները, նույնիսկ, եթե ոչ մի այլ կազմակերպություն չի բողոքարկել այդ որոշումը:

*[Մեկնաբանություն կետ 13.1.3 վերաբերյալ: Եթե որակագրկման հետ կապված Կենտրոնի որոշումները ընդունվել են առանց լսումներ իրականացնելու և ոչ մի այլ կազմակերպություն չի բողոքարկել այդ որոշումը ՀՀԳ-ն իրավունք ունի միանգամից դիմելու ՄԱԴ այդ որոշումը բողոքարկելու նպատակով:]*

### **13.2 Բողոքարկումներ կապված Կանոնների խախտումների և դրանց հետևանքների, ժամանակավոր հեռացման որոշումների ճանաչման վերաբերյալ**

Համաձայն 13.2. կետի բողոքարկվել կարող են հետևյալ որոշումները՝ այն մասին

- որ տեղի է ունեցել կանոնների խախտում,
- որ նշանակվել են պատժամիջոցներ,
- որ կանոնների խախտման փաստի քննարկումը չի կարող շարունակվել վաղեմության ժամկետը վերջանալու պատճառով
- որ տեղի չի ունեցել կանոնների խախտում,
- որ ՀՀԳ –ի որոշումը չի կարող ազատել մարզիկին, որը ուզում է կրկին մասնակցել մրցումների, 5.7.1 կետում նշված վեց ամսվա պարտադիր ծանուցման պարտավորությունից;
- ՀՀԳ-ի որոշումը արդյուքների մշակման իրավունքը փոխանցելու այլ կազմակերպությանը համաձայն 7.1 կետի;
- Կենտրոնի որոշումը չներկայացնել անբարենպաստ կամ ատիպիկ արդյունքները որպես կանոնների խախտում

- Համաձայն 7.7 կետի իրականացված հետաքննությունից հետո հետագա քննությունը չշարունակելու վերաբերյալ որոշումը
- Ժամանակավոր հեռացման որոշումը՝ նախնական լսումների հիման վրա:
- Կենտրոնի կողմից 7.9 կետի չկատարման վերաբերյալ որոշումը
- Որոշում, որ կենտրոնը չունի բավարար իրավասություն ենթադրվող կանոնների խախտման կան նրանց հետևանքների վերաբերյալ
- Որակագրկումը չեղյալ համարելու կամ չհամարելու կամ որակագրկման ժամկետը վերականգնելու համաձայն 10.6.1 կետի կամ չեղյալ համարված որակագրկման ժամկետը չվերականգնելու որոշումը
- 10.12.3 կետի համաձայն ընդունված որոշումները
- Կենտրոնի որոշումը չճանաչել այլ Հակադոպինգային կազմակերպության որոշումները, կարող են բողոքարկվել բացառապես համաձայն 13,2 - 13.7 կետերի:

13.2.1 Բողաքարկումներ կապված միջազգային մակարդակի մարզիկների կամ միջազգային մրցումների հետ

Եթե կանոնների խախտումները տեղի են ունեցել միջազգային միջոցառումների ժամանակ կամ կախված են միջազգային մակարդակի մարզիկի հետ ընդունված որոշումների վերաբերյալ բողոքները պետք է ներկայացվեն բացառապես ՄԱԴ:

*[Մեկնաբանություն 13.2.1 կետի վերաբերյալ: ՄԱԴ-ի որոշումները վերջնական են և պարտադիր, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքը պահանջում է վերանայել և չեղյալ համարել կամ պարտադիր կատարել ՄԱԴ-ի որոշումը:]*

### **13.2.2 Բողոքարկումներ կապված այլ մարզիկների կամ այլ անձանց հետ**

Եթե 13.2.1 կետը կիրառելի չէ, ապա մարզիկը կամ այլ անձը պետք է ներկայացնի իր բողոքարկումը Ազգային Բողոքարկման հանձնախմբին:

13.2.2.1 Լսումներ մինչև Ազգային Բողոքարկման հանձնախմբի քննարկումները

13.2.2.1.1 Բողոքարկման հանձնախմբը պետք է լինի անկախ և անկողմնակալ իր գործառույթների մեջ: Բողոքարկման հանձնախումբը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը:

ա) Նախագահ, որը պետք է պարտադիր ունենա ոչ պակաս քան հինգը տարի աշխատանքային փորձ

- բ) Երկու բժիշկ կամ իրավաբան, որից մեկը հանդիսանում է փոխնախագահ և որոնք կունենան ոչ պակաս քան հինգը տարի աշխատանքային փորձ
- գ) Երկու լրացուցիչ անդամ, որոնք պետք է լինեն մարզական ադմինիստատորներ կամ մարզիկներ:

Բոլոր անդամները պետք է լսումների ժամանակ լինեն անկախ և անկողմնակալ: Հանձնախմբի անդամները նշանակվում են չորս տարի ժամկետով:

Եթե հանձնախմբի անդամներից մեկը մահանում է կամ անցնում է թոշակի, Կենտրոնը ազատված հաստիքին նշանակում է նոր անձ, ով պետք է աշխատի մինչև նախկինի սահմանված ժամկետի ավարտը և կկատարի հանձնախումբը լրացնող անդամի պարտականությունները:

13.2.2.1.2 Նշանակված անդամները մինչև լսումները չպետք է ունենան որևիցե կապ քննարկվող դեպքի հետ: Եթե նախկինում այդպիսի կապ գոյություն է ունեցել, յուրաքանչյուր անդամ, մինչև իր նշանակումը, պետք է դրա մասին տեղեկացնի նախագահին:

13.2.2.1.3 Եթե հանձնախմբի անդամներից մեկը ի վիճակի չէ մասնակցել որևէ լսումների, ապա նախագահը կարող է փոխարինել նրան կամ կազմել նոր հանձնախումբ նշանակելով նոր հանձնախմբի անդամ այդ պաշտոնի հավակնորդների ցուցակից:

13.2.2.1.4 Ազգային բողոքարկման հանձնախումբը իրավունք ունի իր հայեցողությամբ նշանակել փորձագետ կամ խորհուրդատու հանձնախմբի աշխատանքներին օգնելու նպատակով, եթե դա անհրաժեշտ է տվյալ լսումների համար:

13.2.2.1.5 Կենտրոնի ներկայացուցիչները իրավունք ունեն մասնակցելու լսումներին որպես շահագրգռված կողմերից մեկը:

13.2.2.1.6 Միջազգային Ֆեդերացիայի, Ազգային Ֆեդերացիայի, ՀԱՕԿ-ի, եթե նրանք շահագրգիռ կողմ չեն հաղիսանում, և ՀՀԳ-ի ներկայացուցիչները իրավունք ունեն մասնակցելու լսումներին որպես դիտորդ:

13.2.2.1.7 Լսումները, որոնք նկարագրված են այս Հոդվածում, պետք է կատարվեն հնարավորինս արագ, ոչ ուշ քան 3 (երեք) ամսվա ընթացքում բողոքարկվող որոշումների ընդունման օրից:

13.2.2.1.8 Լսումներ որոնք կապված են մեծ մարզական միջոցառումների հետ կարող են անցկացվել է արագացված կարգով:

13.2.2.2 Բողոքարկման հանձնախմբի աշխատանքի ընթացակարգ

13.2.2.2.1 Բողոքարկման հանձնախմբի աշխատանքը պետք է կարգավորվի հատուկ ընթացակարգով:

13.2.2.2.2 Բողոքարկող կողմը պետք է ներկա լինի լսումներին և ներկայացնի իր գործը հանձնախմբին:

13.2.2.2.3 Ծանուցագիրը ստանալուց հետո, Լսումների հրավիրված կողմերից մեկի հրաժարվելը Լսումներին մասնակցելուց, կհամարվի որպես պաշտոնական հրաժարում: Հրավիրված կողմերից մեկի իրավունքը մասնակցելու Լսումներին կարող է վերականգնվել միայն խելամիտ հիմքերով:

13.2.2.2.4 Լսումներին հրավիրված յուրաքանչյուր կողմ իրավունք ունի ներկա լինել լսումներին, բայց պետք է ապահովի իր ծախսերը Լսումներին մասնակցելու համար:

13.2.2.2.5 Լսումներին հրավիրված յուրաքանչյուր կողմ իրավունք ունի անհրաժեշտության դեպքում հրավիրել թարգմանիչ: Թարգմանչի աշխատանքի հետ կապված ծախսերի չափը որոշում է բողոքարկման հանձնախումբը:

13.2.2.2.6 Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի հրավիրել և հարցաքննել դեպքի վկաներին և/կամ ներկայացնել Բողոքարկման հանձնախմբին նրանց գրավոր (Ֆաքս) և բանավոր (հեռախոս) ցուցմունքները:

13.2.2.2.7 Յուրաքանչյուր կողմի լսումներից հրաժարվելը կամ հանձնախմբի պահանջները կատարելուց հրաժարվելը չի կարող խոչընդոտել լսումների իրականացմանը, բայց այդպիսի վերաբերմունքը կարող է և ազդել հանձնախմբի վերջնական որոշման վրա:

### **13.2.2.3 Բողոքարկման հանձնախմբի որոշումները**

13.2.2.3.1 Լսումներ իրականացնող հանձնախմբի որոշումը պետք է լինի գրավոր, ստորագրված (նշելով ստորագրման ամսաթիվը) բոլոր անդամների կողմից: Առանձին դեպքերում որոշումը կարող է ներկայացվել առանց բացատրությունների: Որոշման մեջ պետք է մանրամասն ներկայացնել հեռացման ժամկետի կրճատման պատճառները և բացատրել ինչու չի կիրառվել առավելագույն պատժամիջոցը:

13.2.2.3.2 Մարզիկի կամ այլ անձի, կամ ազգային ֆեդերացիայի վերաբերյալ Կենտրոնի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել ըստ կետ 13.2.3-ի:

13.2.2.3.3 Լսումների ընթացքում ընդունված վերջնական որոշումը կարող է բողոքարկվել համաձայն 13 հոդվածում նկարագրված ընթացակարգի: Եթե հանձնախմբի որոշումը չի բողոքարկվում, ապա

(ա) եթե որոշումը կապված է Կանոնների խախտման հետ, ապա այն պետք է հրապարակվի ըստ 14.3.2 կետի; բայց

(բ) եթե ապացուցվում է, որ Կանոնները խախտում տեղի չի ունեցել, ապա դա կարող է հրապարակվել միայն մարզիկի համաձայնության դեպքում: Կենտրոնը պետք է ջանա ստանալու այդ համաձայնությունը և եթե անհրաժեշտ է հրապարակի հանձնախմբի որոշումը մարզիկի կողմից խմբագրելուց հետո:

### 13.2.3 Բողոքարկելու իրավունք ունեցող անձինք

13.2.1 կետով նախատեսված դեպքերում, հետևյալ անձինք և կազմակերպությունները իրավունք ունեն բողոքարկել ՄԱԴ՝

(ա) մարզիկը կամ այլ անձը, որի վերաբերյալ ընդունվել է որոշում;

(բ) ցանկացած կազմակերպություն, որի վերաբերյալ ընդունվել է որոշում;

(գ) համապատասխան միջազգային ֆեդերացիա;

(դ) Այն երկրի ազգային հակադոպինգային կենտրոնը, որտեղ բնակվում է տվյալ անձը կամ այն երկրի, որի քաղաքացի է հանդիսանում մարզիկը կամ որը տվել է արտոնագիր:

(ե) Միջազգային Օլիմպիական կոմիտեն կամ միջազգային պարաօլիմպիկ կոմիտեն, եթե որոշումը կապ ունի Օլիմպիական կամ Պարաօլիմպիկ Խաղերի հետ, այդ թվում Խաղերի ընթացքում որակազրկման հետ

(զ) ՀՀԳ-ն

Համաձայն 13.2.2 կետի ազգային բողոքարկման հանձնախումբ որոշումները բողոքարկելու իրավունք ունեն հետևյալ կողմերը

(ա) մարզիկը կամ այլ անձը, որի վերաբերյալ ընդունվել է որոշում;

(բ) ցանկացած կազմակերպություն, որի վերաբերյալ ընդունվել է որոշում;

(գ) համապատասխան միջազգային ֆեդերացիան;

(դ) Այն երկրի ազգային հակադոպինգային կենտրոնը, որտեղ բնակվում է տվյալ անձը կամ այն երկրի, որի քաղաքացի է հանդիսանում մարզիկը կամ որը տվել է արտոնագիր:

(ե) Միջազգային Օլիմպիական կոմիտեն կամ միջազգային պարաօլիմպիկ կոմիտեն, եթե որոշումը կապ ունի Օլիմպիական կամ Պարաօլիմպիկ Խաղերի հետ, այդ թվում Խաղերի ընթացքում որակազրկման հետ

(զ) ՀՀԳ-ն

Համաձայն կետ 13.2.2-ի ՀՀԳ-ն, ՍՕԿ-ը, ՄՊՕԿ-ը և համապատասխան Միջազգային ֆեդերացիան իրավունք ունեն բողոքարկելու ՄԱԴ՝ ազգային բողոքարկման հանձնախմբի որոշումները ազգային մակարդակի մարզիկների վերաբերյալ:

Բողոքարկող կողմը իրավունք ունի ՄԱԴ-ի միջոցով հակադոպինգային կազմակերպությունից իր որոշման վերաբերյալ ստանալու ցանկացած տեղեկատվություն:

Անկախ այս հոդվածում շարադրած դրույթներից միայն մարզիկը կամ այլ անձը, ում նկատմամբ ընդունված է պատժամիջոցը իրավունք ունի բողոքարկել Ժամանակավոր հեռացման որոշումը:

#### **13.2.4 Հակընդեմ բողոքարկում**

Համաձայն հոդված 13-ի ցանկացած կազմակերպություն իրավունք ունի ՄԱԴ ներկայացնել հակընդեմ բողոքարկում: Հակընդեմ բողոքարկումները պետք է ներկայացվեն մինչև նախորդ բողոքարկման վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը:

*[Մեկնաբանություն 13.2.4 կետի վերաբերյալ: Այս դրույթն անհրաժեշտ է, քանի որ 2011 թ.-ից ՄԱԴ-ի կանոնները այլևս թույլ չեն տալիս մարզիկին իրականացնել հակընդեմ բողոքարկում, եթե հակադոպինգային կազմակերպությունը բողոքարկման վերաբերյալ արդեն ընդունել է վերջնական որոշում: Այս դրույթը գործում է բոլոր կողմերի համար:]*

#### **13.3 Կենտրոնի կողմից ժամանակին որոշում չկայացնելը**

Առանձին դեպքերում, եթե Կենտրոնը ՀՀԳ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, չի կայացնում որոշում տեղի ունեցած հակադոպինգային կանոնների խախտման վերաբերյալ, ապա ՀՀԳ-ն կարող է ուղղակիորեն բողոքարկել ՄԱԴ, հիմնվելով խախտման փաստի առկայության վրա: Եթե ՄԱԴ-ը որոշի, որ կանոնների խախտումը առկա է և ՀՀԳ-ն գործել է խելամիտ, ապա ՀՀԳ-ի ծախսերը և փաստաբանի վարձավճարը պետք է փոխհատուցվի Կենտրոնի կողմից:

*[Մեկնաբանություն 13.3 կետի վերաբերյալ: Հաշվի առնելով հակադոպինգային կանոնների խախտման հանգամանքները, հնարավոր չէ հաստատել]*

*հակադոպինգային կազմակերպության համար որոշում կայացնելու հաստատագրված ժամկետ: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր գործողությունն ձեռնարկելուց առաջ, ՀՀԳ-ն պետք է խորհրդակցի Կենտրոնի հետ և նրան հնարավորություն տա բացատրելու, թե ինչու որոշումը չի կայացվել ողջամիտ ժամկետում: ]*

**13.4** Բուժման նպատակով արգելված դեղերի օգտագործման թույլտվություն (ԲՆԱԴՕԹ) տալու կամ մերժելու որոշման վերաբերյալ բողոքարկում:

ԲՆԱԴՕԹ վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել բացառապես համաձայն 4.4-կետի:

**13.5** Ծանուցում բողոքարկման որոշումների վերաբերյալ

Ցանկացած հակադոպինգային կազմակերպություն, որը ընդգրկված է բողոքարկման գործընթացի մեջ պետք է անհապաղ տրամադրի բողոքարկման վերաբերյալ որոշումը մարզիկին կամ այլ անձի եւ այլ հակադոպինգային կազմակերպությունների, որոնք իրավունք ունեն դիմել հակընդեմ բողոքարկումով համաձայն 13.2.3 կետի և 14.2 կետի նախատեսված կարգով:

**13.6 Բողոքարկումներ 12 Հոդվածում նշված որոշումների վերաբերյալ**

Հոդվածում նշված որոշումների վերաբերյալ (պատժամիջոցներ ազգային մարզական ֆեդերացիաների նկատմամբ) բողոքարկումները ազգային մարզական ֆեդերացիաները կարող են ներկայացնել բացառապես ՄԱԴ:

**13.7 Բողոքարկման ներկայացման ժամանակացույցը**

13.7.1 Բողոքարկում ՄԱԴ-ին

ՄԱԴ ուղղված բողոքարկումները պետք է ուղարկվեն ոչ ուշ, քան ծանուցագիրը հանձնելուց քսանմեկ օր հետո: Լսումների մասնակից կողմերը իրավունք ունեն նաև՝

(ա) որոշումը կայացրած կազմակերպությունից ծանուցագիրը ստանալուց հետո տասնհինգ օրվա ընթացքում պահանջել գործի հետ կապված բոլոր փաստաթղթերի պատճենները:

(բ) եթե ներկայացված պահանջը իրականացվել է տասնհինգ օրվա ընթացքում պահանջված պատճենները ստացած կազմակերպությունը կամ անձը քսանմեկ օրվա ընթացքում իրավունք ունի իր գրավոր բողոքը ներկայցնել ՄԱԴ:

ՀՀԳ-ն իրավունք ունի՝



(ա) բողոքարկել քսանմեկ օր հետո, սկսած այն պահից, երբ ցանկացած այլ կազմակերպություն կամ անձ իրավունք ուներ ներկայացնել բողոքը:

(բ) բողոքարկել քսանմեկ օր հետո, սկսած այն պահից, երբ ՀՀԳ-ն ստացել է գործի հետ կապված բոլոր փաստաթղթերի պատճենները:

### 13.7.2 Բողոքարկումներ համաձայն հոդված 13.2.2

Ազգային բողոքարկման հանձնախմբի կողմից ընդունված որոշումների վերաբերյալ բողոք ներկայացնելու ժամկետը ծանուցագիրը ստանալուց հետո կազմում է քսանմեկ օր: Այնուամենայնիվ, այն կազմակերպությունների կամ անձանց համար, որոնք իրավունք ունեն բողոքարկելու, բայց չեն հանդիսանում լսումներին մասնակցած կողմ գործում է հետևյալ կարգը՝

ա/ որոշումը կայացրած կազմակերպությունից ծանուցագիրը ստանալուց հետո տասնհինգ օրվա ընթացքում պետք է պահանջել գործի հետ կապված բոլոր փաստաթղթերի պատճենները

բ/ եթե ներկայացված պահանջը իրականացվել է տասնհինգ օրվա ընթացքում, ապա պահանջված պատճենները ստացած կազմակերպությունը կամ անձը քսանմեկ օրվա ընթացքում իրավունք ունի ներկայացնել իր գրավոր բողոքը Ազգային բողոքարկման հանձնախմբին:

ՀՀԳ-ն իրավունք ունի՝

(ա) ) բողոքարկել կամ միջամտել գործընթացին քսանմեկ օր հետո, սկսած այն պահից, երբ ցանկացած այլ կազմակերպություն կամ անձ իրավունք ունի ներկայացնելու բողոքը:

(բ) բողոքարկել քսանմեկ օր հետո, սկսած այն պահից, երբ ՀՀԳ-ն ստացել է գործի հետ կապված բոլոր փաստաթղթերի պատճենները:

## ՀՈՒՎԱԾ 14. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**14.1 Տեղեկատվություն փորձաքննության անբարենպաստ արդյունքների, աստիպիկ արդյունքների և կանոնների այլ խախտումների վերաբերյալ**

**14.1.1** Մարզիկների եւ այլ անձանց Կանոնների խախտման վերաբերյալ ծանուցման կարգը

Մարզիկների եւ այլ անձանց Կանոնների խախտման և նրանց դեմ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ ծանուցումը պետք է իրականացվի Կանոնների 7 և 14 հոդվածների համաձայն: Ծանուցումը նաև կարող է ուղարկվել այդ անձանց ազգային ֆեդերացիաներին:

**14.1.2** Միջազգային ֆեդերացիաներին և ՀՀԳ-ին Կանոնների խախտման վերաբերյալ ծանուցման կարգը՝

Կենտրոնը Մարզիկների եւ այլ անձանց Կանոնների խախտման և նրանց դեմ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ ծանուցումը ուղարկելու հետ միաժամանակ պետք է ուղարկի ծանուցում նաև միջազգային ֆեդերացիա և ՀՀԳ:

**14.1.3** Կանոնների խախտման վերաբերյալ ծանուցման բովանդակությունը՝

Համաձայն 2.1 կետի Կանոնների խախտման վերաբերյալ ծանուցման մեջ նշվում է մարզիկի անունը, ազգանունը, մարզաձևը, մրցումների կամ արտամրցումային դրպինգ ստուգման իրականացման վայրը, նմուշառման ամսաթիվը, լաբորատոր փորձաքննության արձանագրությունը և այլ տվյալներ, որոնք նախատեսված են Թեստավորման և հետաքննության միջազգային ստանդարտի պահանջներով: Այլ հոդվածներում նշված Կանոնների խախտման վերաբերյալ ծանուցումներում պետք է նշված լինի նաև, թե ինչ խախտում է տեղի ունեցել:

**14.1.4** Հաշվետվություն հետաքննությունների ընթացքի վերաբերյալ:

Բացառությամբ այն հետաքննությունների, որոնք չեն ավարտվել Կանոնների խախտման վերաբերյալ ծանուցումներով, ըստ 14.1.1- կետի Միջազգային ֆեդերացիաները և ՀՀԳ-ն պետք է ստանան տեղեկատվություն համաձայն 7, 8 և 13 հոդվածների իրականացվող հետաքննությունների ընթացքի և պետք է անմիջապես ստանան գրավոր տեղեկատվություն հետաքննության արդյունքում ընդունված որոշումների մասին:

**14.1.5 Գաղտնիություն**

Այն Կազմակերպությունները, որոնք ստանում են ծանուցումները իրավունք չունեն փոխանցել այն այլ անձանց, բացառությամբ այն

անձանց որոնք ի պաշտոնե պետք է տիրապետեն այդ տեղեկատվությանը օրինակ՝ Օլիմպիական Կոմիտեի, ազգային ֆեդերացիաների կամ Նախարարության պատասխանատու աշխատակիցները մինչև Կենտրոնը չմշակի և չհրապարակի Կոմիտեի խախտման վերաբերյալ տվյալները համաձայն Կանոնների 14.3 կետի:

**14.1.6** Կենտրոնը պետք է ապահովի անբարենպաստ կամ աստիպիկ արդյունքների մասին տեղեկությունը ինչպես նաև Կանոնների այլ խախտումների մասին տեղեկությունը կմնա գաղտնի, քանի դեռ այդ տեղեկությունները չեն հրապարակվել և չեն տրամադրվել հասարակությանը համաձայն Կանոնների 14.3 կետի: Կենտրոնը պարտավոր է ներառել նշված գաղտնիության վերաբերյալ դրույթները նաև իր հետ պայմանագրով աշխատող խորհրդատուների, աշխատակիցների և այլ անձանց հետ նշելով պայմանագրում գաղտնիությունը խախտելու համար նախատեսվող պատժամիջոցները:

## **14.2 Կանոնների խախտման վերաբերյալ որոշումների հետ կապված փաստաթղթերի տրամադրում**

**14.2.1** Կանոնների խախտման վերաբերյալ որոշումները, որոնք ընդունվել են ըստ 7.11, 8.3, 10.4, 10.5, 10.6, 10.12.3 կամ 13.5 կետերի, պետք է ներառեն ընդունված որոշումների և առավելագույն պատժամիջոց նշանակելու պատճառների բացատրությունը: Կենտրոնը պետք է ՀՀԳ ներկայացնի իր որոշման անգլերեն թարգմանությունը կամ նրա համառոտ սեղմնագիրը:

**14.2.2** Ցանկացած այլ Հակադոպինգային Կազմակերպություն, որ իրավումք ունի բողոքարկել Կենտրոնի որոշումը, համաձայն կետ 14.2.1, կարող է պահանջել Կանոնների խախտման վերաբերյալ որոշումների հետ կապված բոլոր փաստաթղթերի պատճենները ոչ ուշ քան տվյալ որոշումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում:

## **14.3 Հրապարակում հանրության համար**

**14.3.1** Կանոնները խախտած մարզիկի կամ այլ անձի անունը կարող է հրապարակվել հանրության համար միայն այն բանից հետո, երբ նրա մեղքը հաստատվել է և այդ անձը ստացել է համապատասխան ծանուցումը Կանոնների խախտման մասին համաձայն 7.3, 7.4, 7.5, 7.6 կամ 7.7 կետերի և համապատասխան Միջազգային ֆեդերացիան և ՀՀԳ տեղեկացվել են խախտման մասին:

**14.3.2** Համաձայն 13.2.1 կամ 13.2.2 կետերի Կանոնների խախտման փաստը Բողոքարկման բարձրագույն մարմնի կողմից

վերջնական հաստատումից ոչ ուշ քան քսան օր հետո, կամ եթե համաձայն 8-րդ հոդվածի չի օգտագործել Լսումները իրականացնելու կամ բողոքարկման իրավունքը Կենտրոնը պետք է հրապարակի իր վերջնական որոշումը կանոնների խախտման և նշանակված պատժամիջոցի վերաբերյալ՝ նշելով մարզիկի անունը և ազգանունը, մարզաձևը, խախտման հետ կապ ունեցող արգելված նյութի կամ մեթոդի անվանումը և կիրառված պատժամիջոցները: Կենտրոնը նաև ոչ ուշ քան քսան օրվա ընթացքում պետք է հրապարակի իր որոշման բովանդակությունը ներառյալ վերընշված տվյալները:

**14.3.3** Այն դեպքերում, երբ լսումների արդյունքում հաստատվի, որ մարզիկը կամ այլ անձը չի խախտել Կանոնները, Կենտրոնը կարող է հրապարակել այդ տեղեկատվությունը միայն մարզիկի կամ այլ անձի համաձայնությունը ստանալուց հետո: Կենտրոնը պետք է օգտագործի իր ողջ կարողությունները այդպիսի համաձայնություն ստանալու համար և հրապարակի վերջնական արդյունքները այն ձևով, որին հավանություն են տվել մարզիկը կամ այլ անձը:

**14.3.4** Հանրության համար հրապարակումը նախատեսում է առնվազն հրապարակում Կենտրոնի կայքում և այդ տեղեկատվության հասանելիությունը առնվազն մեկ ամսվա ընթացքում կամ մարզիկի որակագրկման ժամանակահատվածում:

**14.3.5** Ոչ մի կազմակերպություն (ներառյալ Կենտրոնը, ազգային ֆեդերացիաները) կամ որևէ անձ իրավունք չունի հրապարակայնորեն մեկնաբանել որևէ չավարտված գործի վերաբերյալ, բացառությամբ մարզիկի կամ այլ անձի կամ նրա ներկայացուցչի կամ գործակալի հրապարակային ելույթները:

**14.3.6** 14.3.2 կետում շարադրված դրույթները չպետք է կիրառվեն, եթե Կանոնները խախտած մարզիկը կամ այլ անձը անչափահաս է: Տվյալ դեպքում հրապարակումը կարելի անել միայն բացառիկ դեպքերում՝ ելնելով խախտման բնույթից:

#### **14.4 Վիճակագրական հաշվետվություն**

Կենտրոնը պետք է հրապարակի իր տարեկան հաշվետվությունը և ուղարկի այն ՀՀԳ: Կենտրոնը իր հաշվետվության մեջ պետք է ընդգրկի բոլոր իրականացված դոպինգ ստուգումները և նրանց բնույթը, նշելով լաբորատորիաների և դոպինգ սպաների անունները:

#### **14.5 Դոպինգ ստուգման մասին տեղեկատվության փոխանակում**

Բազմակի և ոչ հիմնավորված դոպինգ ստուգումը կանխելու նպատակով Կենտրոնը հնարավոր կարճ ժամանակում պետք է ՀՀԳ-ի համակարգող կենտրոնն ուղարկի իր կողմից իրականացված բոլոր մրցումային և արտամրցումային նմուշառումների վերաբերյալ հաշվետվություն օգտագործելով ADAMS համակարգը:

#### **14.6 Անձնական տվյալների պաշտպանությունը**

**14.6.1** Կենտրոնը իրավունք ունի հավաքագրել, պահպանել, մշակել և հրապարակել մարզիկների անձնական տվյալները, որոնք առնչվում են նրանց մարզական գործունեության հետ և, ինչպես նախատեսված է Օրենսգրքով, մասնավոր կյանքի և անձնական տեղեկատվության պահպանության Միջազգային ստանդարտով ու սույն Կանոններով:

**14.6.2** Սույն Կանոններում նշված ցանկացած անձ, որը տեղեկատվություն է տրամադրում որևէ այլ անձին կամ Կազմակերպությանը, պետք է գործի միայն սույն Կանոնների դրույթները իրագործելու նպատակով և իրականացնի տեղեկատվության տրամադրումը միայն ըստ մասնավոր կյանքի և անձնական տեղեկատվության պահպանության Միջազգային ստանդարտի:

### **ՀՈՂՎԱԾ 15 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ՃԱՆԱԶՈՒՄԸ**

**15.1** Հաշվի առնելով թեստավորման արդյունքների, լսումների և այլ վերջնական իրավաբանական որոշումների վերաբերյալ ստորագրած կողմերի բողոքարկման իրավունք համաձայն Օրենսգիրքի 13-րդ հոդվածի, եթե բողոքարկումները իրականացված են ըստ Օրենսգրքի ապա դրանք պետք է ճանաչվեն Կենտրոնի և ազգային ֆեդերացիաների կողմից:

*[Մեկնաբանություն 15.1 կետի վերաբերյալ: Այլ հակադրային գային կազմակերպությունների կողմից ԲՆԱԴՕԹ-ի վերաբերյալ ընդունված որոշումների ճանաչումը պետք է իրականացվի կետ 4.4-ի սահմաններում և ԲՆԱԴՕԹ-ի միջազգային ստանդարտով:]*

**15.2.** Կենտրոնը և ազգային ֆեդերացիաները կարող են ճանաչել այլ կազմակերպությունների որոշումները, եթե նույնիսկ այդ կազմակերպությունները չեն ընդունել Օրենսգիրքը, բայց նրանց սեփական կանոնները չեն հակասում ՀՀԳ-ի Օրենսգրքին:

*[Մեկնաբանություն 15.2 կետի վերաբերյալ: Եթե օրենսգիրքը չընդունած կազմակերպությունների որոշումները մի մասով համապատասխանում են Օրենսգրքին, իսկ մյուս մասով ոչ, ապա Կենտրոնը իրավունք ունի պահանջել, որ այդ որոշումները բերվեն լրիվ համապատասխանության Օրենսգիրքին: Օրինակ, եթե Օրենսգիրքը չընդունած կազմակերպությունը գտել է, որ մարզիկը*

*խախտել է կանոնները և որոշել է որակագրկել նրան ավելի կարճ ժամկետով, քան դա պահանջում է Օրենսգիրքը, Կենտրոնը կարող է նշանակել լսումներ՝ համաձայն հոդված 8-ի՝ պարզելու համար, արդյոք կրճատումը համապատասխանում է Օրենսգրքի սկզբունքներին թե ոչ:]*

**15.3** Հաշվի առնելով բողոքարկման իրավունքը համաձայն 13-րդ հոդվածի Կենտրոնի Կանոնների կողմից խախտման վերաբերյալ ընդունված ցանկացած որոշումը պետք է ճանաչեն բոլոր ազգային ֆեդերացիաները և անեն ամեն ինչ որ այդ որոշումը իրագործվի:

#### **Հոդված 16 ԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**16.1** Բոլոր ազգային ֆեդերացիաները և նրանց անդամները պետք է ընդունեն, ճանաչեն և ենթարկվեն սույն Կանոններին: Կանոնները պետք է ընգրկվեն ազգային մրցումների կանոնների մեջ, այնպես, որ կենտրոնը կարողանա ապահովել Կանոնների իրականացումը ազգային ֆեդերացիայի իրավասության տակ գտնվող յուրաքանչյուր մարզիկի կամ այլ անձի նկատմամբ:

**16.2** Բոլոր ազգային ֆեդերացիաները պետք է մշակեն կանոններ, որոնք կպարտադրեն իր իրավասության տակ գտնվող մարզիկներին, մարզիչներին, մենեջերներին, բժիշկներին, թիմի անդամներին, կազմակերպություններին և բոլոր այլ հնարավոր անձանց, որ սույն Կանոնները պարտադիր ընդունվեն և ճանաչվեն իրենց կողմից և նրանք պետք է համաձայնվեն Կենտրոնի կողմից ընդունված ցանկացած որոշման հետ, հաշվի առնելով այն, որ Օրենսգիրքը տալիս է Կենտրոնին այդ իրավասությունը:

**16.3** Բոլոր ազգային ֆեդերացիաները պետք է տրամադրեն Կենտրոնին և իրենց Միջազգային ֆեդերացիային ցանկացած տեղեկատվություն, որը կապված է Կանոնների խախտման հետ և նպաստեն Կենտրոնին հետաքրքրությունը իրականացնելու հարցում:

**16.4** Բոլոր ազգային ֆեդերացիաները պետք է ունենան կանոններ, որոնք նախատեսում են մարզիկին աջակցող անձնակազմի որակագրկում, այդ թվում հակադոպինգային կանոնների խախտման համար:

**16.5** Բոլոր ազգային ֆեդերացիաները պարտավոր են իրականացնել հակադոպինգային կրթական ծրագրեր համագործակցելով Կենտրոնի հետ

#### **ՀՈՂՎԱԾ 17 ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ**

Օրենսգրքում թվարկած կանոնների խախտումների հետ կապված ոչ մի գործողություն չի կարող ձեռնարկվել, եթե Կանոնները խախտած մարզիկը կամ այլ անձը չի ծանուցվել համաձայն 7-րդ հոդվածի և կանոնների խախտման օրվանից անցել է տասը տարուց ավելի:

#### **ՀՈՂՎԱԾ 18. ՕՐԵՆՍԳՐՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՀԳ-ԻՆ**

Կենտրոնը պետք է հաշվետու լինի ՀՀԳ-ի սույն Կանոնները ՀՀԳ-ին համապատասխանեցնելու հարցում համաձայն Օրենսգրքի 23.5.2 կետի:

#### **ՀՈՂՎԱԾ 19. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

Կենտրոնը պետք է նախագծի, իրականացնի, բարելավի և հսկի կրթական ծրագրերը, որոնք կնպաստեն պահպանելու դոպինգից ազատ սպորտը, ինչպես նախատեսված է Օրենսգրքի 18.2 կետում և պետք է սատարի մարզիկների և մարզիկներին աջակցող անջնակադմի մասնակցությունը այդ ծրագրերում:

#### **ՀՈՂՎԱԾ 20. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**20.1** Կենտրոնը ժամանակ առ ժամանակ կարող է ուղղումներ կամ փոփոխություններ կատարել Կանոններում:

**20.2** Սույն Կանոնները հանդիսանում են անկախ և չեն հանդիսանում հղում ՀՀ-ում գործող որևէ օրենքի կամ կանոնադրությանը:

**20.3** Կանոնների հոդվածների անվանումները նախատեսված են միայն հարմարության համար և չպետք է հաշվվեն այս Կանոնների առանձին մաս կամ կետ:

**20.4** Օրենսգիրքը և Միջազգային ստանդարտները հանդիսանում են Կանոնների անբաժան մաս և օգտագործվում են վեճերը լուծելու նպատակով:

**20.5** Սույն կանոնները ընդունվել են համաձայն Օրենսգրքի համապատասխան հոդվածների և համապատասխանում են Օրենսգրքին: Կանոնների ներածումը հանդիսանում է Կանոնների անբաժան մասը:

**20.6** Մեկնաբանությունները օգտագործվում են Կանոնների տարբեր դրույթների պարզաբանման համար:

**20.7** Սույն Կանոնները ուժի մեջ են մտնում 2015թ. Հունվարի 1-ից և չպետք է կիրառվեն այդ ամսաթվից շուտ:

**20.7.1** Կանոնների խախտումները, որոնք տեղի են ունեցել մինչև Կանոնների ուժի մեջ մտնելը կհամարվեն առաջին խախտում կամ երկրորդ խախտում համաձայն հոդված 10-ի պատժամիջոց նշանակելիս, այն խախտումների համար, որոնք տեղի են ունեցել 2015թ. Հունվարի 1-ից հետո:

**20.7.2** Մինչև սույն կանոնների ուժի մեջ մտնելը տեղի ունեցած խախտումները կարող են դիտարկվել բազմակի խախտումների տեսայնկունից համաձայն հոդված 10.7.5-ի և վաղեմության ժամկետի: Այս դեպքում պատժամիջոցները կարող են կիրառվել հետին թվով:

Այն դեպքերում, երբ խախտումների մասին որոշումները ընդունվել են մինչև սույն Կանոնների ուժի մեջ մտնելը, իսկ մարզիկը գտնվում է որակագրկման կարգավիճակում տվյալ դեպքը պետք է կառավարվի սույն Կանոններով, եթե չկա լսումները իրակացնող մարմնի այլ որոշում:

**20.7.3** Խախտումները, որոնք կապված են գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունները չներկայացնելու հետ և, որոնք տեղի են ունեցել մինչև սույն Կանոնների ուժի մեջ մտնելը, կարող են պատժվել ըստ սույն Կանոնների, եթե խախտումը տեղի է ունեցել 2014 թ հունվարի 1-ից հետո:

**20.7.4** Եթե խախտումը տեղի է ունեցել մինչև սույն Կանոնների ուժի մեջ մտնելը, բայց որակագրկման ժամկետը շարունակվում է նաև 2015թ-ին, ապա համաձայն սույն Կանոնների դրույթների մարզիկը կարող է դիմել Հակադոպինգային կազմակերպություն, որը պատասխանատու է որակագրկման համար, իր որակագրկման պատժամիջոցը կրճատելու նպատակով: Այդպիսի դիմումը պետք է ներկայացվել մինչ որակագրկման ժամկետի ավարտը: Պատժամիջոցը կրճատելու վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի համաձայն 13.2 կետի:

**20.7.5** Երկրորդ խախտման համար պատժամիջոցը որոշվում է համաձայն սույն Կանոնների 10.7.1 կետի, եթե նույնիսկ որակագրկումը կատարվել է ըստ նախկին կանոնների:

## **ՀՈՒՎԱԾ 21 ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**21.1** Օրենսգրքի պաշտոնական տեքստը ՀՀԳ-ն հրապարակում է Անզլերեն և Ֆրանսերեն լեզուներով: Տեքստերի միջև հակասությունների դեպքում անզլերեն տարբերակը գերակայություն ունի:



**21.2** Օրենսգրքում բերված մեկնաբանությունները օգտագործվում են Կանոնների տարբեր դրույթների պարզաբանման համար:

**21.3** Օրենսգիրքը հանդիսանում է անկախ և չի ենթարկվում Օրենսգիրքը ընդունած որևէ երկրի օրենքներին կամ կառավարության որոշումներին:

**21.4** Օրենսգիրքի հոդվածների անվանումները նախատեսված են միայն հարմարության համար և չպետք է համարվեն այս Կանոնների առանձին մաս կամ կետ:

**21.5** Օրենսգիրքը ուժի մեջ է մտնում 2015թ. Հունվարի 1-ից և չպետք է կիրառվի այդ ամսաթվից շուտ: Կանոնների խախտումները, որոնք տեղի են ունեցել մինչև Օրենսգրքի ուժի մեջ մտնելը կհամարվեն առաջին խախտում կամ երկրորդ խախտում համաձայն 10-րդ հոդվածի պատժամիջոց նշանակելու նպատակով այն խախտումների համար, որոնք տեղի են ունեցել 2015թ. Հունվարի 1-ից հետո:

**21.6** Օրենսգիրքի նպատակը, կիրառման ոլորտը, պարզաբանումները, հավելված 1 և 2-ը, հոդված 10-ի կիրառման օրինակները և Օրենսգրքով սահմանված Համաշխարային հակադոպինգային ծրագիրը հանդիսանում են Օրենսգիրքի անբաժան մասը:

21.7 Օրենսգիրքը պետք է թարգմանվի հայերեն ՀՀ պետական թարգմանչական կազմակերպության կողմից համաձայն ՀՀ օրենքների օգտագործելով Կենտրոնի խորհրդատվությունները:

## **ՀՈՒՎԱԾ 22 ՄԱՐԶԻՎՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**22.1** Մարզիկների դերը և պարտականությունները

**22.1.1** Լինել տեղեկացված և համապատասխանել սույն Կանոններին:

**22.1.2** Միշտ լինել հասանելի նմուշառման համար:

*[Մեկնաբանություն 22.1.2-ի կետի վերաբերյալ: Հաշվի առնելով մարզիկի իրավունքների և անձնական կյանքի պահպանման պահանջը հակադոպինգային կանոնները երբեմն պահաջում են իրականացնել նմուշառումը առավոտյան շուտ կամ ուշ երեկոյան: Օրինակ հայտնի է որ որոշ մարզիկներ կարող են օգտագործել EPO-ի ցածր դեղաչափեր ուշ երեկոյան որոնք անհնար է հայտնաբերել առավոտյան:]*

**22.1.3** Լինել պատասխանատու իրեն կողմից օգտագործվող նյութերի համար:

**22.1.4** Տեղեկացնել բժշկական անձնակազմին իրենց պարտավորության մասին՝ չօգտագործել արգելված նյութեր և մեթոդներ, և պատասխանատվություն ստանձնել, որպեսզի համոզվեք, որ որևէ բուժման ընթացքում չեն օգտագործվում արգելված նյութեր, ինչը կարող է հանգեցնել կանոնների խախտմանը:

**22.1.5** Օգնել իրենց միջազգային ֆեդերացիային և Կենտրոնին բացահայտել այլ մարզիկների կողմից վերջին տասը տարում Կանոնների խախտման փաստեր, որոնք նախկինում որևէ պատճառով չեն հայտնաբերվել:

**22.1.6** Համագործակցել Հակադոպինգային Կազմակերպությունների հետ օգնելով հետաքննել Կանոնների խախտումները:

**22.2** Մարզիկին աջակցող անձնակազմի դերը և պարտականությունները

**22.2.1** Լինել տեղեկացված և համապատասխանել սույն Կանոններին:

**22.2.2** Համագործակցել դոպինգ ստուգման ծրագրի իրականացման գործընթացին:

**22.2.3** Օգտագործել իրեն հեղինակությունը մարզիկի վարքի վրա ազդելու համար:

**22.2.4** Օգնել իրենց միջազգային ֆեդերացիային և Կենտրոնին բացահայտել այլ մարզիկների կողմից վերջին տասը տարում Կանոնների խախտման փաստեր, որոնք նախկինում որևէ պատճառով չեն հայտնաբերվել:

**22.2.5** Համագործակցել Հակադոպինգային Կազմակերպությունների հետ օգնելով հետաքննել Կանոնների խախտումները:

**22.2.6** Մարզիկին աջակցող անձնակազմը չպետք է օգտագործի և տիրապետի որևէ արգելված նյութի կամ մեթոդի առանց դրա խիստ և բժշկական կամ իրավաբանական անհրաժեշտության:

ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ADAMS (ADAMS - Anti-Doping Administration and Management System): Հակադոպինգային տվյալների կարավառման համակարգ, որը նախատեսված է համացանցում տեղավորված հակադոպինգային ոլորթի վերաբերյալ բոլոր տվյալների կարավարման համար՝ ներառյալ տվյալների ներմուծումը, պահպանումը, տարածումը և հաշվետվությունների ձևակերպումը: Համակարգը մշակված է ՀՀԳ-ին և այլ շահագրգիռ կազմակերպություններին իրենց հակադոպինգային գործունեությունում օրենսդրությունը պաշտպանելու և հակադոպինգային ոլորթին վերաբերվող տվյալները գախտնի պահպանելու նպատակով:

Նշանակում (Administration): Որևէ այլ անձի կողմից արգելված նյութի կամ մեթոդի օգտագործման կամ օգտագործման փորձի տրամադրում, հսկում, մասնակցություն կամ համագործակցություն նրա հետ: Նշված հասկացությունը չի վերաբերվում բժշկական անձնակազմի բարեխիղճ գործողություններին որոնք ներառում են արգելված նյութի կամ մեթոդի օգտագործումը բուժման նպատակով, ինչը հաստատված է համապատասխան փաստաթղթերով: Նշված հասկացությունը չի վերաբերվում նաև միայն մրցումների ժամանակ արգելված նյութի կամ մեթոդի օգտագործման արտամրցումային ժամանակաշրջանում եթե համգամանքները չեն վկայում այն մասին որ տվյալ նյութերը չեն օգտագործվել միայն բուժման նպատակով, ինչը հաստատված է համապատասխան փաստաթղթերով, կամ օգտագործվել են մարզիկի աղբյուրները բարելավելու համար:

Անբարենպաստ այդունք (Adverse Analytical Finding): ՀՀԳ-ը կողմից արտոնագրված կամ հաստատված լաբորատորիայից ստացված եզրակացություն այն մասին, որ ըստ Լաբորատորիաների Միջազգային ստանդարտի և ՀՀԳ-ը տեխնիկական փաստաթղթերի իրակացված փորձաքննության արդյունքների մարզիկի կենսանմուշում հայտնաբերված է արգելված նյութի կամ նրա մեթաբոլիտների, մարկերների (ներառյալ ներածին նյութերի մեծ խտությունները) առկայությունը կամ ստացված է արգելված մեթոդի օգտագործման փաստը:

Հակադոպինգային կազմակերպություն (Anti-Doping Organization): Ստորագրող կողմ, որը պատասխանատու է հակադոպինգային կանոնների մշակման համար, որոնք ուղղված են դոպինգ ստուգման գործընթացի ցանկացած մասի իրականացմանը: Այդ կազմակերպություններ են հանդիսանում օրինակ՝ Միջազգային Օլիմպիական Կոմիտեն, Միջազգային ՊարաՕլիմպիական Կոմիտեն, Համաշխարհային Հակադոպինգային Գործակալությունը, Միջազգային Ֆեդերացիաները, Ազգային Հակադոպինգային կազմակերպությունները, միջազգային մրցումների կազմկոմիտեներ, որոնք իրականացնում են դոպինգ ստուգում՝ իրենց կողմից իրականացվող մրցումների ժամանակ:

*Մարզիկ (Athlete)* Ցանկացած անձ, ով մասնակցում է միջազգային մրցումներին (ինչպես դա սահմանված է յուրաքանչյուր միջազգային ֆեդերացիայի կողմից), ազգային մրցումներին (ինչպես դա սահմանված է յուրաքանչյուր ազգային ֆեդերացիայի կողմից) ընդգրկելով, բայց ոչ սահմանափակելով այն անձանց, որոնք ընգրկված են նպատակային դոպինգ ստուգման ցուցակում և այլ մրցումների յուրաքանչյուր մասնակից, որը գտնվում է հակադոպինգային Օրենսգիրքը ճանաչող կազմակերպության իրավասության դաշտում:

ՀՀԳ-ի Օրենսգրքի բոլոր կանոնները, կիրառելի են ազգային և միջազգային մակարդակի մրցումներին մասնակից ցանկացած մարզիկի նկատմամբ: Ազգային հակադոպինգային կազմակերպությունները կարող են անցկացնել տարբեր մակարդակի մարզիկների դոպինգ ստուգում և կիրառել հակադոպինգային կանոնները, մասսայական սպորտով զբաղվողներից մինչև բարձր կարգի մարզիկը, որը տվյալ պահին չի մասնակցում մրցումներին:

Ազգային մակարդակի մարզիկների համար կարող են մշակվել հատուկ ազգային հակադոպինգային կանոններ, որոնք չեն հակասի Օրենսգիրքին: Այսպիսով, երկրում կարող է ընդունվել որոշում, իրականացնել մասսայական մրցումների մասնակիցների դոպինգ ստուգում՝ միաժամանակ չպահանջելով նրանց գտնվելու վայրի մասին տեղեկատվություն և բուժման համար արգելված նյութերի օգտագործման թույլտվություն(ԲՀԱԴՕԹ): Խոշոր մրցաշարերում, որին մասնակցում են ազգայինից ցածր մակարդակ ունեցող անձինք, մրցումների Կազմկոմիտեն նույնպես կարող են անցկացնել դոպինգ ստուգում՝ նախապես չպահանջելով ԲՀԱԼՕ-ի թույլտվություն: Սակայն եթե մարզիկը, որը գտնվում է Հակադոպինգային կազմակերպության իրավասության տակ և մասնակցում է միջազգային և ազգային մրցումներին որոնց մակարդակը ավելի ցածր է նշված մրցումների մակարդակներից խախտում է 2.1, 2.3 կամ 2.5 կետերում նշված կանոնները նրա նկատմամբ կիրառվում են Օրենսգրքով նախատեսված պատժամիջոցներ (բացառությամբ 14.3.2 կետի): 2.8 և 2.9 կետերում նշվաչ կրթական և տեղեկատվական ծրագրերի տեսայնկունից Մարզիկ է հանդիսանում ցանկացած անձ որը զբաղվում է սպորտով ցանկացած Օրենսգիրքը ստորագրած կողմի, կարավառության կամ մարզական կազմակերպության իրավասության տակ:

*[Մեկնաբանություն: Սույն հասկացությունը հստակ հաստատում է որ միջազգային և ազգային մակարդակի մարզիկները ենթարկվում են Օրենսգրքին ինչպես նաև թյուլ է տալիս հակադոպինգային կազմակերպությանը ընդգրկել իրեն դոպինգ ստուգման ծրագրի մեջ այն մարզիկներին որոնք մասնակցում են ավելի ցածր մակարդակի մրցումներին կամ զբաղվում են ֆիտնեսով ու չեն մասնակցում որևէ մրցումների: Օրինակ ազգային հակադոպինգային կազմակերպությունը կարող է ենթարկել դոպինգ ստուգման սիրողական մակարդակի մարզիկների չպահանջելով նրանցից ԲՀԱԴՕԹ, բայց Օրենսգրքով նախատեսված կանոնների խախտման հետևանքները այս դեպքում կլինեն նյունը ինչ պրոֆեսիոնալների համար (բացառությամբ 14.3.2 կետում նշված խախտումներից): Կիրառել թե չէ Օրենսգրքով նախատեսված պատժամիջոցները սիրողական մակարդակի մարզիկների նկատմամ որոշում է հակադոպինգային*

*կազմակերպությունը: Նույն կերպով վետերանների մրցումներ անցկացնող կազմակերպությունը կարող է կայցնի որոշում թեստավորել բոլոր մասնակիցներին բյաց չկատարել փորձաքննություն բոլոր արգելված նյութերի որոշման համար:]*

*Մարզիկի կենսաբանական անագիր (Athlete Biological Passport):* Թեստավորման և հետաքննության և Լաբորատորիաների միջազգային ստանդարտների համաձայն իրականացվող տվյալների հավազման ծրագիր և մեթոդներ:

*Մարզիկին աջակցող անձ (Athlete Support Personnel):* Ցանկացած մարզիչ, մենեջեր, գործակալ, թիմի ներկայացուցիչ, պաշտոնական անձ, բժիշկ, օգնական, ծնող, կամ այլ անձ, ով աշխատում է մարզիկի հետ և օգնում է նրան պատրաստվելու և մասնակցելու մրցումներին:

*Փորձ (Attempt):* Հակադոպինգային կանոնների խախտմանը ուղղված մտածված քայլ, որը կարող է հանգեցնել կանոնների խախտմանը: Այնուամենայնիվ, այդ փորձը չի համարվի կանոնների խախտում, երե մարզիկը հրաժարվում է կանոնները խախտելու փորձից, մինչև երրորդ կողմը (մի այլ անձ՝ բացառությամբ դոպինգ սպայի և մարզիկի) չհաստատի փորձի կատարումը:

*Ատիպիկ արդյունք (Atypical Finding):* Հաշվետվություն ՀՀԳ-ի կողմից արտոնագրված կամ հավատարմագրված լաբորատորիայից, որը համաձայն լաբորատորիաների համար միջազգային ստանդարտի և այլ տեխնիկական փաստաթղթերի, պահանջում է հետագա լրացուցիչ հետազոտում, մինչ փորձաքննության արդյունքի անբարենպաստ համարելը:

*Ատիպիկ արդյունք Մարզիկի կենսաբանական անագիր (Atypical Passport Finding):*

Մարզիկի կենսաբանական անագիրում գրանցված եզրակացություն աստիպիկ արդյունքների մասին համաձայն համապատասխան միջազգային ստանդարտների:

*ՄԱԴ (CAS): Մարզական արբիտրաժային դատարան*

*Օրենսգիրք (Code): Համաշխարհային հակադոպինգային Օրենսգիրք*

*Մրցում (Competition)* Միանվագ վազքահերթ, խաղ, լողահերթ և այլն: Օրինակ բասկետբոլային հանդիպում, կամ 100 մ վազք: Բազմափուլ (բազմօրյա) մարզական իրադարձություններ, որոնցում մրցանակները խաղարկվում են ամեն օր կամ որոշակի ժամանակահատվածում: Մրցումների և մարզական իրադարձությունի մեջ տարբերությունը որոշվում է համապատասխան միջազգային մարզական ֆեդերացիայի կանոններով:

*Հակադոպինգային կանոնների խախտման հետևանքները (Consequences of Anti-Doping Rules Violations (“Consequences”))* Մարզիկի կամ որևէ այլ անձի կողմից

Հակադոպինգային կանոնների խախտումները որոնք կարող են հանգեցնել հետևյալ հետևանքների՝

- չեղյալ համարել՝ տվյալ մրցումներում Մարզիկի արդյունքը, գրկելով նրան գրկվում է իր վաստակած մեդալներից, մրցանակներից, միավորներից և գրաված տեղից
- որակագրկել տվյալ մարզիկին կամ որևէ այլ անձի որևէ ժամանակով գրկել մրցումներին մասնակցելու կամ Օրենսգրքի 10.12.1 կետում նշված ուրիշ ակտիվություն դրսևորելու իրավունքից
- ժամանակավոր հեռացում՝ մարզիկին մրցումներին մասնակցելու իրավունքից ժամանակավոր գրկում, մինչ Օրենսգրքի 8 կետի համաձայն՝ վերջնական որոշում կայացնելը:
- Ֆինանսական *հետևանքները* - ֆինանսական պատժամիջոցներ որոնք կիրառվում են հակադոպինգային կանոնների խախտման համար կամ կանոնների խախտման հետ կապված ծախսերի փոխհատուցման նպատակով:
- հասարակակն հրապարակում կամ հասարակական հաշվետվություն – լայն հասարականության համար կամ առանձին անձերի, բացարոյամբ այն անձերի որոնք համաձայն 14 հոդվածի ունեն իրավունք լինել ավելի վազ տաղեկացված, տեղեկատվության տարածում կամ հրապարակում: Թիմային մարզաձրերի համար կարող են նար կիրառվել հետրանքներ որոնք նախատեսված են 11 հոդվածով:
- *Ախտոտված ապրանքներ (Contaminated Product):* Ապրանքներ որոնք պարունակում են արգելված նյութեր, որոնք չեն նշված դրանց պուփի վրա կամ ինտերնետում

*Որակագրկում (Disqualification):* տես *Հակադոպինգային կանոնների խախտման հետևանքները*

*Դոպինգ ստուգում (Doping Control):* Դոպինգ ստուգումը ներառում է գտնվելու վայրի մասին տեղեկություն հավաքելը, նմուշառման պլանավորումը, փորձանմուշների հավաքումը ու փոխադրումը, լաբորատոր հետազոտության տվյալների ու ԲՆԱԴՕԹ մշակումը, լսումների անցկացումը և բողոքարկման վերջնական քննարկումը:

*Մարզական Իրադարձություն (Event):* Մեկ կազմակերպության ներքո անցկացվող առանձին մրցումների շարք: Օրինակ՝ Օլիմպիական Խաղեր, Աշխարհի և Եվրոպայի առաջնություններ, Համահայկական Խաղեր և այլն:

*Մոշոր միջազգային մրցումների կազմկումիտներ (Major Event Organizations):* Մի քանի մարզաձև միավորող ԱՕԿ-ների և միջազգային կազմակերպությունների

աշխարհամասային Ասոցիացիաներ, որոնք պատասխանու են աշխարհամասային, ռեգիոնալ և այլ միջազգային մարզական իրադարձությունների անցկացման համար:

Մարզական Իրադարձության Ժամանակահատված (Event Venues): Մարզական Իրադարձության անց կացման վայրը:

Մարզական Իրադարձության Ժամանակահատված (Event Period): Մարզական Իրադարձության սկզբի և վերջի միջև ընկած Ժամանակահատված:

Մեղք (Fault): Աչալրջույան և պարտասխանատվության զգացումքի պաքաս համապատասխան իրավիճակներում: Գործոնները որոնք պետք է հաշվի առնվեն մարզիկի կամ այլ անձի մեխքի աստիճանի գրահատման համար ներառում են օրինակ մարզիկի կամ այլ անձի փորձը, չափահաս լինելը, հատոիկ հանգամանքները օրինակ հաշվանդամությունը, ռիսկի աստիճան որը պետք է հաշվի արնի մարզիկը: Մարզիկի կամ այլ անձի մեխքի աստիճանի գրահատման համար օգտագործվող հանգամանքները պետք է լինեն որոշակի և գործին վեևաբերվող, որպեսի բացատրեն մարզիկի կամ այլ անձի սպասվող վարքի ստանդարտից շեղումները: Օրինակ այն հանգամանքները որը որակազրկման ժամանակաշրջանում մարզիկը կկորցնի գումար աշխատելու հնարավորությունը կամ նրա սպորտով ակտիվ զբաղվելու ժամկետ կկրճատվի կամ մրցումների ժամանակացուցը կխախտվի չեն կարող համարվեն գործին վերաբերվող փաստեր 10.5.1 կամ 10.5.2 կետով նափատոեսված որակազրկման ժամկետը նվազեցնելու համար:

*[Մեկնաբանություն: Մարզիկի մեխքը գնահատելու չափանիշները միրնույն են բոլոր դեպքերի համար որտեղ մեխքի աստիճան ընդունվում է ի ուշադրություն: Մակայն համաձայն 10.5.2 կետի պատժամիջոցի նվազեցում չի նափատեսվում բացառությամբ այն դեպքերի երբ մեխքի աստիճանը որոշման ժամանակ չի իրականվել եզրակացություն մարզիկի կամ այլ անձի չնչին մեխքի կամ անփությունության վերաբերյալ:]*

Մրցումային Ժամանակահատված (In-Competition) Ժամանակահատված, որը սկսվում է մրցումներից 12 ժամ առաջ և վերջանում փորձանմուշների հավաքման գործընթացի ավարտով, եթե Միջազգային Ֆեդերացիաների կամ համապատասխան Հակադոպինգային կազմակերպության կանոններում չկան այլ տարբերակներ:

*[Մեկնաբանություն: Որոշ միջազգային ֆեդերացիաների կամ խոշոր մրցումների կազկումիտենների կանոններում մրցումային ժամանակահատվածը կարող է տարբերվել մրցումների ժամանակահատվածիծ:]*



Դիտարկման Անկախ Ծրագիր (Independent Observer Program): Դիտարկման խումբ ՀՀԳ-ի հսկողության ներքո, որը կարող է ղեկավարել դրպինգ ստուգման գործընթացը տվյալ Մարզական Իրադարձության Ժամանակ և ներկայացնել հաշվետվություն իրենց դիտարկումների վերաբերյալ:

Անհատական մարզաձև (Individual Sport): Ցանկացած մարզաձև, որը չի հանդիսանում թիմային մարզաձև:

Միջազգային մակարդակի մարզիկ (International-Level Athlete) Մարզիկ, որը մասնակցում է միջազգային մրցումների, ընդգրկված է Միջազգային Ֆեդերացիաների դրպինգ ստուգման ցուցակում ըստ Թեստավորման և Հետաքննության Միջազգային Ստանդարտի:

[Մեկնարանություն: Համաձայն Թեստավորման և Հետաքննության Միջազգային Ստանդարտի միջազգային ֆեդերացիայի իրավունք ունի ինքնուրույն որոշել չափանիշները որոնք պետք է օգտագործվեն մարզիկի մակարդակը որոշելու համար Օրինակ մարզիկի միջազգային կարգը կորոշ է որոշվել ըստ նրա բեյտինգի, արտոնագրի, որոշակի միջազգային մրցումներին մասնակցելուն և այլն: Այդ չափանիշները պետք է հրապարակվեն հստակ և պարզ ձևով, որպիսի մարզիկները կարողանան հետությամբ կողմնորոշվեն հանդիսանում են այրոյոկ նրանք միջազգային կարգի մարզիկ: Օրինակ եթե չափորիշներից մեկը հանդիսանում է որոշակի միջազգային մրցումներին մասնակցությունը ապա միջազգային ֆեդերացիայի պետք է հրապարակի այդ մրցումների ցուցակը:]

Միջազգային Ստանդարտ (International Standard): Ստանդարտ, որն ընդունված է ՀՀԳ-ի կողմից: Համապատասխանեցումը Միջազգային Ստանդարտին բավարար հիմք է որոշելու, թե արդյոք ք այս կամ այն գործընթացը կատարվել է պատշաճ մակարդակով: Միջազգային Ստանդարտները պետք է ներառեն Տեխնիկական փաստաթղթեր որոնք հանդիսանում են միջազգային ստանդարտի հավելումներ:

Խոշոր միջազգային մրցումների կազմակերպիչներ (Major Event Organizations): Մի քանի մարզաձև միավորող ԱՕԿ-ների և միջազգային կազմակերպությունների աշխարհամասային Ստոյիացիաներ, որոնք պատասխանու են աշխարհամասային, ռեգիոնալ և այլ միջազգային մարզական իրադարձությունների անցկացման համար:

Մարկերներ (Marker): Նյութեր, նյութերի խումբ կամ կենսաբանական ցուցանիշներ, որոնք վկայում են այն մասին, որ մարզիկը օգտագործել է արգելված նյութեր կամ արգելված մեթոդներ:

Մեթաբոլիտ (Metabolite): Նյութեր, որոնք առաջանում են օրգանիզմում նյութափոխանակության ժամանակ, հանդիսանում են կոնկրետ նյութի քայքայման արգասիք :

Անչափահաս (Minor): Ցանկացած անձ, որը համաձայն իր երկրի օրենքի չի հասել չափահաս տարիքի:

Ազգային Հակադոպինգային Կազմակերպություն (National Anti-Doping Organization): Կազմակերպություն, որն իր երկրում մշակում է Հակադոպինգային կանոններ և պատասխանատու է ազգային մակարդակով այդ կանոնների իրականացմանը համար՝ ներառյալ նմուշառումը, դպինգ ստուգման արդյունքների կարավառումը, Լսումների իրականացումը: Եթե Ազգային Հակադոպինգային Կազմակերպությունը չի ղեկավարվում պետական մարմինների կողմից, ապա նա կարող է լինել ԱՕԿ-ը կամ նրա կողմից լիազորված կառույց:

Ազգային Մարզական Իրադարձություն (National Event): Մարզական Իրադարձություն, որը Միջազգային չէ և որին մասնակցում են միջազգային և ազգային մակարդակի մարզիկներ:

Ազգային Ֆեդերացիա (National Sports Federation): Որևէ ազգային, մարզային կամ տարածքային պետական կամ հասարակական մարզական ներկայացուցիչ որը հանդիսանում է միջազգային ֆեդերացիայի անդամ:

Ազգային մակարդակի մարզիկ (International-Level Athlete): Մարզիկ, որը չի հանդիսանում Միջազգային մակարդակի մարզիկ և ընգրկված է Ազգային Հակադոպինգային Կազմակերպության թեստավորման ցուցակում: Ազգային մակարդակի մարզիկի համար չափորոշիչները բերված են սյուն Կանոնների 1.4 կետում:

Ազգային Օլիմպիական Կոմիտե (National Olympic Committee): Կազմակերպություն որը ճանաչված է Միջազգային Օլիմպիական Կոմիտեի կողմից: Ազգային Օլիմպիական Կոմիտե հակացողությունը վերաբերվում է նաև ազգային մարզական կոնֆեդերացիաներին այն երկրներում, որտեղ Ազգային Օլիմպիական Կոմիտե պարտականությունները կատարում են ազգային մարզական կոնֆեդերացիաները:

Մեղքի և անփութության քաղաքացիություն (No Fault or Negligence): Իրավիճակ, երբ հաստատվում է այն փաստը, որ մարզիկը չգիտեր, հնարավորություն չունեի իմանալու, կասկածելու, որ նա օգտագործել է արգելված նյութ կամ մեթոդ՝ նույնիսկ, եթե նա իրականացրել է առավելագույն նախազգուշական քայլեր՝ այդ նյութերը կամ մեթոդները չօգտագործելու համար: Եթե մարզիկը չի հանդիսանում անչափահաս արա 2.1 կետում նշված կանոնները խախտելու դեպքում նա պարտավոր է ապացուցի թե ինչ կերպ է արգելված նյութը ներմուծվել իր օրգանիզմ:

[Մեկնաբանություն: Կանոնաբիտիղների վերաբերյալ մարզիկը կարող է ապացուցի իր ոչ նշանակալի մեխքը կամ անփութությունը այն դեպքում եթե ապացուցի որ դրանք պարունակող խարնուրդները չի օգտագործվել մարզական աշխատանքային մեծացներու նպատակով:]

Արտամրցումային դոպինգ ստուգում (Out-of-Competition) Ցանկացած դոպինգ ստուգում, որը կատարվում է մրցումային ժամանակահատվածից դուրս:

Աղտոտված ապրանք (Contaminated Products) Ցանկացած մթերք, սննդային հավելում, վիտամինների կամ դեղաբույսերի հավաքածու, որոնք պարունակում են արգելված նյութեր կամ մեթոդներ, ինչի մասին նշված չէ դրանց պիտակի վրա:

Մասնակից (Participant): Որևէ մարզիկ կամ մարզիկին աջակցող անձ:

Անձ (Person): Ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ որևէ այլ իրավաբանական անձ:

Տիրապետում (Possession) Ուղղակի ֆիզիկական կամ ապացուցված անուղղակի տիրապետում, երբ որևէ անձ տիրապետում է արգելված նյութի կամ մեթոդի, կամ ունի այն տարածքի բացառիկ հսկման իրավունք, որտեղ գտնվում են արգելված նյութերը կամ մեթոդները, կամ եթե այդ անձը չունի վերընշված բացառիկ հսկման իրավունք, բայց պատրաստվում է իրականացնել հսկումը: Հակադրապինգային կանոնների խախտում միայն տիրապետման հիման վրա չի կարող համարվել այն դեպքերը, երբ այն անձը, որը տիրապետում է արգելված նյութերի կամ մեթոդների, կապացուցի, որ նա երբեք չի պատրաստվել օգտագործել արգելված նյութեր/մեթոդներ, անմիջապես տեղեկացնելով Հակադրապինգային կազմակերպությունը: Արգելված նյութերի կամ մեթոդների գնումը էլեկտրոնային կամայլ միջոցներով նույնպես համարվում է գնումը իրանակցրած անձի կողմից Արգելված նյութերի կամ մեթոդներին տիրապետում:

[*Մեկնաբանություն: Ըստ բերված հասկացողությանը եթե մարզիկի ավտոմեքենայում հայտնաբերվել են ստերոիդները սպա դա կնշանակի կանոնների խախտում, բացի այն դեպքերից երբ մարզիկը կապացուցի որ դրանք պատկանում են այլ անձի որը օգտվել է իր մեքենայից: Մակայն այդ դեպքում հակադրապինգային կազմակերպությունը պետք է ապացուցի որ նյունիսկ եթե մարզիկը չի ունեցել այդ պահիտ անձնական հսկողություն մեքենայի նկատմամբ նա տեղյակ է եղել այդ ստերոիդների մասին և պատրաստվել է օգտագործել դրանք: Նույնը վերաբերվում է այն իրավիճակին երբ մարզիկի տանը հայտնաբերվել են ստերոիդներ որոնք կարող են օգտագործել մարզիկի ամուսինը, բայց մարզիկը տեղյակ է եղել այդ ստերոիդների մասին և պատրաստվել է օգտագործել դրանք: Արգելված նյութերի գնման փաստը նյուն պես հանդիսանում է «տիրապետում» նյունիսկ այն դեպքերում երբ այդ նյութերը դեռ չեն հասել պատվիրատուին կամ նախատեսված են եղել ինչոր երրորդ անձի համար:]*

Արգելված նյութերի ցուցակ (Prohibited Substance List): ՀՀԳ-ի կողմից հաստատված ցուցակ, որը ներառում է արգելված նյութերը և մեթոդները:

Արգելված մեթոդներ (Prohibited Method): Մեթոդներ, որոնք ներառված են Արգելված նյութերի և մեթոդների ցուցակում:

Արգելված նյութեր (Prohibited Substance): Նյութեր, որոնք ներառված են Արգելված նյութերի և մեթոդների ցուցակում:

Նախնական լսումներ (Provisional Hearing): 7.9 կետով նախատեսված Արագացված լսումներ, որոնք տեղի են ունենում 8-րդ հոդվածով նախատեսված լսումներից առաջ և իրավունք են տալիս մարզիկին տրամադրել իր գործի մասին տվյալները և ստանալ գրավոր ծանուցում լսումները իրականացնող խմբի կողմից այդ տվյալները ստանալու վերաբերյալ:

*[Մեկնաբանություն: Նախնական լսումները դա միայն արագին փուլն է, որում չի նախատեսվում գործի բոլոր փաստերի քննարկումը: Նախնական լսումներից հետո մարզիկը իրավունք ունի պահանջել անցնացնել հիմնական լսումներ: Իհակարակ 7.9 կետում նշված «Նախնական լսումները» նախատեսում են հիմնական լսումների իրականացումը արագացված կերպով:]*

Տարացկային հակադոպինգային կազմակերպություն (Regional Anti-Doping Organization): Տարացկային կազմակերպություն որը լիազորված է մասնակից երկրների կողմից համակարգել և իրականացնել ազգային հակադոպինգային ծրագրերի որոշ գործընթացներ ներառյալ թեստավորման նախագծումը, նմուշառումը, դոպինգ ստուգման արդյունքների կարավառումը, ԲՆԱԴՕԹ տրամադրումը, լսումների իրականացումը, տարացկային մակարդակով կրթական ծրագրերի իրականացումը:

Նպատակային դոպինգ ստուգման ցուցակ (Registered Testing Pool): Բարձրագույն կարգի մարզիկների դոպինգ ստուգում, որն իրականացվում է Միջազգային Ֆեդերացիաների կամ Ազգային հակադոպինգային կազմակերպության կողմից և ընդգրկված է Միջազգային Ֆեդերացիաների կամ Ազգային հակադոպինգային կազմակերպության դոպինգ ստուգման նախագծում: Ցուցակում ընդգրկված մարզիկները պարտավոր են ներկայացնել իրենց գտնվելու վայրի մասին տեղեկությունները ըստ Օրեսգրքի 5.6 կետի և Թեստավորման և Հետաքննության միջազգային ստանդարտի պահանջների:

Փորձանմուշ կամ նմուշ (Sample or Specimen): Ցանկացած կեսաբանական նմուշ որը հավաքվում է դոպինգ ստուգման նպատակով:

*[Մեկնաբանություն: Երբեմն արվում են հայտարարություններ որ այրյան նմուշների հավաքումը հակաճառում է որոշ եկեղեցական կամ մշակութային խմբերի սովորույթներին: Հաստատված է որ այդպիսի հայտարարությունների համար ոչ մի հիմք գոյություն չունի:]*

Ստորագրող կողմեր (Signatories): Կազմակերպություններ, որոնք ստորագրել են Օրենսգիրքը և համաձայնվել են պահպանել նրա մեջ շարադրված սկզբունքները և կանոնները ըստ Օրենսգիրքի 23-րդ հոդվածի:

Հատուկ նյութեր (Specified Substance): տես 4.2.2 կետը:

Երկու պատասխանատվություն (Strict Liability): Կանոն որը նախատեսում է որը 2.1 և 2.2 կետերի համաձայն չկա անհրաժեշտություն որ հակադրապինգային կազմակերպությունը ապացուցի մարզիկի մտադրությունը, մեխքը, անփութությունը կամ կանոների գիտակցաբար խախտումը:

Զգալի աջակցություն (Substantial Assistance): Համաձայն Օրենսգրքի 10.6.1 կետի, անձը, որը ցուցաբերում է զգալի աջակցություն պետք է՝

- (1) ներկայացնի գրավոր, ստորագրված փաստաթուղթ, հակադրապինգային կանոնների խախտման մանրամասնություններով,
- (2) ցուցաբերի աջակցություն տվյալ դեպքի հետաքննությանը և պաշտոնական պարզաբանմանը, օրինակ՝ ցուցմունքներ տալ լսումների ժամանակ: Ներկայացվող տեղեկատվությունը պետք է լինի վստահելի և կարևոր տվյալ դեպքի քննության համար: Եթե գործը դեռ չի հարուցվել, տեղեկատվությունը պետք է լինի բավարար գործը հարուցելու համար:

Կեղծում (Tampering): Ապօրինի նպատակով և/կամ մեթոդով փորձանմուշի փոփոխություն, ապօրինի միջամտություն, խոչընդոտում, մոլորության մեջ գցում, խարդախություն՝ արդյունքների փոփոխության նպատակով, հակադրապինգային գործընթացների անցկացման խոչընդոտում և հակադրապինգային Կազմակերպությանը ոչ հավաստի տեղեկատվության տրամադրում:

Նպատակային թեստավորում (Target Testing): Դոպինգ ստուգման համար մարզիկների կամ մարզիկների խմբի ընտրություն, որը կատարվում է ոչ պատահական կերպով, ըստ Թեստավորման և հեքննության միջազգային ստանդարտի պահանջների:

Թիմային Մարզաձև (Team Sport): Մարզաձև, որում թույլատրված է մարզիկների սահմանափակ փոփոխություն մրցումների ընթացքում:

Թեստավորում (Testing): Դոպինգ ստուգման գործընթացի այն փուլը, որը ընդգրկում է նմուշների հավաքման նախագծում, նմուշների հավաքում, նմուշների հետ կատարվող գործողություններ և նրանց տեղափոխում լաբորատորիա:

Տրաֆիկինգ (Trafficking): Հակադրապինգային կազմակերպության իրավասության տակ գտնվող մարզիկի կամ նրան աջակցող անձանց կողմից անմիջական, կամ էլեկտրոնային միջոցների օգնությամբ՝ որևէ երրորդ անձին արգելված նյութերի և մեթոդների վաճառք, փոխանցում, տեղափոխում, առաքում և բաժանում: Այս ձևակերպումը չի վերաբերում բարեխիղճ բժշկական անձնակազմին, որը օգտագործում է արգելված նյութերը բուժման համար կամ մի որևէ ուրիշ արդար նպատակներով: Այս ձևակերպումը նույնպես չի ընգրկում գործընթացներ արտամրցումային ժամանակահատվածում թույլատրված նյութերի հետ, եթե հանգամանքները ապացուցում են, որ բացակայում է մտադրությունը օգտագործել արգելված նյութերը ոչ բժշկական նպատակներով:

ԲՆԱԴՕԹ (TUE) :Բուժման նպատակով արգելված դեղերի օգտագործում ինչպես նկարագրված է 4.4 կետում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կոնվենցիա (UNESCO Convention): Դոպինգի դեմ ուղղված Միջազգային Կոնվենցիա, որը ընդունվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թ հոկտեմբերի 19-ի Գագաթաժողովի 33-րդ նստաշրջանում (ներառյալ բոլոր ուղղումները, որոնք ընդունել են Կոնվենցիայի մասնակից պետությունները և Սպորտում դոպինգի դեմ պայքարի Միջազգային Կոնվենցիայի Կոնֆերանսին մասնակիցները):

Օգտագործում (Use ): Ներարկման միջոցով կամ սննդի հետ, ինչպես նաև որևէ ուրիշ կերպով արգելված նյութերի և մեթոդներին օգտագործում:

ՀՀԳ (WADA ): Համաշխարային Հակադոպինգային Գործակալություն, որը հիմնվել է Լոզանում 1999թ նոյեմբերի 10-ին:

## **APPENDIX 2**

*Հետևյալ չորս օրինակները ցույց են տալիս վերլուծության պատշաճ հաջորդականությունը:*

### Օրինակ 1

Փաստեր: Անբարենպաստ փորձաքննության արդյունքները բացահայտել են փորձանմուշում անաբուլիկ ստերոիդների առկայությունը, ենթադրվում է, որ մարզիկը անմիջապես խոստովանում է հակադոպինգային կանոնների խախտման փաստը, մարզիկն ապացուցում է իր օռչ նշանակալից մեղքը (հոդված 10.5.2) և ցուցաբերում է էական աջակցություն հետաքննությանը (հոդված 10.5.3.):

10-րդ հոդվածի կիրառություն:

I. 10.2. հոդվածի համաձայն հիմնական պատժաչափը կլինի երկու տարի: Ծանրացնող հանգամանքները (հոդված 10.6.) հաշվի չեն առնվելու, քանի որ մարզիկը միանգամից խոստովանել է արարքի մասին: 10.4. հոդվածը չի կիրառվելու, քանի որ ստերոիդ նյութերը օհատուկ նյութեր և չեն հանդիսանում:

II. Հիմնվելով միայն օռչ նշանակալից մեղքի վրա՝ պատժաչափը կարող է նվազեցվել մինչև երկու տարվա ժամկետի կեսը: Հիմնվելով միայն էական աջակցության վրա՝ պատժաչափը կարող է նվազեցվել մինչև երկու տարվա ժամկետի երեք քառորդը:

III. 10.5.5. հոդվածի համաձայն օռչ նշանակալից մեղքի և օէական աջակցության օ միասնական, հնարավոր նվազեցումը հաշվի առնելով՝ պատժաչափը կարող է առավելագույնը նվազեցվել մինչև երկու տարվա ժամկետի երեք քառորդը: Այսպիսով, նվազագույն պատժաչափը կլինի որակագրկման վեցամսյա ժամկետ:

IV. 10.9.2. հոդվածի համաձայն՝ քանի որ մարզիկը միանգամից խոստովանել է հակադոպինգային կանոնների խախտման փաստը, որակագրկման ժամկետը կարող է սկսվել նմուշառման օրվանից, սակայն բոլոր դեպքերում մարզիկը պետք է կրի որակագրկման ժամկետի առնվազն կեսը (նվազագույնը՝ երեք ամիս)՝ որոշումը կայացնելու օրվանից սկսած:

Օրինակ 2

Փաստեր: Փորձաքննության անբարենպաստ տվյալները ընդգրկում են մարզիկի նմուշում անաբուլիկ ստերոիդների առկայությունը, առկա են ծանրացնող

հանգամանքներ և մարզիկը չի կարող ապացուցել, որ անգիտակցաբար է կատարել հակադրափնզային կանոնների խախտումը: Մարզիկը միանգամից չի ընդունում կանոնների խախտման փաստը, սակայն ցուցաբերում է էական աջակցություն:

10-րդ հոդվածի կիրառություն:

I. Հիմնական պատժաչափը կլինի երկուսից մինչև չորս տարի որակազրկումը՝ 10.6. հոդվածի համաձայն:

II. Հիմնվելով էական աջակցության վրա պատժաչափը կարող է նվազեցվել մինչև չորս տարի առավելագույն ժամկետի երեք քառորդը:

III. 10.5.5. հոդվածը չի կիրառվում:

IV. 10.9.2. հոդվածի համաձայն՝ որակազրկման ժամկետը սկսվելու է Լսումների որոշման կայացման օրվանից:

Օրինակ 3

Փաստեր: Փորձաքննության անբարենպաստ տվյալները հաստատում են հատուկ նյութերի առկայությունը: Մարզիկն ապացուցում է, թե ինչպես է այդ նյութը ներթափանցել իր օրգանիզմ և որ ինքը չի ունեցել սպորտային արդյունքները բարելավելու մտադրություն և ապացուցում է, որ իր մեղքի չափը շատ փոքր է, ինչպես նաև ցուցաբերում է էական աջակցություն (հոդված 10.5.3.):

10-րդ հոդվածի կիրառություն:

I. Քանի որ անբարենպաստ վերլուծական եզրակացությունը հաստատում է հատուկ նյութերի առկայությունը և մարզիկի գործողությունները բավարարում են 10.4. հոդվածի մյուս պայմանները, հիմնական պատժամիջոցը կլինի նկատողությունից մինչև երկու տարի որակազրկում: Լսումներ իրականացնող հանձնաժողովը պատիժը նշանակելիս մարզիկի մեղքը կգնահատի այդ սահմաններում: (Այս օրինակի նպատակն այն է, որ Լսումներ իրականացնող հանձնաժողովը կարող էր նշանակել որակազրկման ութամսյա ժամկետ):

II. Հիմնվելով  էական աջակցության  վրա՝ պատժաչափը կարող է նվազեցվել մինչև ութ ամսվա երեք քառորդը (ոչ պակաս, քան երկու ամիս):  Ոչ նշանակալից մեղքը  կիրառելի չէ, քանի որ մարզիկի մեղքի աստիճանն արդեն



հաշվի է առնվել որակագրկման առաջին փուլում ութամսյա ժամկետ նշանակելիս:

III. 10.5.5. հոդվածը չի կիրառվում:

IV. 10.9.2. հոդվածի համաձայն՝ քանի որ մարզիկը միանգամից խոստովանել է հակադոպինգային կանոնի խախտման փաստը, որակագրկման ժամկետը կարող է սկսվել նմուշառման օրվանից, սակայն բոլոր դեպքերում մարզիկը պետք է կրի որակագրկման ժամկետի առնվազն կեսը (նվազագույնը՝ մեկ ամիս)՝ որոշումը կայացնելու օրվանից սկսած:

#### Օրինակ 4

Փաստեր: Մարզիկը, որը երբեք չի ունեցել փորձաքննության անբարենպաստ եզրակացություն և երբեք չի խախտել հակադոպինգային կանոնները միանգամից խոստովանել է, որ իր մարզական արդյունքները բարելավելու համար կամավոր կերպով օգտագործել է բազմաթիվ արգելված նյութեր:

Մարզիկը նաև ցուցաբերել է էական աջակցություն (հոդված 10.5.3.):

#### 10-րդ հոդվածի կիրառություն

I. Մարզական արդյունքները բարելավելու համար արգելված նյութերի միտումնավոր օգտագործումը, չնայած կարող է դիտարկվել որպես ծանրացնող հանգամանք (հոդված 10.6.), մարզիկի ինքնակամ խոստովանությունը նշանակում է, որ 10.6. հոդվածը չի կիրառվելու: Փաստը, որ մարզիկը միտումնավոր է օգտագործել արգելված նյութեր բացառում է 10.4. հոդվածի կիրառությունը՝ անկախ նրանից, թե հաղիսանում են այդ արգելված նյութերը հատուկ նյութեր են, թե ոչ: Այսպիսով, 10.2. հոդվածը կիրառելի է և նշանակած որակագրկման ժամկետը կկազմի երկու տարի:

II. Հիմնվելով միայն մարզիկի ինքնակամ խոստովանության վրա (հոդված 10.5.4.)՝ որակագրկման ժամկետը կարող է նվազեցվել մինչև երկու տարվա կեսը: Հիմնվելով միայն էական աջակցության վրա (հոդված 10.5.3.)՝ պատժաչափը կարող է նվազեցվել մինչև երկու տարվա ժամկետի երեք քառորդը:

III. Ըստ 10.5.5. հոդվածի՝ հաշվի առնելով ինքնակամ խոստովանությունը և էական աջակցությունը, պատժաչափը կարող է առավելագույնը նվազեցվել

մինչև երկու տարվա երեք քառորդը (որակազրկման նվազագույն ժամկետը կլինի վեց ամիս):

IV. Եթե լսումները իրականացնող հանձնաժողովի կողմից՝ 10.5.4. հոդվածը հաշվի է առնվում և կայացվում է որոշում նշանակել որակազրկման նվազագույն վեցամյա ժամկետ, ապա որակազրկումը կսկսվի լսումները իրականացնող հանձնաժողովի կողմից պատժաչափի նշանակման օրվանից: Եթե, այնուամենայնիվ, լսումները իրականացնող հանձնաժողովի հաշվի չառնի 10.5.4. հոդվածը, ապա 10.9.2. հոդվածի համաձայն որակազրկումը կսկսվի հակադոպինգային կանոնների խախտման օրվանից՝ այն պայմանով, որ մարզիկը կկրի այդ ժամկետի առնվազն կեսը (նվազագույնը՝ երեք ամիս)՝ Լսումներում որոշման կայացնելու օրվանից:

#### EXAMPLE 5.

##### Facts:

*An Athlete Support Person helps to circumvent a period of Ineligibility imposed on an Athlete by entering him into a Competition under a false name. The Athlete Support Person comes forward with this anti-doping rule violation (Article 2.9) spontaneously before being notified of an anti-doping rule violation by an Anti-Doping Organization.*

##### Application of Consequences:

1. According to Article 10.3.4, the period of *Ineligibility* would be from two up to four years, depending on the seriousness of the violation. (Assume for purposes of illustration in this example that the panel would otherwise impose a period of *Ineligibility* of three years.)
2. There is no room for *Fault*-related reductions since intent is an element of the anti-doping rule violation in Article 2.9 (see comment to Article 10.5.2).
3. According to Article 10.6.2, provided that the admission is the only reliable evidence, the period of *Ineligibility* may be reduced down to one-half. (Assume for purposes of illustration in this example that the panel would impose a period of *Ineligibility* of 18 months.)
4. The information referred to in Article 14.3.2 must be *Publicly Disclosed* unless the *Athlete Support Person* is a *Minor*, since this is a mandatory part of each sanction (Article 10.13).

## EXAMPLE 6.

Facts: An *Athlete* was sanctioned for a first anti-doping rule violation with a period of *Ineligibility* of 14 months, of which four months were suspended because of *Substantial Assistance*. Now, the *Athlete* commits a second anti-doping rule violation resulting from the presence of a stimulant, which is not a *Specified Substance* in an *In-Competition* test (Article 2.1); the *Athlete* establishes *No Significant Fault or Negligence*; and the *Athlete* provided *Substantial Assistance*. If this were a first violation, the panel would sanction the *Athlete* with a period of *Ineligibility* of 16 months and suspend six months for *Substantial Assistance*.

### Application of Consequences:

1. Article 10.7 is applicable to the second anti-doping rule violation because Article 10.7.4.1 and Article 10.7.5 apply.
2. Under Article 10.7.1, the period of *Ineligibility* would be the greater of:
  - (a) six months;
  - (b) one-half of the period of *Ineligibility* imposed for the first anti-doping rule violation without taking into account any reduction under Article 10.6 (in this example, that would equal one-half of 14 months, which is seven months); or
  - (c) twice the period of *Ineligibility* otherwise applicable to the second anti-doping rule violation treated as if it were a first violation, without taking into account any reduction under Article 10.6 (in this example, that would equal two times 16 months, which is 32 months).

Thus, the period of *Ineligibility* for the second violation would be the greater of (a), (b) and (c), which is a period of *Ineligibility* of 32 months.

3. In a next step, the panel would assess the possibility for suspension or reduction under Article 10.6 (non-*Fault*-related reductions). In the case of the second violation, only Article 10.6.1 (*Substantial Assistance*) applies. Based on *Substantial Assistance*, the period of *Ineligibility* could be suspended by three-quarters of 32 months.\* The minimum period of *Ineligibility* would thus be eight months. (Assume for purposes of illustration in this example that the panel suspends eight months of the period of *Ineligibility* for *Substantial Assistance*, thus reducing the period of *Ineligibility* imposed to two years.)
4. Since the *Adverse Analytical Finding* was committed in a *Competition*, the panel would automatically *Disqualify* the result obtained in the *Competition*.
5. According to Article 10.8, all results obtained by the *Athlete* subsequent to the date of *Sample* collection until the start of the period of *Ineligibility* would also be *Disqualified* unless fairness requires otherwise.
6. The information referred to in Article 14.3.2 must be *Publicly Disclosed*, unless the *Athlete* is a *Minor*, since this is a mandatory part of each sanction (Article 10.13).

7. The *Athlete* is not allowed to participate in any capacity in a *Competition* or other sport-related activity under the authority of any *Signatory* or its affiliates during the *Athlete's* period of *Ineligibility* (Article 10.12.1). However, the *Athlete* may return to train with a team to use the facilities of a club or other member organization of a *Signatory* or its affiliates during the shorter of: (a) the last two months of the *Athlete's* period of *Ineligibility*, or (b) the last one-quarter of the period of *Ineligibility* imposed (Article 10.12.2). Thus, the *Athlete* would be allowed to return to training two months before the end of the period of *Ineligibility*

---

\* Upon the approval of WADA in exceptional circumstances, the maximum suspension of the period of *Ineligibility* for *Substantial Assistance* may be greater than three-quarters, and reporting and publication may be delayed.